

4977

620P.R

243
L-50

ԱՆԱՐԱՏ ՅԵՌՈՒԹԵԱՆ

ԵՊՐԵՍՅԵՐՈՒԹԵԱՆ

4 2001

243

L-50

Ա Դ Օ Թ Ք

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԵԱՆ

ՄՐԵՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ՎԱՐԺ

ԽԱՐԱԿԱՆ ՉԽԱՐ ԸՆՈՒՐ ՑԱԽԱՄՈՒ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԹԱՐԵԱՆ Վ. ԹՈՂԻՆԵԱՑ

Դ Մ Խ Ա Թ Ա Ռ Ե Ա Ն

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1880.

1*

Մեր քարոզեցուք զիստ-
չելիալն Քրիստո:

Ա. Կոբեճ. Ա. 25.

Հոգենոր աշխատասիրու-
թիւնը:

2010

ԿԻՒՐԱԿԵ

ՑԱՓԱՃ ՔԸՆ ԶՊԱՏԱՐԱԳ

Ի պրոցն որ կոչի Յիշնասակարան
քահանայական վարուց կղաւդեայ
Արտիսնէ՝ թարգմանեցաք ի լատին
ընապրէ զԱղօթս պատրիաստոնթէան
եւ գոհութեան սրբոյ պատարագի
վասն իրաքանչիւր առոր շաշա-
թու, յորս յաւելաք աղօթս ինչ եւ
զատեալ որոշեցաք ի միմեանց, եղեալ
զայս = գիծս ի սկզբան եւ ի կատա-
րածի:

Համառօտ մտածութիւնքն են ի
պրոց սրբոյն Ամիսսոսի լիստի:



24779-4

Ո-ՎՆ դիտա-որունեան : Տէր
բարձրեալ եւ ամենակալ, ցանկամ
արգ մեծաւ ցանկութեամբ պաշտել
զնորհութ նուիրական մարմնոյ եւ
պատուական արեան Որդւոյ քոյ, եւ
հաղորդել նմին՝ ի գովեստ եւ ի
փառաւորութիւն բարձրական մեծ-
վայելլութեան քոյ, ի յիշատակ
որբական վարուց, չարչարանաց եւ
մահու Յիսուսի Քրիստոսի փրկչին
իմոյ, ի գոհանալ ի վերայ ամե-
նայն պարգեւացն եւ երախտեաց,
զբու ինձ անարժան մեղաւորիս եւ
համօրէն Եկեղեցւոյ քում չնոր-
հեցեր, ի քաւութիւն անթիւ մե-
ղաց իմոց, եւ ի ժառանգել հեշ-
տեաւ զյաւիտենական փրկութիւն
իմ եւ Ա. Ա. մերձաւորացնեւ բնա-
կերաց իմոց, եւ ի սիոփել զայս Ա.
ննջեցեալս, ոյլովքն չնաղերձ:

Տէր իմ, արդարեւ ի քեզ միայն
մարթ է ինձ գտանել զամենայն,
որ բաւական իցե հարկանել զփա-
փաք սրտի իմայ: Զի՞նչ իսյ իմ բնաւ
յերկինս, եւ կամ զի՞նչ այլ ինչ
բաց ի քէն ինդրեցից յերկրի: Ո՞չ
ապաքէն դու ինքն ես վարձք մեր
մեծ յցժ:

ԶՂՋԱԿԱ: Աստուցանեմ քեզ,
Տէր, խոնարհութեամբ զպատա-
րագ սրտի իմայ բեկելց՝ միաւորեալ
զայն ընդ պատարագի եւ ընդ խոր-
հըրգոյ մարմնոյ եւ արեան Որդւոյ
քոյ: Ցաւ է ինձ ի բոլոր սրտէ, զի
երբեմն մեղօք իմնվք, եւ առան-
ձինն (այս նիշ եւ այն նիշ) մեղօք՝
որ քեզ ծանօթ են, ով քննիչդ
սրտից, թշնամանեալ զյյրացուցի
զքեզը Աստուած իմ, զլսաւորա-
կան բարի, որ այնչափ բարերար
դտար առ իս, եւ բազում անդամ
զոհութեան խորհրդեամբն միւս
անդամ յառաջին առողջութիւն
ածեր զիս: Զայս ես ինձէն՝ թշուա-
ռական մեղաւորս դառնադառն

ցաւովք սրտի իմայ խոստովան լի-
նիմ: Ո' ասյր, եթէ չէր իմ երբեք
զյյրացուցեալ զքեզ: Այլ դու,
Տէր, որ զոիրտ զզացեալ եւ զիս-
նարհեալ ոչ արհամարհես, ետուր
առ սէր մեր զՄիածին քո, զի զմեզ
ի ծանրատաղտուկ Ծոյ մեղացն
թափեացէ եւ յաղտեղութեանցն
լուացեալ սրբեացէ:

ՀԱՅԱԳԻ: Հաւատամ հաստա-
տութեամբ, սիրելի Յիսուս, եւ
կենդանի հաւատովք խոստովան լի-
նիմ, եթէ դու որ ես փառօք եւ կա-
րողութեամբ Հօր Աստուծոյ հաւա-
տար, եւ Աստուած եւ Մարդ Ճշմա-
րիա, արդեամնք եւ Ճշմարտու-
թեամբ կաս բովանդակ ի խորհր-
դեանս յայսմիկ: Դու որ նոյն ինքն
Ճշմարտութիւն ես, ասացեր՝ Այս
է մարմնն իմ: Հաւատամ զըր ինչ
Որդին Աստուծոյ առայ, եւ արդա-
րեւ չիք ինչ ստուգագոյն քան
զբանիս այսորիկ զՃշմարտութիւն:
Օդնեա, Տէր, անհաւատութեանս
իմում եւ յաւել յիս հաւատա:

Յոյս: Տէր իմ Յիսուս Քրիստոս,
արդարեւ հող եմ ես եւ մոխիր եւ
մարդ մեղաւոր, այլ գու Հայր ես
ողորմութեան եւ Աստուած ամե-
նայն մսիթարութեան: Ո՞ ծանեաւ
երբեք զբարերարութիւնս քո: Դու
ցանդ հրաւիրեալ կոչես առ քեզ
զվաստակեալս եւ զբեանաւորս, զի
հանգուցես զնոսա եւ զօրացուա-
ցես: Ո՞չ ապաքէն ապաէն իմ ես
գու: Եւ արդ առ ո՞ երթայց, զի գու
միայն բանս կենաց յաւիտենակա-
նաց ունիս. գու ես որ յամենայն
վիշտս եւ ի բնաւ նեղութիւնս իմ
մսիթարես զիս: Արդարեւ ազքատ
եւ տկար եմ ես. այլ գու ես փըս-
կութիւն իմ, զի ոչ է պիտոյ բժիշկ
ողոց, այլ հիւանդաց: Եթէ յան-
ցանեն քո եւեթ՝ ողջացուցանէիր
զամենեսին, եթէ հովանի առաքե-
լոյն Պետրոսի բժշկէր զհիւանդա-
ս, ապա քանիօն առաւել պարտիմ
ես մեծայցս լինել, եթէ յորժամ
ընդ յարկաւ իմով եկեալ մտանի-
ցես՝ լնակել ի նմա լրութեամբ Առ-

տուածութեան քոյ, նոյնժամայն
եղիցի ինձ ողջանալ ամենեւեին յախ-
տից եւ ի հիւանդայթեանց իմոց:

Այլ քանզի քսյովքն շնորհօք ոչ
ինչ զիտեմ զանձին իմոյ, յարուցեալ
գամ առ քեզ Հայր՝ որ ես բժիշկ եւ
աեղի ապաւինի, եւ յուսամ հաս-
տառութեամբ, եթէ հաղորդու-
թիւնս այս գործեսցէ հանապազորդ
յաւելուածս հաւատոց, յուսոյ եւ
սիրոյ իմոյ, պաշտպանեսցէ ինձ ընդ-
դէմ որոգայթից սիսերիմն թշնա-
մեաց իմոց, գարձուսցէ ի փախուստ
զպիթ խորհուրդս, խլեսցէ արմա-
տաքի զայս ինչ... մեզս եւ զմթերա-
կատարութիւնս, եւ զօրացուսցէ զիս
ի գործս որ քեզ հաճոյ իցեն, մա-
նաւանդ յայս ինչ... առաքինու-
թեան: Գարձեալ աին ունիմ եթէ
հաղորդութիւնս այս լինիցի ինձ
առ հաւատչեայ փառացն հանգեր-
ձելոց: Յոյս այս հաստատեալ է ի
ծոցի իմում, քանզի ողջորմած ես
եւ գթած եւ հաւատարիմ ի խոսա-
մունս քո:

Ուր: Մարդասէր փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, մեծ մեծ էր այն զօրութիւն սիրոյն՝ որ ձգեալ խսնարհեցցց զքեզ ի ծոցոյ երկնառոր Հօր ի հովիտո յայս արտասուաց, զգենուլ մարմին մարդկեղէն, տանել անբաւ տառապանաց եւ անհնարին թշնամանաց, եւ որ աւելացոյնն է եւ մահու իսկ խաչի վասն փրկութեան թշուառականացս:

Ո՞անզուգական սիրոց, մարթ էր քեզ զարժանիվծիու դատապարտութեան ածելի վերայ մեր, բայց գուլու համարեցար կեցուցանել զմեզ: Մեր պարտաւոր էաք, եւ գու որ անմեղդ էիր ամենեւին, տարար Ականաց եւ ցաւոց՝ զի զմեզ զպատճապարտու հանցես յազատութիւն:

Սէր քո որ առ մեզ՝ զրգեալ յօժարեցցց զքեզ առնուլ մարմին մարդկեղէն, եւ յօրժամ յաշխարհէ աստի առ Հայր երթալ հանդերէ էիր, ի կենդանի նշանակ սիրոյ քոյ՝ թողեր առ մեզ զիսրհնուրդս զայս, զի յանդ նորով իմն եւ

զարմանալի օրինակաւ բնակեսցես ընդ մեզ, զի քո փափկաւթիւնքդ են լինել ընդ որդիս մարդկան:

Ո՞ Աստուած իմ, արդարեւ արժանի ես ջերմաջերմին սիրոյ առ ի մէնջ, որ այնչափ ինչ արարեր առ զութ մեր: Սիրեցից զքեզ, Տէր, զօրութիւն իմ, ապաւէն իմ եւ փրկիչ իմ:

Ո՞ Աստուած սիրոյ: Որ կայ ի սէր, ի քեզ լինակէ: Ցանկամ ընդունել զքեզ ի խորհրդեանս յայսմիկ, զի անձկազպնո միաւորեցացը ընդ քեզ կապանօք սիրոյ: Ո՞ մեկնեսցէ զիս ի սիրոյ Քրիստոսի կենարալիթ իմց: Եցէ թէ չլինիցին առ այս բաւական, ոչ մահ, ոչ կեանք եւ ոչ այլ ինչ արարած:

Խռնարհութիւն: Օ հանրդիշնեցից մերձենալ առ քեզ, Տէր: Ոչ առպաքէն գու ինքն ես արարիչ իմ եւ փրկիչ իմ, թագաւոր երկնից եւ երկրի: Այլ զինչ ես. գոյզն որդին երկրի, հող եւ մոխրի, եւ որ վատթար եւս է յամենայն եւ յիւ-

բաքանչչեր գործո՞ քեզ անհլու եւ
անշնորհակալ: Տէր, արդարեւ չեմ
բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտանիցես. այլ յիշեա՞ զի որ ամե-
նայնի եւ բնաւի Տէրդ ես, առեր
զծաւայի կերպարանս եւ ընդելա-
կան իմն սիրով եղեր ընդ մաքսաւ-
սոս եւ ընդ մեղաւսոս, եւ ապա ու-
րեմն խոնարհեցուցեր զանձն մինչեւ
ցմահ իսկ խաչի: Խնդրեմ ի քեն,
Տէր, վասն անբաւ խոնարհութեան
կենարարիդ իմոյ, մի՞ մի անտես առ-
ներ զիս զանարժանս. այլ եկ առ իս
զթութեամբ, կամ ընկալ զիս մար-
դասիրութեամբ՝ որ գամ առ քեզ:

Հայցուած շնորհաց: Հայր յաւի-
տենական, պարզեւեա ինձ շնորհս
վասնսուրբ շարչարանաց Որդւոյքց
զի արժանապէս մատուցից զպա-
տարագս, եւ արժանի եղէց ընդու-
նել ոչ զիսորհուրդն միայն, այլ եւ
զարդիւնս նորա եւ զօրութիւն:
Կուիրեմ քեզ զիսոնարհութիւն եւ
զրբութիւն փառաւորեալ եւ միշտ
կուսին Մարեմայ, զեռանդումն եւ

զաստուածպաշտութիւն ամենայն
սրբոց, զի նոյին արժանիք լցուայեն
զթերին՝ զոր վճարել չեմ ձեռն համ-
զգածեալս տկարութեամբ:

Տէր Յիսուս, քաւեա զմեզս իմ,
եւ արա զիս բաւական ընդունել
միշտ զնուիրական խորհուրդ մար-
մնոյ եւ արեան քոյ. զի հաղորդու-
թեամբս սյուռիկ առից առատ
պարզեւս եւ զօրութիւն կալց ընդ-
դէմ որսկայթից աշխարհի, մար-
մնոյ եւ սասանայի. զի յախափց
կարեաց իմոյ (մանաւանդ յայսինչ
մեզաց) ի բաց փախեայց, ջանա-
ցեալ եռանդմամբ մեծաւ շահել
զառաքինութիւնո՞ որ կարեւորա-
գոյնք իցեն պայմանի կենաց իմոյ,
այս ինքն՝ զուր, զիսոնարհութիւն,
զհնազանդութիւն եւ զօրութիւն,
ոյլովքն հանդերձ: Գուն եղից ծա-
ռայել քեզ հաւատարմութեամբ
զամենայն աւուրս կենաց իմոյ:

Սուրբ Հոգիդ Աստուծոյ, առաքեա
առ իս զզօրութիւն շնորհաց քոյց,
զի սրբեացէ եւ յատակեացէ զիիրա

իմ, եւ յարգարեսցէ զիս արժանի
բնակութիւն Յիսուսի Տեառն իմայ,
զոր օրինակ արարեր ընդ երանելի
կոյսն Մարիամ։

Մարիամ, կոյս ամենեւին սուրբ,
որ արժանի եղեր յղանալ ի Հու-
գոյն սրբոյ եւ տանել յանարատ
արժանդի քում զԱստուած եւ
զՄարդ միանդամայն, տուր ինձ՝
աղաչեմ զքեզ, մատչել առ նա
արժանապէս ի խորհրդեանս յայս-
միկ, եւ բարձեալ բերել զնա ի
սրտի իմում, որպէս զի ընկալայց
եւ զհոգի Որդւոյ քոյ սիրելոյ։

Ամենայն սուրբք Աստուծոյ եւ
դուք սիրելի պաշտպանք իմ, աղա-
չեմ զձեզ, բարեխօս լերոք վասն
իմ առ Աստուած, արժանի լինել
ինձ ի զոհութեան խորհրդեանս
այնպէս ընդունել զնա, զի եւ տե-
սանելոյ եւս զնա երբեմն ընդ ձեզ
դէմ յանդիման արժանաւոր դը-
տայց ամէն։

ԿԻՒՐԱԿԵ

ՅԵՏ ՊԱՅԱՐԱԳԻՆ

Եքէր պատ եւ մեծաց շՏէր։ Յի-
սուո՞ց յանկալի հիւր սրտի իմայ, քա-
նիօն երանութիւն է ինձ, զի յա-
րուցեալ եկիր առ ծառայ քո աղ-
քատ եւ անարդ։ Մտեր մարդա-
սիրութեամբ ընդ անձուկ եւ դոյզն
յարկաւ իմով։ զոհութիւն եւ
փառք քեզ, Տէր, որ մտեր ի սիրտ
իմ երեւեալ ի բարձանց։

Թագաւոր խաղաղաբար, հան
մերժեա ի սրտէ եւ հոգեւոյ իմմէ
զիսուան ամբոխ բաղմութեան ընդ-
ունայն խորհրդոց, զի քեզ միայն՝
որ իշխանդ ես խաղաղութեան՝ հա-
ճոյ լինել եւ զքեզ միայն սիրել
կարող լինիցիմ։ Ի՞մ իմիք արտաքոյ
քան զքեզ եղեց ի խնդիր, ո խա-
ղաղութիւն եւ քաղցրութիւն սրտի
իմայ։

Ո՞վ աղբիւր յաւիտենական սի-
րոյ, զիա՞րդ կարացից մոռանալ-

զքեղ, որ արժանի համարեցար
յիշել զիս եւ տալ ինձ զքեղ բու-
վանդակ: Արարեր լնդ ծառայի
քում ողորմութիւն ի վեր քան
զամենայն ակնկալութիւն, եւ ա-
ռանց արժանեաց ինչ իմոց՝ ցուցեր
առ իս շնորհս եւ բարեկամութիւն:
Զինչ տաց արիտուր փոխանակ
շնորհացու:

Երանի էր ինձ եթէ կարող էի
ծառայել քեղ զամենայն առուրս
կենաց իմոց: Եցէ թէ բաւական լի-
նիցիմ մատուցանել քեղ դոնեայ
մի օր արժանի պաշտօն ծառայու-
թեան: Դու միայն ես արժանի ա-
մենայն ծառայութեան, բնաւ պա-
տուս եւ յակիտենական գովու-
թեան: Դու ես Տէր իմ, եւ ես՝
ծառայ քո աղքատ, որ յամենայն
զօրութենէ պարտիմ ծառայել
քեղ եւ ոչ երբեք լուել ի խօսու-
վանութենէ անուան քոյ: Այո, բնդ
այս կամիմ եւ սին փափաքեմ. եւ
որ ինչ պակաս իցէ, զայն դու հա-
ճեսջիր լնու:

Ճնորհեա ինձ, մարդասէր Յի-
սուս, զնորհս քո, զի ընդ իս լիցի
եւ գործեսցէ, եւ մինչեւ ի կատա-
րած կենաց իմոց յինէն մի մեկ-
նեսցի:

Տուր ինձ, հանապաղ ցանկանալ
եւ կամել զայն՝ որ քեղ համաց ի-
ցէ: Կամք քո՞ իցեն կամք իմ, եւ
կամք իմ միշտ զիշեա եր-
թիցեն եւ սերտագոյնս ընդ այնմ
միաբանեսցին: Արա զի կամելն իմ
կամ չկամել իցենոյն ընդ քայումդ,
որպէս զի չկարիցեմ այլ ինչ կա-
մել կամ չկամել, բայց զար գուն
կամփս կամ ոչ կամփս:

Տուր ինձ մեռանել ամենայն ի-
րաց աշխարհի, եւ առ սէր քո նաշ-
խամեծար ընտրել զլինելն արհա-
մարհ եւ անծանօթ յայս կեանս:
Տուր ինձ առ ոչինչ գրել զամենայն
հեշտականս, զի հանգեայց ի քեղ
եւ գտից զիսպազութիւնս սրտի ի-
մոյ: Դու ես ձշմարիս խաղաղու-
թիւն սրտից, եւ գու միայն հան-
գուցանես գոտու, արտաքս քան

ՀԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԵ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ

ՀԱՅԱ- Ա. Ս.

զքեղ ամենայն ինչ դառն թուի
ինձ եւ տաղառուկ: Ի խաղաղու-
թեան աստ ի ամին, այս ինքն՝ ի
քեղ որ ես մի միայն գլխաւոր եւ
յաւիտենական բարի, ննջեցից եւ
հանգեայց . ամէն:

Գ. ՀԱՅ-ՇԻՆ: Օ ինչ տաց քեղ
արիտուր, Տէր Յիսուս, ընդ ամե-
նայնի՝ զոր ետուր ինձ, մանաւանդ
յաւուրս յայսմիկ: Յիշեցեր զիս եւ
ջամբեցեր ինձ զմարմին քո ի կե-
րակուր, եւ զարիւն քո յըմպելի՝
յառհաւատչեայ փառացն հան-
դերձելց: Ո՞երբեք լուաւ ինչ այս-
պիսի. ո՞վ ոք ի մարդկանէ ետես
ինչ այնպիսի: Նրանի՞ թէ բանային
շըթունք իմ եւ լնոյր օրհնու-
թեամբք բերան իմ, երգել ինձ
զփառս քո, զօրհանապազ զօրհնու-
թինս քո, եւ պատմել զամենայն
սքանչելիս քո:

ՄԵծացուսցէ անձն իմ զՏէր,
գրգեալ յայնչափ եւ յայնպիսի
բարերարութեանց նորա, եւ յըն-
ձասցէ հոգի իմ յԱստուած փրկիչ

իմ. զի հայեցաւ ի խսնարհութիւն
ծառայի իւրոյ. արար ընդ իս մե-
ծամեծս հզօրն եւ լոյց զիս զքաղ-
ցեալս բարութեամբք: Օրհնեցէք
զՏէր ամենայն աղինք, գովեցէք զնա
ամենայն ժողովուրդք, զի բազում
արար ընդ իս զողորմութիւն իւր: Օրհնեցէք զնա ամենայն զօրու-
թիւնք նորա. թագաւորք երկրի
եւ ամենայն ժողովուրդք, իշխանք
եւ ամենայն գատաւորք, երիտա-
սարդք եւ կուսանք, ծերք եւ տղայք
օրհնեցէք զանուն Տեառն:

ԱՅԼ եւ լեզու իմ, քաղցր Յիսուս,
խորհեսցի զօրհանապազ յարդա-
րութիւն եւ յօրհնութիւնս քո: Ասացեն ամենայն ոսկեբք իմ. Տէր,
ո՞նման է քեղ. հզօր ես դու, Տէր,
եւ ձշմարտութիւն քո շարջ է
զքեւ. առատ ես ի պարզեւս քո
եւ սուրբ յամենայն գործս քո: Հա-
ճոյ եղիցի քեղ բարբառ իմ. եւ ես
ուրախ եղեց ի քեղ եւ հոգացայց
ի պատուիրանս քո: Կալ զաջց ձե-
ռանէ իմմէ եւ առաջնորդեա ինձ ի

կամն քո, զի երբեմն ընկալցիս զիս
ի փառու ամէն:

Մատուցանել Հօր Աստուծոյ զՈր-
տին իւր: Գթած եւ մարդասէր
Հայր, որ այնպէս սիրեցեր զիս՝
մինչեւ զՈրդիդ քո միածին ետուր
ինձ ի կերակուր եւ ի վարձս, հայ-
եաց արդ յերեսս Քրիստոսի քոյ՝
ընդ որ հաճեցար: Նուիրեալ մա-
տուցանեմ քեզ այժմիկ զՈրդի քո
սիրելի, եւ ընդ նմին զորբտ իմ՝ ընդ
ամենայնի զորպարգեւեցեր ինձայս-
օր: Կամեաց, Տեր, հաշանել այսօր
ընդ իս ի ձեռն նորա, եւ նովա-
գարձս յինէն զորամատութիւն բար-
կութեան քոյ:

Ահա միջնորդն Աստուծոյ եւ
մարդկան Յիսուս Քրիստոս, քա-
հանայապեամեր, որ եւ բարեխօս
իսկ է վասն. մեր: Զնա ինքն նուի-
րեմ քեզ՝ որ մեզս ոչ զործեաց,
այլ երարձ զմելու աշխարհի եւ զմեր
տկարութիւնս իւրովք վիրաքն
բժշկեաց: Ընկալ արդ, Հայր սուրբ,
զանարատ պատարագս զայս ի դո-

վեստ եւ ի փառս անուան քոյ, ի
գոհանալ ինձ զամենայն բարեաց՝
զոր ցուցեր տու իս, ի թողութիւն
մեղաց իմոց եւ ի հասուցումն ա-
մենայն յանցուածոց իմոց:

Նուիրել լանջն: Տէր, ես ծառայ
քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ
քոյ. Հրաժարիմ ի սատանայէ եւ
յամենայն զործոց նորա եւ ի բնաւ
պատիր փառաւորութեանց նորա:
Դու միայն Աստուծա սրտի իմոց եւ
բաժին իմ Աստուծա յաւիտեան.
դու եւեթ բաժին ժառանգու-
թեան եւ բաժակի իմոց, դու ես որ
այսրէն գարձուցանես զժառան-
գութիւն իմ յիս:

Եւ արդ դու միայն ընկալ զըռ-
վանդակ զազասութիւն իմ, առ
զյիշատակ, զմիաս եւ զկամս իմ, զոր
ինչ եւ ունիմն եւ զոր ինչ եմ. քան-
զի ամենայն տուեալ է ինձ յառա-
տութենէ քումէ, զամենայն այդրէն
առ քեզ գարձուցանեմ, եւ քոց
կամացդ առնեմ ապաստան վարել
զնոսին, զոէր քո եւեթ հանդերձ

շնորհաքդ պարզեւեա ինձ, եւ աշա
եղեց մեծ ասուն յոյժ, եւ ոչ այլ
ինչ իմիք՝ արտաքոյ քան զայն՝ եւ
զեց ի ինդիր: Ս. Եկեղակ. Լոյսլ:

Խորին բարձեւա Աստուծոյ:
Ամենակալ յաւիտենական Աստու-
ած, պահապան հոգւոյ եւ կենա-
րար աշխարհի, ընկալ մարդասի-
րութեամբ զանպիտան ծառայ քո,
որ անկեալ կայ առ ոսա մեծվայ-
ելութեան քոյ: Ընկալ, Տէր,
զթութեամբ զպատարազո զայո՝
զոր մատուցի ի պատիւ անուան
քոյ, ի փրկութիւն հաւասացելոց,
յօդուտ կենդանեաց եւ ննջեցելոց,
ի քաւութիւն մեղաց եւ թշնամա-
նաց իմոց առ քեզ: Հեռացո յինէն
զցառումն քո, տուր ինձ շնորհս,
ցոյց առ իս զմեծ զողորմութիւն քո
եւ բաց ինձ զդրունու աբքայութեան
երկնից:

Ե բաց կորզեա զիս զօրութեամբ
քով յամենայն շարեաց, եւ նե-
րեսջեր քաղցրութեամբ ամենայնի
զոր կամաւ եւ գիտութեամբ զոր-

ծեցի: Զօրացո զիս այնպէս հա-
նապազրդել յաշխարհիս յայսմիկ
ի պահպանութեան պատուիրանաց
քոյ, որպէս զի արժանի եղեց եր-
բեմն խառնել ի գունդ այնոցիկ որ
հրատիրանաւուն կոչեցեալ իցեն, եւ
այնպէս առնել քեզ հատուցումն,
Աստուծուած իմ. զի անուն քո օր-
հնեալ է, փառք եւ արքայութիւն
քո մնան յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Տէր, որ հանապազօր պատրաստ
ես անկն մատուցանել ինդրուա-
ծաց քոյ ծառայիցդ, աղաշեմ
զքեզ, մի թողուր զայնոտիկ որ ի
քեզ եղեալ իցեն զոյս իւրեանց:
Տուր հիւանդաց օգնութիւն, փրր-
կութիւն եւ միսիթարութիւն, եւ
ձանապարհորդաց խաղաղութիւն:
Ամօքեա զօդոց զանհարթութիւն
եւ օրհնեա զպատուզ երկրի: Պա-
հեա ի խաղաղութեան զաշխարհ,
զեկեղեցի, զթագաւորս, զքահա-
նայո եւ զհամօրէն ժողովուրդ քո:
Շնորհեա հանգիստ ննջեցելոց եւ

յիշեա զայնսսիկ՝ որ ետուն նուերս
եւ վասն որոց ետունն: Փրկեա զայ-
նսսիկ՝ որ ի վիշտ եւ ինեղութիւնս
իցեն, եւ մեզ պարգեւեա զնորհս
քո սուրբ:

Առջն+ առ- երանելք կոյսն: Խնդրեմ
ի քէն, անարատ եւ մեծապայծաւ
կոյս Մարիամ, մայր Տեառն մերց
Յիսուսի Քրիստոսի, դշեայ երկնից
եւ երկրի, որ զարարիչն ամենայն
արարածոց արժանի եղբ տանելի
սուրբ արգանդի քում, բարեխօս
լեր վասն իմ առ Որդիդ քո՛ զորց
զնուիրական մարմինն եւ զպատուա-
կան արիւնն արդ ընկալայ, զի
զորով իսկը ի խորհրդեանս յայսմիկ
անդիսութեամբ, անհոգութեամբ,
առանց պատշաճն մեծարանաց եւ
ըստ գիպաց իմն զանց արարի,
ընդունելի խնդրուածօք քովիք
ներեցէ ինձ, որ կենդանի է եւ
թագաւորէ յաւիտեանս ժամանա-
կաց. ամէն:

Պատառան+ առ Սուրբ: Ամենայն
սուրբք Աստուծոյ, որ մինչ գեռ ի

մարմին շրջէիք, այնպէս ծառայե-
ցէք Աստուծոյ, զի յետոյ յանվախ-
ճան ժամանակս ընդ նմա թագաւ-
որելոյ արժանի լինիցիք, աղաչեմ
զձեզ, հասէք ինձ ի թիկունս օդ-
նականութեան ի ձեռն խնդրուա-
ծաց եւ արժանեաց ձերոց, զի հայն
այն երկնից եւ թոշակն աստուա-
ծելէն՝ զոր այժմ ընկալայ, տայէ
ինձ զօրութիւն եւ պաշտպանեացէ
ինձ ընդգէմ ամենայն տկարու-
թեանց, վտանգից եւ որոպայթից
հոգւոյ, զի զօրացեալ կերակրովն
այնուիկ՝ շրջեցայց աներկիւլ ընդ
աւագակուտ անապատ աշխարհիս,
մինչեւ երթեալ հասից ի լեառն
Տեառն, ուր ի քաղզը վայելս երե-
սաց նորա ուրախ եղէց հանապաղ,
եւ ընդ ձեզ զովեցից զնա ընդ ա-
մենայն յաւիտեանս. ամէն:

Բառ+ առ Քիւրոս: Նոդի Քրիս-
տոսի սրբեա զիս. մարմին Քրիստո-
սի փրկեա զիս. արիւն Քրիստոսի
արբեցո զիս. ջուր կողին Քրիստոսի
լուս զիս. չարչարանք Քրիստոսի

զօրացո զիս: Մարդասէր Յիսուս,
լուր ինձ. ի վէրս քո ծածկեա զիս,
եւ մի թողուր ինձ մեկնել ի քէն:
Պաշտպանեա ինձ ի չարարուեստ
թշնամւոյ իմմէ. ի ժամու մահուն
իմոյ կոչեա զիս, թպլ առուր ինձ
գալ առ քեզ, զի օրհնեցից գքեզ
ընդ սուրբու քո յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Խնդրեմ ի քէն խնարհու-
թեամբ, քաջցր եւ բարի Յիսուս,
զի անմահական պատարագս այս՝
շնորհս կալցի քեզ վասն իմ եւ ընդ
իմ, եւ հաշտեցուոցէ զիս ընդ
քեզ, այդրէն զիս առ քեզ գար-
ձուոցէ, շնորհեացէ ինձ անարժան
մեղաւորիսներել թողութեան, եւ
ժամանեցուոցէ ի կեանս յաւիտե-
նականս. եղիցի, եղիցի:

— Աղջնիւ Լեհաբար ներողութեան,
ըր առել պարուեածոցի իուլութեան:

Քաջցր եւ մարդասէր Յիսուս, ի
ծունր իջեալ առաջի քո՝ պաղատիմ
եռանդմամբ մեծաւ, զի հաճեցիս

դրոշմել ի սրափ իմում զկենդանի
հաւատս, զյոյս եւ զուկը, զճշմարիս
ցաւ ի վերսոյ մեղաց իմոց եւ զհառ-
տատուն կամս ուղղութեան վարուց
իմոց, — մինչ զեռ ես ջերմաջերմ
րդիւք եւ ներքին զղջմամբ զմասաւ
ածեմ զինոգ վերս քո եւ յիշեմ
զրան մարդարիին Դաւթի՝ զոր ա-
սաց ի գիմաց քոց՝ թէ “Ծակեցին
զծեռս իմ եւ զսաս իմ եւ թուեցին
զամենայն սոկերս իմ,,,: Սուշ. ՏԱ.

17, 18: ==

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՊԱՏԱՐԱԳ

Կոչումն Հոդոյն սրբոյ։
 Եկ սուրբ Հոգի ստեղծող էից,
 Յայց ել մտաց քոց ծառայից,
 Եւ վերնական շնորհօք քու լից,
 Զքու ստեղծեալ սիրա բոլորից։
 Միհիթարիչդ ամենայնի,
 Եւ բարձրելցն պարզեւ բարի,
 Ազրիւր կենաց հուր կենդանի,
 Սէր եւ օծումն իմանալի։
 Դուեօթնարփեան շնորհէ վերին,
 Մատն հայրական աջոյ ձեռին,
 Դու աւետիք Հօր բարձրելց,
 Որ տաս բարբառս բերանոյ։
 Վառեա զլոյս ի զգայարանս,
 Հեղ զոփրոյ քու զհոսանս,
 Զտկարութիւն մարմնոյ մերոյ,
 Միշտ զօրութեամբ քու ամրացու։
 Ե բաց վանեա զթշնամութիւն,
 Եւ պարզեւեա զիալզալութիւն,
 Զի քեւ յաւէտ առաջնորդեալ,
 Առ ի չարեաց լիցուք զերծեալ։

Տուր ձանաշել մեղ քեւ զշայր,
 Եւ զՄիածինն իւր հաւասար,
 Եւ յերկոցունց զշողիդ բխեալ,
 Ցամենայն ժամ սկըտ հաւասալ։
 Փառք եւ պատիւ Հօր Աստուծոյ,
 Եւ Միածնի յարուցելոյ,
 Հոգւոյն սրբոյ միփթարչի,
 Այժմ եւ յաւէտ անլուելի. ամէն։
 Առաքես զշողի քու եւ ստանաս
 Պնոսա։ Եւ նորոգես զերեսս երկրի։
 Տէր Աստուած, որ զփրոս հաւա-
 տացելոց լուսաւորութեամբ Հո-
 գւոյն սրբոյ ուսուցեր, տուր մեղ նո-
 վին Հոգւով զավիզան ճանաշել եւ
 ի նորա միփթարութեանն վայելել
 միշտ, Քրիստոսիւ Տերամբ մերով.
 ամէն։

ԶՊԱՆ-Թ։ Տէր Աստուած իմ,
 Քաւեա զիս զմեղաւորս։ Ցաւ է ինձ
 զի քեղ միայն մեղայ, եւ յանկամ
 ուղղել զանցանս իմ։ Բարձ յի-
 նէն, աղաւեմ զքեղ, զամենայն ան-
 օրէնսութիւնս իմ, զի սրբեալ ի
 հոգի եւ ի մարմին՝ կարաղ եղէց
 մտանել ի սրբութիւնն սրբոց։

Հաստատութեամբ: **Տէր** Յիսուս Քրիստոս,
որ ես քահանայ յաւիտենից, գու
քեզէն ասացեր. Մարմին իմ ճըշ-
մարիտ կերակոր է, եւ արիւն իմ
ճշմարիտ ըմպելի է: Հաւասամ
հաստատուն հաւատավք եթէ գու
ես Քրիստոս Որդի Աստուծոյ կեն-
դանոյ, որ եկիր յաշխարհուն եւ ի
խորհրդեանս յայտնիկ կաս մեղ
յանդիման: **Տէր**, յաւել յիս հաւ-
ատու:

Յօյս: Ի քեզ միայն, քաղցր եւ
բարի Յիսուս, գնեմ զամենայն յցո
իմ. զի գու ես փրկութիւն եւ զօ-
րութիւն իմ, գու տեղի ապաւինի
եւ հաստատութիւն իմ, գու աղ-
բիւր ամենայն բարութեանց: Ոզոր-
մեա ինձ եւ փրկեա զիս, զի ոչ եր-
բեք թողուս ի ձեռանէ զայնոսիկ՝
որք յուսացեալ իցեն ի քեզ:

Սէր: Ոիրելի Յիսուս, արդարեւ
իսէր մեծ վառեցաւ սիրոքո, յոր-
ժամ յաշխարհէ աստի առ Հայր
քո փոխել հանդերձեալ էիր, զի
յայնժամ մանաւանդ առաւել յոււ-

ցեր մեղ զիրոյ քո զհանգէս, եւ
պատրաստ արարեր մեղ սեղան՝ յո-
րում ամենայն փափկութիւնք եր-
կնաւորք եւ համօրէն ճաշակք
քաղցրութեան զեղեալ գաանին:
Սիրեմ զքեզ, **Տէր**, վասն անբաւ
մարդասիրութեան քոյ, եւ զի մի
երբեք ի սիրելոյ զքեզ դադարե-
ցից, բորբոքեա յիս զսէր քո ոուրբ,
զի ցանդ սիրեցից զքեզ, որ կերա-
կուրդ ես եւ մնունդ սիրոյ:

Փակութել: Որպէս փափաքէ եղ-
ջերու յաղբերս ջնուրց, այնպէս փա-
փաքէ սիրտ իմ առ քեզ, Յիսուս,
որ ես **Տէր** իմ եւ փրկիչ: Տար ինձ
զքեզ, եւ այն շատ է ինձ, զի ա-
ռանց քո լինել ոչ կարեմ եւ ա-
ռանց այցելութեան քոյ ոչ զօրեմ
մնալ կենդանի:

Խոնարհութեան: Անսահման Աս-
տուած, ահաւոր, ամենակալ եւ
անհաս յարարած մատաց, ով ոք ես
գու, եւ ո՞ոք եմ ես, զի արժանի
համարիս գալ առ իս, կոչել զիս ի
ճաշ. քո եւ առնել առ իս օթեւ-

անս։ Տէր, չեմ բաւական՝ եթէ լնդ
յարկաւ իմով մտանիցես, այլ ասա
բանիւ միայն, եւ բժշկեսցի անձն
իմ։

Ո-ղիւ դիտաւորունիւն։ Տէր Յի-
սուս Քրիստոս, յանկամ մատուցա-
նել զպատարագո Աստծոյ Հօր,
միաւորեալ զիսորհուրդս մտաց իմոց
ընդ աստուածեղէն դիտաւորու-
թիւնն, որովք դու ինքն ի յետին
ընթրիսն եւ ի վերայ սեղանոյ խա-
չի ընծայեցեր նմա զնուիրական զե-
նումն մարմնոյ եւ արեան քոյ։ Ի
քեզ եւ քեւ հաճեսցի նա, մար-
դասէր Յիսուս, հաշտել ընդ մեղ
ընդ ամենայն յաւիտեանս։

Խնդրուած վասն այլոց։ Աղաչեմ
զքեզ, Տէր իմ Յիսուս Քրիստոս,
ունկն դիր պաղատանաց իմոց՝ զըս
մատուցանեմ քեզ վասն ամենե-
ցուն, զորս իւիք իւիք պարտապան
եմ յիշել։ Յիշեա զաղգականս,
զմանըիմն եւ զբարեկամն իմ, եւ
զայնոսիկ որը յանձն եղեն յաղթս
իմ եռանդմամբ աստուածպաշտու-

թեան եւ տրովք ողորմութեան։
Յիշեա եւ զայնոսիկ՝ որք յաղօթս
կան վասն իմ, եւ որոց ես ինձէն
պարտական եմ. յիշեոջիր զշամօ-
րէն ժողովուրդք քրիստոնէից, զամե-
նայն եպիսկոպոսունս հռովմէական
սրբոց Եկեղեցւոյ, զքահանայս եւ
զուխտի մանկունս, եւ տուր նոցա
զօրութիւն հանապազորդել մին-
չեւ ցվախճան կենաց իւրեանց ի
սուրբ ծառայութեան քումիսնար-
հութեամբ, հաւատարմութեամբ
եւ աստուածպաշտ մոօք. եւ եւս
աղաչեմ զքեզ՝ ողորմեա ամենայն
հաւատացելոց՝ կենդանեաց եւ
ննջեցելոց, եւ որք ի վիշտս ինչ եւ
ի նեղութիւնս գտանիցին։

Պաշտամնուն։ Տէր Յիսուս Քրիս-
տոս, մատչեմ ես անարդ մեղաւորս
երկիւղիւ եւ պատկառ անօք ի սե-
ղան մեծահաց կոչնոց քոյ, ոչ ե-
թէ զի վատահ ինչ եմ յարժանիս
իմ, — քանզի գործք չարութեան
իմոց յետո ընկըկեն զիս, — այլ զի
յուսամ յողորմութիւն եւ ի բա-

րութիւն .քո: Զե սդի եւ մարմին
իմ պիղծ եւ աղտեղի են մեղօք, եւ
չունիմ ինչ փոյթ յանձին զմաց
եւ զեղուէ իմմէ, այլ թողում զնո-
սին արձակերասանակո: Ով մար-
դասէր Տէր եւ անբաւ մեծվայել-
չութիւն, ես հէքս եւ թշուառա-
կան որ ընդ մեղացն բեռամբ ընկ-
ճեալ կամ, ընթանամ առ աղբիւրդ
ողորմութեան, փութամ գալ առ
քեզ բժշկել յիմոց հիւանդու-
թեանց, գամ մասնել ընդ պաշտ-
պանութեամբ քավ, եւ զոր ոչ
հանդուրժեմ ունել ինձ դատաւոր,
զքեզ փրկիչ ինձ ունել ցան-
կանամ: Քեզ յայտնեմ, Տէր, զիտ-
ցուածս վիրաց իմոց, եւ մերկանամ
առաջի քո զամօթ եւ զպատկա-
ռութիւն իմ: Ճանաչեմ այս, ճա-
նաչեմ զմեղաց իմոց զիտուն բազ-
մութիւն եւ զմեծութիւն, ոյր
վասն աչ եւ դողումն անկանի ի
վերաց իմ: Ճաստատեմ զըսյս իմ
յողորմութիւն .քո, որոյ չիք չափ
եւ սահման: Տէր իմ Յիսուս

ՑԱՌԱՋ ՔԱՆ ԶՊԾՏՄՐԱԳ 35

Քրիստոս, թագաւոր յաւիտենից,
Աստուած եւ մարդ, որ յանձն ա-
ռեր զմահ խաչի վասն մեր մարդ-
կան, հայեաց մի անդամ առ իս
աչօք թթութեան քոյ: Ունին դիր
ինձ որ յաւսամն ի քեզ ողորմեա
ինձ որ լի եմ թշուառութեամբ եւ
մեղօք, քանզի դու Տէր աղբիւր ես
զթութեանց՝ որ ի բխելց երբեք
ոչ պակասես: Ողջոյն ընդ քեզ
կենդանարար պատարազ, որ վասն
իմ եւ վասն բովանդակ մարդկեղէն
աղդի փրկութեան ի խաչին մա-
տուցար: Ողջոյն քեզ, պատուական
եւ մեծագին արիւն, որ ի վիրաց
խաչելեալ Տէտան իմոց Յիսուսի
Քրիստոսի հեղար եւ զմեղս ամե-
նայն աշխարհի լուացեալ որբեցեր:
Յիշեա, Տէր, զարարածս քո եւ
զգործս ձեռաց քոյ, զրս պատուա-
կան արեամբ քով գնեցեր: Յաւ է
ինձ յոյժ, Աստուած իմ, զի մեղայ
քեզ, եւ ցանկամ ի բոլոր սրտէ
ուղղել զյանցուածս իմ: Բարձ,
բարձ յինէն, քաղցր եւ մարդասէր

Տէր, զամենային անօրէնութիւնս եւ
զմելով իմ, զի սրբեալ ամենեւին ի
հոգի եւ ի մարմին, դտայց արժաւ-
նի ճաշակելոյ զՍուրբն որբոց: Շնոր-
հեա ինձ, Տէր, զի սուրբ խորհուրդ
մարմինյ եւ արեան քոյ, զօր ես
անարժանս ընդունել փափաքիմ,
լիցի ի ներել թողութիւն մեղաց
իմոց, ի քառութիւն յանցանաց, ի
մերժումն վատթար խորհրդոց, ի
վերստին նորոգութիւն բարի յօ-
ժարութեանց, եւ գործոց որ քեզ
հաճոյ իցեն՝ յաջողիչ զօրութիւն,
եւ յամուր պաշտպանութիւն հո-
գուց եւ մարմնոյիմ ի գարանակա-
լութեանց սիերիմ թշնամեաց ի-
մոց. եղիցի եւ եղիցի: Ա. Ա. Ք. Հ. Ա. Հ.

Աշքիւ առ երանելի կոյսն: Գեւ,
սուրբ կոյս Մարիամ, լի շնորհօք եւ
մայր կենաց եւ փրկութեան, հա-
մարձակ է մեղ մատշել առ Որդիկ
քո, եւ քեւ ընկալեալ լինիմք ի
նմանէ՝ որ ի քո ձեռն սուաւ մեղ
փրկիչ եւ կենարաբ: Քո լութիւնդ
արդարացուացէ զյանցանս ապակա-

նութիւն մերս, եւ խոնարհու-
թիւն քո՝ ընդ որ հաճեցաւ Աս-
տուած, ընկալի զմոզութիւնընդ-
ունայնութեան եւ հպարտութեան
մերս: Քո անշափ սէրդ ծածկեացէ
զրազմութիւն մեղաց մերս, եւ ա-
ռատ պաղպէլութիւն քո զօրա-
ցուոցէ զմեղ տալ պտուղս արժանի
վարձուց յաւիտենականաց: Ո՛վ
դշնոյ մեր, ո միջնորդ մեր, բարե-
խօն մեր, ընդ Որդւոց քում զմեղ
հաշտեցո, Որդւոց քում զմեղ յանձն
արա, եւ կացո զմեղ յանդիման
Որդւոց քոյ սիրելուոյ: Արա, ով ե-
րանելի Մայր, վան շնորհացն զօր
ցանդ առաջի բարձրելոյն գտեր,
վասն առաւ ելութեանն՝ որում ար-
ժանի գտար, եւ յաղակս ողորմու-
թեանն՝ որով յլացեալ ծնար
զՄիածինն Հօր, զի զօր օրինակ
միջնորդութեամբ քով առ յանձն
լինել հաղորդ տկարութեան եւ
թշնամութեան մերում, նոյնպէս
եւ բարեխօսութեամբ քով հա-
ճեցոց՝ առնել զմեղ կցորդո փա-

ուացն եւ երանութեան իւրում՝
Յիսուս Քրիստոս՝ Որդին քո եւ Տէր
մեր, որ է ի վերայ ամենայնի օր-
չնեալ ի յաւիտեանս. ամէն։ Ա-
Բէ՛ռաբրուս։

Առ սուրբքու։ Ո՛վ համօրէն սուրբքը
Աստուծոյ, քաղաքացիք երկնաւորն
հայրենեաց, լըրուք ամրութիւն
տկարութեան իմում, հասատաւուն
զործեսջիք զհաւասս եւ զլոյս իմ,
եւ արծարծեցէք յիս զհուր սիրոյ
ձերց։ Զգեցուցէք ինձ հանգերձու
հարսանեաց եւ զարդարեսջիք զորի
իմ երկնաւորն պարզեւօք, զի ա-
սանց ամօթոյ բաւական եղէց զր-
տանել մուտ ի տեղին սրբութեանց
եւ ի սրահ երկնաւորն կոչնոց, եւ
կալ ազատազէմ առաջի աշաց առ-
տօւածեղէն մեծվայելութեանն.
ամէն։

ԵՐԿՈՒՇԱԲՏԻ

ՅԵՏ ՊԵՏԱՐԱԳԻ

Ի՞շխանութեալ Սէր, արդ իսկ
ստացեալ ունիմ զքեզ՝ որ ունիսդ
զամենայն ինչ եւ ամենայնի բաւա-
կան ես։ Ո՛վ Աստուծ իմ եւ ա-
մենայն ինչ, դու որոշեա զսիրտ իմ
յամենայնէ, որ արտաքրոյ քան
զքեզ իցէ, յորս չիք գտանել,
բայց ունայնութիւն եւ վիշտո ու-
զւոց։ Երանի էր ինձ եթէ ի քեզ
հասատեալ ունեի զսիրտ իմ, եւ
ի քեզ լինէր հանգիստ իմ, յո-
րում եւեթ պարտ է թէ գտանիցի
զանձ իմ, անփոփոխական ճշմար-
տութիւն, երանութիւն եւ ցնծա-
լից յաւիտենականութիւն։

Քաղցր Յիսուս, առւր մտաց իմոց
լինել ինելամուտ քաղցրութեան
մօտաւորութեան քոյ, եւ ձաշակել
եթէ քանի մարգասէր Տէր ես, զի
սիրով քով զմայլեալ ամենեւին, ոչ
այլ ինչ խնդրիցեմ բաց ի քէն ու-

բավ ուրախ լինիցիմ, զի դու ես ու-
րախութիւն սրտի իմայ եւ բաժին
իմ Աստուած յաւիտեան:

Դու բժիշկ հոգւոց մերոց, որ
վիրօք քովք զհիւանդութիւնս մեր
բժշկեցեր: Ես իսկ եմ հիւանդն
այն տառապեալ՝ զոր իջեր յերկնից
բժշկել: Ազէ, բժշկեա զանձն իմ՝
որ մեղաւ քեզ:

Դու ես հովիւ մեր՝ որ եգիր
զանձն քո ի վերայ ոչխարաց քոց:
Այս, ես այն ոչխար եմ՝ որ մոլորե-
ցոյ, եւ զոր դու արժանի առնես
սնուցանել մարմնով եւ արեամբ
քով. բարձ բարձ զիս ողսրմու-
թեամբ ի վերայ ուսոց քոց: Զի՞նչ
զլանայցես ինձ՝ որում զանձն քո
զլսովին ետուր: Հովուեսօջեր զիս
եւ դիր ի վայրի դալարւոջ, եւ ինձ
ինչ ոչ պակասեացէ. առաջնորդեա
ինձ յարօսա կենացն յաւիտենից:

Լիյս ճշմարիտ՝ որ եկիր յաշխարհս
լուսաւոր առնել զամենայն մարդ,
եկ լցո տուր աշաց իմաց, զի մի
երբեք ննջեցից ի մահ:

Հուր աստուածեղէն՝ որ ցանդ
վառեալ բորբոքիս եւ ոչ երբեք
նուազիս, ահա կամ աւասիկ առաջի
քո ցրտացեալ ամենեւին ի հոգի.
վառեա, փրկիչ իմ սիրելի, զերիկա-
մունս եւ զսիրս իմ, զի սպառեալ
ծախեային ի սէր քո: Հուր եկիր
արկանել յերկիր, եւ զի՞նչ կամիս
եթէ արդէն իսկ բորբոքէր:

Թագաւոր երկնից եւ երկրի, որ
մեծ գ ես ողսրմութեամբ, յարու-
ցեալ գամ առ քեզ աղքատս եւ
անանկ. դու գիտես թէ իմ իմիք
առաւել կարօտ իցեմ, եւ դու մի-
այն ձեռնհաս ես զօրացուցանել
եւ մեծացուցանել զիս: Տէր, օգնեա
ինձ եւ ի գանձուց քոց ողսրմու-
թեան ձեռն տուր ոգւց իմում, զի
եմ անոք եւ անօգնական:

Տէր Աստուած իմ, ահաւասիկ
եմ ծառայ քո. տուր ինձ միտս եւ
զարթո յիս ցանկութիւն մեծ ծա-
նաչելց զիամս քո, զի ըստ գիտու-
թեանս իմում նոյնպէ եւ գործել
ջանացայ:

Դու գառն Աստուծոյ, գառն
անարատ՝ որ զմելո աշխարհի բար-
ձեր. բարձ յինէն զամենայն՝ որ
քեզ չախորդական իցէ եւ ինձ
մեղանշական, եւ շնորհեա ինձզայն՝
որ բատ քոյ հաճոյից է եւ ինձ յօ-
գուա: Դու սէր եւ բովանդակ յըն-
ծութիւն սրտի իմոյ: Դու ինքն
Աստուծած իմ եւ ամենայն ինչ:
Դու ես բաժին ժառանդութեան
եւ բաժակի իմոյ: Դու ես որ այս-
քէն գարձուցանես զժառանդու-
թիւն իմ յիս:

Տէր իմ եւ դլխաւորական բա-
րութիւն, ինդրեմ ի քէն՝ ձգեա
առ քեզ զմիսս եւ զկամս իմ զօ-
րութեամբ չերմաջերմ եւ քաղցր
սիրոյ քոյ. զի գութ՝ սիրոյ քոյ,
Աստուծած իմ եւ ամենայն ինչ,
տացէ ինձ մեռանել աշխարհի, որ
առ սէր իմ յանձն առեր զմոհ
խաչի մեռանել. ամէն:

Գոհունիւն եւ ընծայել զանցն:
Ո՞ պէ եմ ես, ո՞վ անսահման
բարութիւն, զի կամեցար կալ ինձ

առաջի սրբոյ սեղանոյ քոյ եւ մա-
սուցանել քեզ զպատարան սուրբ
եւ զգոհ անարատ: Զիսարդ զափ
զշնորհս զայս առաջի աշայ քոյ,
մինչ զի հաճեցար զմեծութիւն ո-
զորմութեան քոյ առ իս ցուցանել:
Նկայք, ամենայն հրեշտակը եւ
սուրբը Աստուծոյ, անսասօջիքը աղա-
շեմ վայրիկ մի, եւ պատմեցից ձեզ
զմեծամեծս Աստուծոյ՝ զոր արար
ընդ հոգի իմ: Զիս՝ որ անարգա-
գոյն էի ի տան իմում եւ ընդ եր-
կիր քարշէի եւ զայի ընդ աղը,
կալեալ զնեռանէ իմմէ կանգնեաց
եւ կարգեաց ընդ իշխանս ժողովըր-
դեան իւրոյ. զի զամենայն աւուրս
կենաց իմոյ հաց եւ զինի ի սեղա-
նոյ նորա կերայց եւ արբից: Եւ
արդ զինչ գարձ փոխարինի արարից
քեզ, քաղցր Յիսուս եւ կենարար
աշխարհի. զոհ շնորհ կալաց քեզ
վասն շնորհայն՝ զոր ետուրն ցիս,
եւ կամ որպիսի հատուցումն հա-
տուցից քեզ: Զքէն ասէ հարսնն
Եկեղեցւոյ զբանս Երգոյ երգոցն

“Եթէ տացէ մարդ զամենայն զկեանս իւր ընդ սիրոյ, անգոսնելով անգոսնեսցեն զնա,,,: (Երժ Երժոյ Ը. 7:) Զամենայն որ ինչ է քո, զայն առատամիտ մտօք ետուր ինձ, զմարմին, զարիւն, զհոգի եւ զաւատուածութիւն քո: Եւ միթէ մեծ ինչ իցէ եթէ տաց ես զամենայն զկեանս իմ, զմարմին, զհոգի եւ զաղատութիւն իմ, հանգերձ այնու ամենայնիւ՝ զոր այժմ ստացեալ ունիմ կամ ունել կարիցեմ. այս, այս ամենայն իբրեւ ոչնչ է առ անշափ եւ անկշու պարզեւոք քովք: Այնչափ ինչ քեզ պարտական եմ, որչափ գու ինքն արժես՝ որ ես անսահման բնութիւն. յայն սակո պարտիքս այս՝ գեր ի վերոյ են քան զկար զօրութեան իմոյ: Բայց սակայն ներեա համարձակութեանս իմում, մի արհամարհեր զպարգեւո զայս գուզնաքեայ՝ զոր միամտութեամբ սրտի ընծայեմ քեզ, ասելով ընդ հարսին. “Սիրելին իմ ինձ, եւ ես նմա,,,: Արդ զոր օրինակ

ետուր գու զքեզ բովանդակ ի կերակուր հօգւոյ իմոյ, այնպէս եւ ես զանձն իմ ողջոն նուիրեմ ի ծառայութիւն քո: Տամ ամեւնեւին ի ձեռս քո զոր ինչ ունիմն եւ զոր ինչ եմն եւ զոր կարեմն վճարել. զի բնաւին զիս քո արաւցես, եւ մի թողացուցանիցես երբեք եւ սուսերի միս չարի իշխել ի վերայ իմ:

ԽՆԴՐՈՒԹՎՆԻ ՎԼՈՒ ԱՆՀԻՆ: Շ նորհ հետ ինձ, աղաչեմ զքեզ, ամենակալ եւ մարդասուր Տէր, զհամցոյ քո կամել յամենայն սրտե, իմաստութեամբ եւանել ի խնդիր, ճշմարտութեամբ ճանաչել եւ ճշգրիտ:

Դու կարգեալ յարդարեա ըզշ կեանս իմ ի գովեստ եւ ի փառս անուան քոյ: Տուր ինձ զիսել, կարել եւ կամել հաստատութեամբ զայն՝ զոր ինդրես յինէն զի արարից. այլ տուր զի եւ յարդիւնս եւս ածից՝ որպէս պարտն իցէ եւ յօգտւա փրկութեան ոգւոյ իմոյ:

Խնդրեմիքէն, Տէր, արա զճաւ-
հնապարհ իմ որ առ քեզ՝ անկաս-
կած, ուղիղ եւ կատարեալ . մի ի
յաջողութիւնս բարձրանալ կամ ի
չաջողութիւնս ի կոր կործանել, այլ
յամենայնի չափու ունել զանձնիմ:

Ի յաջողութիւնս գոհացող եղէց
քեզ, եւ ի չաջողութիւնս համ-
բերող: Որպէս զի ոչ այլ ինչ բաւա-
կան լիցի ուրախ առնել զսիրտ իմ
կամ տրտմեցուցանել, բայց որ առ
քեզն ուղղէ կամ իքէն ի բաց դար-
ձուցանէ: Ոչ ումեք համց լինել
ցանկացայց կամ թէ երկեայց չլի-
նել համց, բայց քեզ միայնում:

Արա զի զամենայն ի սէր քո
գործեցից, եւ առ անօդուտս եւ
առ անարդս կալայց զամենայն, որ
ի պաշտօն քո ոչ հայիցի:

Խոտան թուեսցին յաշս իմ
վասն քո ամենայն անցաւողք, եւ
սիրելի լիցի ինձ ամենայն՝ որ ինչ
քո իցէ, իսկ գու Աստուած իմ՝ ի
վեր քան զբնաւ: Ուրախ արասցէ
զիս ամենայն աշխատութիւն որ ի

քո սակս իցէ, եւ տաղտուկ՝ ամե-
նայն հանգիստ որ ոչ իցէ ի քեզ:

Տուր ինձ, ողբամած Տէր, յաճա-
խագոյնս եռանդմամբ ուղղել զսիրտ
իմ առ քեզ, եւ վասն յանցուածոյ
իմոց առնել հատուցումն զջմամբ
եւ ուղղութեան հաստատուն կա-
մօք:

Արա զիս, Տէր Աստուած իմ, իսո-
նարհ առանց կեղծաւորութեան,
ուրախամիտ առանց լիտութեան,
տրտում առանց վչատելոյ, ծանր
առանց դանդաղանաց, շայս առանց
թեթեւութեան, միամիտ առանց
նենգութեան, երկիւղած առանց
անյուսութեան, յուսալ ի քեզ
առանց յանձն ապաստան լինելոյ,
զգաստ առանց ապականութեան,
հնազանդ առանց հակառակու-
թեան, համբերող առանց տրտն-
ջելոյ, խրատել զընկերս առանց
ցաման, եւ առանց մեծամտելոյ
շնել զնոսա բանիւ եւ օրինակաւ:

Տուր ինձ, Յիսուս իմ, սիրտ
արթուն՝ զոր ոչ մի ինչ ի հետա-

քրքին խորհրդոց ի քէն անջաւ-
տել կարասցէ. յարդարեա զսիրտ
իմ անշարժ՝ զոր ոչինչ սէր անար-
ժան յինքն յանկուցանել բաւա-
կան լիցի. չնորհեա ինձ սիրտ ան-
վկանդ, զի մի կարասցեն նեղու-
թիւնք պարտասեցուցանել. արա
զսիրտ իմ աղատ՝ զի մի երեք
բուռն ցանկութիւնք զիետ ձգես-
ցեն. պարզեւեա ինձ սիրտ ուղիղ՝
զոր ոչինչ դիտաւորութիւն վատ-
թար իշխեսցէ ապականել եւ ի
քէն խոտորեցուցանել:

Չնորհեա ինձ, գթած Տէր, միտո
ի ճանաչել զքեզ, փոյթ ի խնդրել
զքեզ եւ իմաստութիւնի գտանել
զքեզ, ուղղութիւն վարուց ըստ
քոց հաճոյից, հանապազրդու-
թիւն զի ակն կալայց քեզ լի սի-
րով եւ յուսով, եւ վստահութիւն
ի փարել զքեւ հաւատարմու-
թեամբ: Տուր, Տէր, զի ոդւով ա-
պաշխարութեան գիրկու արկից վը-
տաց եւ պատժոց՝ զոր ածես ի վե-
րայ իմ. տուր ի կենդանութեան

վայելել յերախախօս քո չնորհօք,
եւ յերկնաւոր հայրենիս անդ՝
մատանել յուրախութիւնս քո փա-
ռօք: Որ ընդ Հօր եւ ընդ սրբոյ
Հոգւոյն կենդանի ես եւ թագաւո-
րես յաւիտեանս յաւիտենից. ա-
մէն: Ս. Թաղ. Ավո-ինացէ:

Խնդրուած վայլս: Տէր, որ
պատրաստ ես միշտունին մատուցա-
նել խնդրուած աց քոց ծառայիցդ,
աղաւչեմզքեզ, մի թողուր զնոսս որ
ի քեզ եգեալ իցեն զյոյս իւրեանց:
Տուր հիւանդաց օգնութիւն, բժըշ-
կութիւն եւ միմիթարութիւն, ճա-
նապարհորդաց խաղաղութիւն: Ա-
մոքեա զօդոց անհարթութիւն, եւ
օրհնեա զպուղս երկրի: Պահեա
ի խաղաղութեան զաշխարհ, զեկե-
ղեցիս, զթագաւորս, զքահանայս
եւ զհամօրէն ժողովուրդ. քո: Շնոր-
հեաննշեցելոց հանդիսատ, եւ յիշեա
զայնոսիկ՝ որք նուիրեցին նուերս եւ
վասն որոց նուիրեցինն: Տուր աղա-
տութիւն նեղելոց եւ վշտացելոց,
եւ մեզ պարզեւեա չնորհու:

Ունին դիր, մարդասէր Տէր,
խնդրուածաց՝ զոր մատուցանիցեն
քեղ վասն մեր դշնոյն ամենեցուն
սուրբ Մայրն Աստուծոյ Մարիամ,
եւ հրեշտակապետք Միքայէլ, Գաւ-
րիկէլ եւ Ռափայէլ, եւ Համօրէն
գունդը երկնաւորաց: Ազօթիւք
նահապետաց, մարդարէից, Հայ-
րապետաց, առաքելց, մարտիրու-
սաց, արդարոց եւ իմաստուն կու-
սանաց՝ եկեսոյէ ի վերայ մեր օր-
հնութիւննոցա եւ սէր, նոյն օգ-
նականութիւն եւ Համբէրութիւն:
Եղիցի Համապազ ընդ մեզ յամե-
նայն դործո մեր օրհնութիւն եւ
շնորհք Տեառն մերս եւ փրկչին
Յիսուսի Քրիստոսի. ամէն:

= Առ սուրբ Կոյս Մարիամ: Յի-
շեա, ով Կոյս բազմագութ, եթէ ի
յաւիտենից ոք ոչ լսաւ, եթէ ի
քո պաշտպանութիւն ոք ապաս-
տան եղեւ եւ զքո նպաստաւորու-
թիւն խնդրեաց եւ Հայցեաց զքո
օդնականութիւնդ, եւ լքեալ թո-
ղաւ: Արդ ես այսպիսի յուսով

Համարձակեալ, առ քեզ ընթա-
ցեալ ապաւինիմ, ով Կոյս կուսա-
նաց եւ Մայր մեր, առ քեզ գամ,
առաջի քո մեղաւորս հեծութեամբ
կամ: Մի անտես առներ զաղաչանս
իմ, Մայր Բանին Աստուծոյ, այլ
լուր հաշտութեամբ եւ ունին դիր,
ամէն: Ա. Բէնաբրու: (Ներւանիւն-
300 սուրբ հոգիւու և պիսե թու:)

Կատարած աղօթնից: Ա'յր ողօր-
մութեանց, պաղատիմ առ քեղ,
մի թողաւր զի ի կորուստ երթիցէ
ոգի, որ յաճախագոյնս յինքն ըն-
կալաւ զնորդի քո, զոր յերկնից ա-
ռաքեցեր յաշխարհ ինդրել եւ
կեցուցանեւ զկորուսեալն: Զայս
շնորհեա ինձ, Տէր, անբաւ ողօր-
մութեամբ քու, ամէն:

ԵՐԵՒԱՐԱՐԻ

ՅԱՌՈՅ ՔԸՆ ԶՊԱՏՄՐԱԳ

Երիբը պատ եւ դոհոցիք: Վաղցր
փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, Երկիր
պագանեմ յամենայն սրտե, չնորհս
եւ զոհութիւնս մատուցանեմ քեզ
ի խորց սրտի իմոյ, զի գթով մեծաւ
գնոց պատուական արեան քոյ գնեւ
ցեր զմեզ: Այլ բարեւ սբանչելեացս.
ի յիշատակ այսր սիրոյ քոյ եւ յառ
հաւատչեայ վիառայն հանդերձելոյ
տմենակալն զօրութեամբ, իմաստու
թեամբ եւ բարութեամբ քով իմա
ցար եւ զհնարս տալոյ մեզ ի կերա
կուր եւ յըմզելի զնոյնինքն զմարմին
եւ զարիւն քոյ, եւ ապատրեմն ան
ճառ քաղցրութեամբ քով արժանի
արարեր զիս՝ որ վատթարս եմ քան
զամենայն մեղաւորս, կոչել ի պաշ
տօն աստուածելէն խորհրդոյս եւ
խառնել ի համար քոյ պաշտօնէից:

Յահնէ լու: Ա այ ինձ, եղուկ եմ
ես, քանզի ցայտմ ոչ արժանի ըստ

իմում կոչմանն վարս ցուցի յանձին,
այլ բազում անգամ ծանրագոյն
մեղօք (մանաւանդ այս նիշ կամ այն
նիշ մեղօք) թշնամանեալ զայրա-
ցուցի զքեզ, Տէր: Ցաւ է ինձ գոնէ
այժմ ի խորօց սրտի վասն յանցուա-
ծոյ իմոյ՝ զորս ընդդէմ անսահման
սիրոյ քոյ գործեցի կամ այլոց պատ-
ճառք եղէ զործելոյ. եւ հաստա-
տեալ գնեմ ի մտի յայսմ հետէ
զքեզ միայն սրբել, քեզ միայնոյ
հաճոյ լնենել եւ ի քեզ միշտ յարել:
Մառռացանել: Եւ արդ մատչեմ
ի սեղան կոչնոյ քոյ, եւ նուիրեմ
քեզ յօժարութեամբ եւ սուրբ գի-
տաւորութեամբ զարժանաւոր պա-
տարագ մարմնոյ եւ արեան քոյ, —
զոր գու ինքն մի անգամ ի սեղանի
խաչի վասն մեր մատուցեր, — ի գո-
վեստ եւ ի փառս անբաւ մեծվայել-
չութեան քոյ, ի յիշատակ սբանչե-
լի խորհրդոյս մարմնաւորութեան,
կենաց, չարշարանայ եւ մահու քոյ.
ի գոհանալ զքէն ի վերայ ամենայն
պարգեւացն եւ բարերարութեանց,

զոր ցայս վայր ամենայն ընտրելոց
քոյ եւ ինձ անարժան մեղաւորին
շնորհեցէր կամ շնորհել հանդեր-
ձեալ ես . ի քաւութիւն մեղաց ի-
մոց, եւ ի փրկութիւն Ա. Ա. կենդա-
նեաց եւ ի սփսիանս Ա. Ա. ննջեցե-
լոց : Երանի՛ ինձ, եթէ կարող եղէց
զբնաւ սէր, զեռանդումն եւ զգան-
կութիւն քոյ բարեկամաց՝ որք ար-
դէն իսկ յերկինս թագաւորեն կամ
յերկիի զինուորիցին, յիս արծար-
ծանել, եւ ըստ արժանեաց զպաշ-
տօնս զայս մեծի սիրոյ քոյ կատարել :

Հաւատամ: Հաւատամ սրախ, նվ
քաղցր Յիսուս, եւ խոստովան լի-
նիմ բերանավ, զի Հայր Աստուած
յինքեան անշափ երանելի, կարող,
կատարեալ եւ ոչինչ ինիք կարօտ,
այնպէս սիրեաց զաշնարհ ըստ ան-
եզր ողարմութեանիւրում, զի զ.քեզ
զթորդին իւր միածին ետ մեզ փրկիչ :
Հաւատամ, եթէ դու, որ ի միակին
էական ես ընդ Զօր, Ելերանսահ հման
սիրով քովի ծոցոյ Զօր եւ խօնար-
հեալ իջեր յարդանդ երանելոյ

կուսին՝ զգենուլ մարմին վասն մեր
մարդկան : Հաւատամ զի սէր քո-
եւեթ որ առ մեզ՝ զբգեաց զբեզ
սահմանել ի յետին ընթերիս զիսոր-
հուրդ ճշմարիս մարմնոյ եւ արեան
քոյ, զի տացեսզ.քեզ ցանդի կերա-
կուր ողբոյ մերոց եւ կազդուրեալ
զօրացուցեսզմեզ : Եւ ապա ուրեմն
լեալ Զօր քում հնազանդ մահու-
չափ, մատուցեր անձամբ զանձնպա-
տարագ վասն մերի սեղանի խաչին :

Յոյս: Յուսամ ի քեզ, Առ-
տուած իմ եւ ամենայն ինչ, եւ լի
վաստահութեամբ յարուցեալ գամ
առ քեզ, որ ի մեր սակս մեծամեծ
զարմանալիս գործեցեր եւ գաւնա-
գառն չարչարանս առեր յանձնն :
Զի՞նչ իցէ զոր տալ մեզ զանձն-
ցես, որ այնպէսն սիրեցեր զմեզ,
մինչեւ զանձն քո ետուր :

Սէր: Ոիրեմ զքեզ, ցանկալի
Յիսուս, յամենայն զօրութենէ ո-
գւոյ իմայ, եւ կամիմ շնորհօք քովք
սիրել զքեզ յայսմ հետէ միշտ
եւ յաւիտեան :

Նուիրել զանչն։ Օքնչ տաց
տրիտուր քեզ, Տէր, վասն այնչափ
պարզեւաց քոց եւ ընդ ամենայնին՝
զոր ետուր ինձ։ Ուրանամ արդ ա-
ռաջի քո զանձն իմ, եւ ի հաճոյս
բարերար կամաց քոց լիով յանձն
առնեմ զմարմին, զհոդի եւ զմեն-
այն ինչ զեմ։ Զի՞նչ ունիմ՝ զոր
չիցեմ առեալ յոզրմութենէ
քումիմ։ Զի՞նչ է մարդ՝ առ հա-
մեմատութեամբ արարչին իւրոյ։
Զի՞նչ այն իցէ՝ զոր արարած մի
խոսան եւ որդն երկրի, ողորմելի
ոք մեղաւոր եւ ծառայ անպիտան
կարիցէ մատուցանել Աստուծոյ՝
իւրում արարչի եւ Տեառն։ Քաջ
գիտեմ, զի ողորմելի եմ եւ բա-
զում իմլիք կարօտ, ոյր վասն կա-
մակար խոնարհեցուցանեմ զանձն
իմ ընդ հզօր ձեռամբ քով։ Տէր
Յիսուս՝ բարեխօս եւ միշնորդ իմ,
քանզի մեծատուն ես արժանեօք եւ
առատ ողորմութեամբ, առ ի ձեռս
քո զգատատան իմ, եւ ի գանձոց
անչափ սիրոյ քոյ մեծացո զէքաւո-

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՊԱՏԱՐԱԳ 57

րութիւն իմ. զգինս պատուական
արեան եւ ամենայն արժանեաց քոյց
մատո Հօր քում երկնաւորի։ Լցոն,
աղաչեմ զմերին զայնը՝ զոր ես ին-
ձէն չեմ ձեռնհաս վճարել, մա-
նաւանդ զգոյզն եւ զանկատարն
պատրաստութիւն՝ որով մատչիմ
ի սուրբ խորհուրդս յայտոսիկ, զի
քեւ հաճեսցի նա ընդ պաշտօն ան-
արժան ծառայութեան իմց։

ԽՆԴՐԱԿԱՆՑ+ Տուր ինձ, կենարա՛ր
իմ Յիսուս, վասն անբաւ ողորմու-
թեան քոյ, պաշտել հանապազօր
հաստատուն հաւատովք, մեծա-
րանօք եւ շնորհակալ մտօք զահա-
գին խորհուրդս զայս եւ զպարզեւ
ոքանչելիք սիրոյ քոյ, եւ այժմ եւ
միշտ ընդունել սուրբ եւ եռանդ-
նալից սրտիւ։ Զօրացո զիս, զի սի-
րով, զգատութեամբ, խոնարհու-
թեամբ եւ հեղութեամբ եւ աս-
տուածահաճոյ վարուք՝ որպէս ինչ
վայել իցէ քահաճայի հաւատար-
մի, չանացայց շուք գնել իմում
քահաճայական պաշտաման, յոր

առանձինն չնորհօք քովք կոչել
զիս հաճեցար: Որպէս զի քեզ
հաճց եղիցի ծառայութիւնս իմ
յառաւել փառս քո եւ յօդուտ
որբոյ եկեղեցւոյ եւ ի փրկութիւն
անձին իմոյ եւ մերձաւորաց իմոց:
Եւ արդ յաղերս անկեալ աղաչեմ
զքեզ, զի ի ձեռն սուրբ մարմնոյ
եւ արեան քոյ կորզեալ անջաւ-
տեսցես զսիրա իմ յամենայն յօ-
ժարութեանց՝ որք եւ փոքու իւկը
արատեն զհագի, արգելուն ի նմա-
նէ զճաշակ եւ զպտուղս խորհրդոյս
այսորիկ եւ խափան լինին միաւո-
րելոյ ընդ քեզ ի ներքուտ, զի
ճաշակեցից թէ քանի քաղցր ես,
Տէր: Արա զիս մի ընդ քեզ հո-
գուով, զի դու յիսբնակեցես եւ ես
ի քեզ, եւ այլ եւս ոչինչ բաւա-
կան լիցի բաժանել զիս ի քէն:
Զի ինձ մերձենալ առ քեզ բարի
է եւ ի քեզ գնել զյոյս իմ: Զինչ
կայ իմ ընաւ յերկինս, եւ բաց ի
քէն զինչ եւս խնդրեցից յերկրի,
բաժին իմ Աստուած յաւիտեան:

Կուէլ զառէն յօդնունիւն: Առ-
ձեզ, սուրբ բարեկամք Աստուածոյ,
վասահութեամբ մեծաւ ընթացեալ
ապաւինիմ: Եւս առաւել զքեզ,
ով հաւատարիմ պաշտպան իմ,
Մայր Աստուածոյ Մարիամ, որ լի ես
շնորհօք եւ տարար ի սուրբ արգանե-
զի քում զԱստուած եւ զՄարդ,
զքեզ կարգամ ինձ ի թիկունսօգ-
նականաթեան: Ձեռն տուք ինձ եւ
դուք Ա. Ա. սուրբ պաշտպանք իմ,
որ տեսանէքդ այժմ զՏէր դէմ
յանգիման եւ լիով բերանավ ճա-
շակեք զհացն զայն, մինչ մեք իրը
ընդ հայելի օրինակաւ նշանամք
զնա աստէն եւ ընդ ծածկեալ կեր-
պարանօք ընդունիմք: Երանին էր
ինձ, եթէ ի ձերմէ բարեխօսութենէ
օժանդակութիւն գտեալ՝ յանդ
կարող եղեց ընդունել արժանա-
պէս զհացս զայս երկնաւոր եւ զթու-
շակ, զի ապա ուրեմն ընդ ձեզ յեր-
կնաւորն հայրենիս գէմ յանդիման
տեղեամբ յագեցայց . ամէն:

ԵՐԵՖԾԱԲԱԹԻ

ՅԵՏ ՊԱՏԱՐԱԳԻ

Բարձր արա զԾէր : Գատի զոր սիրեաց անձն իմ, կալսյ զնա եւ ոչ արձակեցից : Փարիմ գքեւ, ցանկալի Յիսուս : Քանիօն երանութիւն է ինձ, զի ընկալայ գքեղ, սէր եւ ուրախութիւն իմ : Ո՞րչափ քաջաւերութիւն զգամ յանձին, զի սատցեալ ունիմ գքեղ, գանձ ոգւոյ իմոյ, յորում եւ որով միայն մարդէ ի ինձ գտանել զամենայն : Լցո, Տէր, ի բարութենէ տան քոյ զամենայն կարօտութիւնն իմ, եւ արա զի քո եղէց ամենեւին, զոր օրինակ դու իմ ես բոլորովին : Դու Յիսուս, արարիչ եւ հաստիչ իմ, սիրտ սուրբ հածանեա յիս եւ հոգի ուղեղ նորոգեա ի փորի իմում : Դու ես Տէր եւ թագաւոր իմ . ստացիր զիս քեղ, եւ մի թողուր այլում ումեք բաց ի քէն թագաւորել ի սրտի իմում : Դու վարդապետ եւ ուսու-

ցիչ իմ, ուսու ինձ զքաղցրութիւն, զերատ եւ զգիտութիւն : Դու բարեխոս լեր վասն իմ առ Աստուած Հայր, զի գարձուսցէ յինէն զսրբամութիւն իւր : Դու որ հանդերձեալ ես զալ ի գատել զկենդանիս եւ զմեռեալս, մի մոցես ի գատաստան ընդ ծառայի քում : Դու ես սիրելի փեսայ հոգւոյ իմոյ, խօսեաց զիս քեղ հարսնութեան՝ ուղրմութեամբ եւ զթութեամբ քով : Դու ես առաջնորդ եւ պաշտպան իմ, առ զիս առ քեղ, եւ յայնժամ թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ՝ ոչ երկիցէ սիրտ իմ : Տէր լցո իմ եւ կեանք իմ՝ որ զենար վասն իմ ի խաչի, ի քեղ յուսացայ, մի, մի ամաչեցից յաւիտեան . այլ նեղեչք իմ եւ թշնամիք իմ՝ նոքա տկարացին եւ անկցին : Դու վրկիչ իմ, հան ի գլուխ զգործ վրկութեան քոյ, զի մի ի զուր ինչ լինիցին վաստակք քո : Դու բաժին ժամանգութեան իմոյ, եւ բաժին իմ յերկրին կեն-

գանեաց, գարձու այսրէն զժառանշ-
գութիւն իմ յիս: Դու փառք մեր
եւ պատկ պարծանաց եւ վարձք մեր
մեծ յոյժ. ընկալ զիս ի բարու-
թիւնս Տեառն՝ որք պատրաստեալ
են այնոցիկ որ սիրեցին զքեզ: Սէր
իմ Յիսուս, քաղցր Յիսուս, Յիսուս
կուսածին որդի Մարեմայ, տուր ինձ
շնորհս, սէր, իմաստութիւն, որը-
բութիւն եւ խոնարհութիւն, զի
կարող եղէց կատարեալ սիրով սի-
րել զքեզ, գովել, վայելել ի
քեզ, քեզ միայնում ծառայու-
թիւն հարիանել. եւ ի քեզ դաս-
նել զերանութիւն իմ այժմ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցնծու յԱստուած էր իւնչւ ու: Ոչ
գեղեցիկ ես, սիրելի Յիսուս, որպէս
վառես ի սէր քո զամենայն յօժա-
րութիւնս իմ: Քանի գեղեցիկ ես,
որչափ բարի եւ ցանկալի: Դու ես
մի միայն փափկութիւն իմ, կեանք
իմ, ցնծութիւն սրտի իմց եւ քաղ-
ցրութիւն իմ: Աստուած իմ եւ
ամենայն ինչ. առ քեզ կարդամ,

առ քեզ հաւաչեմ եւ փափաքիմ:
Սիրեմ զքեզ յամենայն զօրութե-
նէ սրտի իմց. զի գու ես Աստուած-
իմ, զլիսաւորական բարութիւն, սէր
յաւիտենական, անբաւ իմաստու-
թիւն, կարզութիւն անսահման
եւ կատարելութիւն արձակ: Ապա
ուրեմն ով մեխեայէ զիս ի սիրոց
քումէ, Յիսուս. նեղութիւն, թէ
դոյզն եւ առ ժամայն ցանկութիւնք,
թէ մեծութիւնք անցաւորք, թէ
սուր փառք, թէ անսահք անտառեաց:
Արդարեւ ոչ սոքա եւ ոչ այլ ինչ,
սէր իմ Յիսուս, լիցին առ այս
բաւական. զի ինձ մերձենալ առ
Աստուած բարի է եւ դնել յԱս-
տուած զյոյս իմ: Չեսն տուր ինձ,
սիրելի Յիսուս, ի սուրբ յառաջա-
գութեանս իմում. եւ մի թողուր
երբեք առնել ինձ մատցօնս
խոստմանցն եւ եգելց ի մտի: Լի-
ցի ինձ նուիրական խորհուրդս այս
ազգողագոյն դարման վիրացս զոր
ի մեղաց վիրաւորեցայ, եւ լումն
ամենայն շնորհացն եւ առաքինու-

թեանց. լիցի ընդգէմ ամենայն չարեաց եւ վտանդից ամուր պաշտպանութիւն եւ գրաւական յաւիտենական երսնութեան. ամէն:

Գոհանաւլ: Մարդասէր փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, որչափ քաղցր եւ հեղ է հոգի քո, եւ գթած առ այնոսիկ՝ որ կարդան առ քեզ: Զե մինչ դեռ ոչինչ էաք, աստուածեղն ողորմութեամբ քով հաներ զմեղ յոջնիչ յինչ. մինչ թշնամիք քո էաք, իջեալ յերկնից գնոյ գնեցեր զմեղ պանչելեօք իմաստութեան քոյ: Եւ զի առանց քո ոչ մարմնով եւ ոչ իսկ հոգւով կեալ եւ շարժել մարթիմք, դու անթաւ ողորմութեամբ հանապազ զօրացուցանես զմեղ խորհրդոյն եւ շնորհաց օգնականութեամբ. եւ սքանչելապէս բաշխես մեղ ի գոհ հովանդեան խորհրդեանս զքեղ զլսովին՝ զմարմն, զարիւն եւ զատուածութիւն քո: Ո՛ անբաւսէր, ով անչափ ողորմութիւն, ոմեծի եւ նորանշան խորհրդոյս:

Բարէ սքանչելեացս, Աստուած յանձնինունի գալ առ իս. թագաւորն եւ Աստուած մեծվայելութեան առ ծառայ անարդ. Աստուած առ մարդ. Արարիչն առ արարած: Ուստի է ինձ այս, զի եկեսցէ Տէրն տերանց առ իս: Ո՞վ Աստուած իմ, զի՞ պանչել է անուն քո ի վերայ ամենայն երկրի: Ո՞ ոք ի մարդկանէ պատմեսցէ զօրութիւնս քո. ո՞վ ոք լսելի արասցէ զօրհնութիւնս քո: Արդարեւ Տէր, թէ եւ ամենայն անդամք իմ ի լեզուս ըրջեսցին, եւ ամենայն տուրեւառ շնչոյ կենաց իմոց ի գովութիւնս եւ ի գոհութիւնս փոխեսցին, սակայն եւ այնպէս ոչինչ իսկ են՝ եթէ ընդ քո ողորմութիւնս համեմատեսցին: Եւ արդ զայս ինչ միայն ինոդրեմ, Տէր, որ գիտակդ ես անբաւականութեան իմում, զի համօրէն արարածք ընդ իս եւ ընդ իմ գովիսցէն եւ օրհնեսցէն զանուն քո ի յաւիտեան:

Մարտուցանել: Հայր ողորմութեանց եւ Աստուած ամենայն

միսիթարութեան, որ անսահման սիրով քով ետուր մեզ զՈրդի քո միածին, աւասիկ եռ ողորմելի մեղաւորս՝ որ այժմիկ հաղորդեցայ մարմնոյ եւ արեան նորա, եւ զնա իբրեւ զիմ ինչ ստացեալ ունիմ արդ ի ներքս ի սրտի իմում, մատուցանեմ քեզ զոէր իմ միաւորեալ զայն ընդ սիրոյ, զոր նո ի խաչափայտի քեզ եցոյց։ Ահա, Հայր զթած, այս իսկ է զանձն այն՝ յորում հաստատեմ զբովանդակ յոյս իմ, ոսքին իսկ են մեծութիւնքն՝ զորս քեզ ի հաստոցումն իմոց պարտեայն մատուցանեմ։

Հայեաց, մարդասէր Հայր, յեւ բես Քրիստոսի օծելոց քոյ, եւ քանզի նոյն ինքն Արդի քո սիրելի ընդ որ հաճեցար, յանձն առ այժմ անձկագոյնս միաւորել ընդ իս, թախանձանօք աղաւեմ, զի նայեացիս յիս աչօք ողորմութեան։ Ընդ նորա պաշտպանութեամբն եւ ինսամակալութեամբ, ընդ հովանեաւ նորին արժանեացն յանդիման լինիմ քեզ,

զի ընկալցիս զիս մարդասիրութեամբ իբրեւ զնա ինքն, եւ հայեայիս առ իս քաղցրութեամբ՝ որպէս առ ստրակ եւ առ ծառայ որ ամենայն իրաւամբը քո իցէ։

Մի թողուր, աղաւեմ, զի ի կորուստ երթիցէ ոգի, որ այնչափ յաճախագոյն ընկալաւ ի սիրոս իւր զՈրդի քո, զոր յերկնից առաքեցեր յաշխարհ իննդրել եւ կեցուցանել զկորուսեալն։ Զայս շնորհեանձ անսահման ողորմութեամբ քով, ամեն։

Կարեւալ առ Աստուած։ Աղաւեմ զքեզ, Տէր, լիցի սուրբ պատարագս զոր արդ մատուցի քեզ, ի կատարեալ ուղղութիւն վարուց իմոց, ի քաւութիւն եւ ի հաստոցումն ամենայն մեղաց եւ անհոգութեանց իմոց եւ մեղաց ամենայն աշխարհի։ Նորոգեա ի ձեռն պատարագիս զամենայն հօգեւոր բարիս զօր կորուսի, եւ լցո զպէտս եւ զչքաւորութիւն իմ։ Ի ձեռն նորին մեռս յիս զամենայն ընդ որ Հաճեցիս, եւ արա զիս

այր ըստ սրտի քում: Ի նորին ձեռն արա զսիրտ, զՀոգի եւ զմարմինս իմ, կերպարանակից սրտի, հոգւց եւ մարմնոյ նուիրական մարմնաւորութեան քոյ, եւ լուսաւոր արա զիս լուսով աստուածութեան քոյ: Ճնորհեա ինձ վասն նորին արդեանց լինել հաւատարիմ ի քում ծառայութեանդ, սիրել զքեղ անխառն սիրով, զի միաւորեալ բնդ քեղ ի ներբռուստ, փոխեցայց ի քեղ ի փառս անուան քոյ՝ որ կոչեցեալ է ի վերայ մեր, որպէս զի դու յիս բնակեցես եւ ես ի քեղ:

Դարձու, Տէր, ի մոլորութեան ճանապարհէն զհէք եւ զթշու առական մեղաւորս. ած ի գիտութիւն ծշմարտութեան զհէրեսիոլապս եւ զհէրձուածողս. լուսաւորեա զանհաւատս որբ զքեղ ոչ ճանաշէն. օգնական լըր ամենեցուն՝ որ ի կարօտութեան են եւ ի վիշտս. ձեռնառու լըր այնոցիկ որբ յանձն եղեն յաղօթս իմ. օգնեա ծնողաց, մերձաւորաց եւ բարերարաց իմոց

կենդանեաց եւ ննջեցելոց: Ողորմեա, Տէր, ամենեցուն առ հաւարակ՝ սրաց վասն պարտիմ առնել աղօթս. տուր կենդանեաց թողաւթիւն եւ շնորհս, շնորհեա հաւատացեալ ննջեցելոց հանգիստ եւ լոյս յաւիտենական: Գոհութիւն քեզ, Տէր Յիսուս Քրիստոս, յաւիտեանս. ամէն:

Աղջնե առ երանելի կոյսն: Մարիամ Կոյս եւ Մայր սուրբ, ընկալ արդ յինէն զլրդի քո սիրելի, զոր յշացար ի սրբական արդանդի քում, ծնար, գիեցուցեր եւ ի զիրկս քո գգուեցեր: Աւաղիկ մատուցանեմ քեղ իսոնարհութեամբ եւ սիրով զնա ինքն՝ որս տեսլեամբն ուրախ լինեկիր եւ զմայլէկիր նովաւ ի հաճութիւնս երինաւորս, զի փարեցիս զնովաւ եւ ցուցցես նմա զգութ՝ սրտի քոյ: Նուիրեմ զնա սրբոյ երրորդութեան ի բարձրագոյն պաշտօն երկրպագութեան. եւ եւս իպատիւ եւ ի փառս Մօրդ Աստուծոյ, եւ վասն պիտոյից

իմոց եւ բովանդակ աշխարհի : Ով
Մարիամ, անմարթ է թէ լսելի ոչ
լինիցիս՝ որ զմայրենի իշխանու-
թիւնն առ Աստուծոյ ընկալար : Եւ
արդ, ողորմութեան քոյ է առնել
չնորհս աշխարհի, ընդունել իրն-
գրուած ովլք թովառթիւն յանցաւո-
րաց, հիւանդաց բժշկութիւն, ակա-
րաց հոգւով՝ զօրութիւն, վշտացե-
լց միսիթարութիւն եւ վտանգե-
լց օգնութիւն եւ աղաստութիւն .
ամէն :

Կոչւլ լսութիս յօդնականունէւն :
Ամենայն սուրբք Աստուծոյ, դուք
էք միսիթարութիւն ալքատ անձին
իմոյ եւ առանձինն պահապանք եւ
պաշտպանք իմ . աղէ՝ դարձուցէք
զաջու ձեր տեսանել զլարդապետ
ձեր եւ զլարիչ, զլարձս վասաւա-
կոյ եւ զսրութեան ձերոյ, զգրւ-
խաւորական բարութիւն եւ զերա-
նութիւն ձեր՝ որ այժմիկ ի սրաի
իմում զիւր տաղաւար հարեալ է,
եւ ինդրես զիք ի նմանէ՝ որում ի
կենդանութեան ձերում բանիւք եւ

գործովք մօտագոյնս եղէք նմա-
նողք . զի հանապաղ զհետերթայց
զհետոց ձերոց, փոյթ յանձին կալայց
ժամանել ի կատարելաւթիւն, եւ
յետոց լցեալ արժանեօք հասից ի
հաղորդութիւն կենաց ձերոց :

Կատարած աղնից : Տէր Յիսուս
Քրիստոս, ի քո ձեսս առնեմ ա-
պաստան զմիսիթարութիւն, զերա-
նութիւն եւ զբնաւ բարիս հոգւոյ
իմոյ . յանձն առնեմ եւս խոնար-
հութեամբ մարգառէր սրաի քում
զիս եւ զամենայն եղբարս իմ, զբա-
րեկամն եւ զմշնամիս իմ : Մի փա-
կեր, Տէր, զգութ սիրոյ քո ի մէնջ
եւ արա զմեզ մի ընդ քեզ : Փոյթ
յանձին կալայց կեալ ի քեզ եւ
վասն քո . եւ մի ինչ մի յարարած
իրաց՝ իցէ նիւթ եւ վախճան բանից
եւ զորոց իմոց, եթէ ոչ դու, սէր
իմ, որ կենդանի ես եւ թագաւո-
րես ընդ ամենայն յաւիտեանս . ե-
ղիցի, եղիցի :

ԶՈՐԵՖՇԱԲԱԹԻ

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՊԱՏՄՐԱԳ

Ունիւ ունիւ ունիւ նիւն: Տէր
Աստուած, ես անարժան ծառայ
քո կամիմ յայսմ առաւօտուա՞ որ-
շափ ի կարի իմում է՝ սիրոյ, մե-
ծարանաց եւ աստուած պաշտու-
թեան եռանդ մամբ մատուցանել
անշափ մեծվայելլութեան քում
որում եւեթ պարտին փառք,
զառը պատարագո զայս ըստ կար-
դի պաշտաման սրբոյ հռովմէսիմն
Եկեղեցւոյ: ‘Սուիրեմ քեզ զայ-
տարագս սուրբ՝ միաւորեալ ընդ
ամենայն ընդունելի պատարագս,
ընդ գինս արեանն Տեառն մերոյ
Յիսուսի, ընդ արժանիս երա-
նելոյ Կուսին, ամենայն սրբոյ եւ
ընդ աղաչանս եւ գոհութիւնս
Եկեղեցւոյ սրբոյ. խառնեմ զայս
ընդ պատարագին ընդ այնմիկ՝ զոր
ի յետին ընթիս հաստատեալ եդ
Յիսուս եւ ի իւաշին հան ի գլուխ,

Եւալ ինքնին քահանայ եւ պատա-
րագ: Եւ եւս մատուցանեմ քեզ
զայս ի սէր եւ յանուն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի եւ Հարգին նորա-
եկեղեցւոյ, եւ այն առ սէր քո եւ-
եթ եւ առ ցանկութ եան կատարելոյ
զհաճոյս քո ցանդ եւ յամենայնի:

Մատուցանեմ քեզ զայս՝ ի
խոսուվանութիւն անարար մեծու-
թեան եւ տէրութեան քոյ ի վե-
րոյ ամենայն արարածոց, եւ մերոյ
առ քեզ հպատակութ եանս. ի
գոհութիւն քեզ վասն պարզեւ-
ացն եւ բարեաց՝ զոր չնորհեցեր
արարածոց քոց. եւ առ ի սպառ
ջնջու մն ամենայն թշնամանայն
զորս թշնամանեցար, եւ արհա-
մարհանայն սրտվք արհամարհէ-
յին զքեզ, ի պաշտօն երկրպագու-
թեան սր քեզ միայն պարտի,
միաւորեալ զայն ընդ բնաւ երկրո-
պագութիւնս Քրիստոսի, երանե-
լոյ Կուսին, ամենայն հրեշտակաց
եւ սրբոց. յաճեցուցանել զու-
րախութիւն մարմնաւորութեան

Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի
յիշել զիեանս եւ զշարչարանս նոռ-
րա, եւ ի յաւելուած փառաց եւ
երանութեան անարատ կուսին եւ
ամենայն հրեշտակաց եւ սրբոց:

Նուիրեմ քեզ զպատարագս զպյս
ի լինել շնորհակալ փասն ամենայն
երախտեացն՝ որովք ցայդմ լուսցեր
զիս. ի հատուցումն մեղաց իմօց՝
փասն որոց ցաւ է ինձ ի սրտէ. փասն
թշնամնացն եւ արհամարհանաց՝
որովք թշնամնեցի զքեզ, եւ
փասն այժմու եւ առ յապա պի-
տոյից հոգւոյ եւ մարմնոց իմոյ:

Եւ դարձեալ մատուցանեմ քեզ
զպյս փասն կենդանեաց եւ ննջեցե-
լոց, եւ փասն այնոցիկ՝ որոց պար-
տական եմ, այս ինքն՝ վասն ազդա-
կանաց, բարեկամաց, մերձաւորաց
եւ բարերարաց իմօց. յաղագս ա-
մենայն աստիճանաց նուիրապե-
տութեան կաթողիկէ Խեղեցւոյ.
փասն քրիստոնեաց իշխանացն միու-
թեան, առ արմատաքի հերետի-
կոսութեանցն եւ հերձուածոց

խլելոյ, ի դարձ ամենայն ազգացն
անհաւատից. վասն ամենայն ուխտի
մանկանց եւ կրօնաւորական կար-
գաց, զի ի սրբութեան զնոսին պա-
հանցեսեւ ամեցուոցես. վասնազա-
տութեան հոգւոցն որ ի քաւարա-
նի, այլ առաւել եւս փասն այնոցիկ՝
որ ետուն զտուրս ողորմութեան, զի
ըստ նոցա կամացն եւ դիտաւորու-
թեան զպատարագս զպյս մատու-
ցից, առ որս՝ դիտեմ իսկ այժմ՝
մերձեցուցանել զպառուզս սորա:

Հայեաց արդ, Հայր երկինաւոր,
եւ յիս յանարժան ծառայ քո, որ
կամ առաջի քո՝ զի պատգամաւո-
րեցաց վասն կենդանեաց եւ ննջե-
ցելոց: Ծնորհեա, Տէր, ննջեցելոց
հանգիստ, կենդանեաց զներելթու-
զութեան, բաշխեա շնորհս այնոցիկ՝
որ ճշմարտութեամբ եւ հաւատար-
մութեամբ քեզ ծառայիցեն, որ-
պէս զի եւ ի սէր քո իսպառ հանա-
պազրդեսցեն. ամէն:

Գլուխուոր առածինութիւններ: աւ-
տամամ ի քեզ, Տէր, առ աջին ճըշ-

մարտութիւն՝ վասն անսահման իշխանութեան քոյ: Երկիր պատանեմ քեզ, վասն անսարար մեծվայելութեան քոյ: Սիրեմ զքեզ, վասն անչափ բարութեան եւ քաղցրութեան քոյ: Ամաչեմ յանձնիմ, զի զքեզ զանսահման բարիդթողեալ, զգոյզն եւ զառաչս բարեաց զհեա պնդեցայ: Սարջանամբ եւ գարշեմ ի մեղաց իմոց, այնու զի սիրեմ զքեզ ի վեր քան զամենայն, գնեմ ի մաի քոյով օգնականութեամբ ուղղել յամենայնի զվարս իմ, զի աստէն իսկ արարից քեզ հատուցումն: Ծնորհս մատուցանեմ քեզ վասն ամենայն երախտեացն՝ սրովք ոչ գաղարես երբեք լցուցանել զիս: Առ քեզ դարձուցանեմ զամենայն՝ որ ինչ իմ է, եւ ի քո կամ առնեմ ապաստան վարել զնոտին: Առ սէր քո՞ առամ յամենայն սրտէ թողութիւն ամենեցուն՝ որք գառնացուցեալ վշտացուցին զիս: Խնդրեմ ի քէն վասն սրբոց չարչարանաց

Որդւոյ քոյ, ողորմեա հորդւոյ իմում յանջատել անդ ի մահկանացու մարմնոյս, եւ կազդուրեալ զնասուրբ խորհրդովք՝ տարեալ հասու ի կեանս յաւիտենականս. ամէն:

Պայլապանն: Ամենակալ մշնջենաունը Աստուած, մատչեմ արդ ի խորհուրդ միաձնի Որդւոյ քոյ Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յարուցեալ գամ տկարս առքիշին կենաց, անմաքուրս յաղը բիւրն ողորմութեան, կոյրս առլցոյն յաւիտենականն պայծառութեան, աղքատս առ Տէնն երկնից եւ երկրի: Խնդրեմ, Տէր, յանչափ առատաձեռնութենէ քումէ, զի հաճեսցիս զօրացուցանել զտկարութիւն իմ, լուանալ զաղանեզութիւն իմ, լուսաւորել զկուրութիւն իմ, մեծացուցանել զաղքատութիւն իմ, զգեցուցանել զմերկութիւն իմ. զի այնպիսի մեծարան զի եւ խոնարհութեամբ, այնչափ սարջանազ եւ եռանդեամբ, յանպիսի դիտաւորութեամբ, յա-

ուաշադրութեամբ, ամբծութեամբ
եւ հաւատովվք ընկալսց զհացն
հրեշտակաց, զթագաւորն թա-
գաւորաց եւ զՏէրն տերանց, որպէս
զի լիցի յօդուտ եւ ի շահ հոգւց
իմց: Տուր ինձ, աղաչեմ, ոչ միայն
զտէրունական մարմնոց եւ զարեան
ընդունել զիսրհուրդ, այլ եւ զիսր-
հրդոցս այսորիկ զազդեցութիւն եւ
զզօրութիւն: Ծնորհեա ինձ, քաղցր
Տէր, զմարմին միածնի Որդւոյ քոյ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝
զոր առ ի սրբոյ Կուսէն Մարեմայ,
այնպէս ընդունել, զի բաւական
եղէց յօդել ի խորհրդական մար-
մին նորա, եւ խառնել ի համար
անդամոց նորին: Տուր ինձ, Հայր
սուրբ, յետոյ ուրեմն յաւիտեանս
յաւիտենից տեսանել դէմ յանդի-
ման զՈրդիդքո սիրելի զոր արդ ընդ
ծածկեալ կերպարանօք ցանկամ
ընդունել: Որ ընդ քեզ եւ ընդ սրբոյ
Հոդւոյն կենդանի է եւ թագաւորէ
ընդ ամենայն յաւիտեանս. ամէն:
Ս. Թում. Աւո-ինաց:

Առ երանելի կոյս: Ապար գը-
թութեան եւ ողորմութեան, ե-
րանելի կոյս Մարիամ, առ քեզ
ապաւինիմ սղորմելի մեղաւոր՝ բու-
լըով սրտիւ եւ սիրով, եւ աղա-
չէմ զգթութիւն քո, զի զոր օրի-
նակ կայիր առ անուշակ Որդւոյ
քում կախելց զիսաչէն, նոյնակս
համեսցիս կալ սղորմութեամբ եւ
առ թշուառական մեղաւորիս եւ
առ ամենայն քահանայ՝ որք աստ
եւ ընդ ամենայն եկեղեցիս այսօր
պատարագս մատուցանեն, զի օդ-
նականութեամբ շնորհաց քոց կա-
րող լիցուք արժանաւոր եւ ընդ-
ունելի պատարագս մատուցանել
մեծի եւ անբաժին սրբոյ Երրորդու-
թեանն, ամէն:

= Առ Ա. Յովեկ: Առարբ Հայր
Յովեկի կուսանսաց պահապան, ո-
րոց հաւատարիմ պահպանութեան
յանձն եղեւ նոյն ինքն անմեղու-
թիւնն Յիսուս Քրիստոս եւ Կոյսն
կուսանսաց Մարիամ, թափանձա-
նօք ինդրեմ ի քէն վասն կրկին

սիրելի գրաւականացո՝ Յիսուսի եւ
Մարեմայ, լեռ ինձ օգնական, զի
ի բաց փախեայց յամենայն աղտե-
ղութենէ մեղաց, եւ հանապազօք
մաքուր մոտք, սուրբ սրտիւ եւ
ամբիծ մարմնով ծառացեցից Յի-
սուսի եւ Մարեմայ, ամէն:

Սնւրբ Յովսէփ, օրհնեալ ես ի
մէջ արանց, քանզի արժանի եղեր
ոչ միայն տեսանել եւ լսել, այլ
եւ բառնալ եւ համբուրել, զգե-
ցուցանել եւ պահպանել զԱստու-
ած, զոր բազում թագաւորը ցան-
կացան տեսանել եւ ոչ տեսին,
լսել եւ ոչ լսւան:

Ազաշեա վասն մեր, սուրբ Յով-
սէփ: Զի արժանի լիցուք խոստ-
մանցն Քրիստոսի:

Տէր, որ չնորհեցեր մեզ զարքու-
նական պատիւ քահանայութեան,
զօրացո զմեզ՝ զի լիցուք նմանող
սրբոյն Յովսէփայ, — որ արժանի
գտաւ շօշափել եւ բառնալ ի գիրկո-
իւր զմիածին Որդին քո՞ որ ծնաւ ի
սրբոյ կուսէն Մարեմայ, — եւ ջա-

նասցուք սպասաւորել սուրբ սրտիւ
եւ ամբիծ վարուք սեղանոյ քում
սրբոյ, եւ ընդունել այնպէս զնուի-
րական մարմին եւ զարիւն Որդւոյ
քոյ, զի յանտի կեանս վարձուց
յաւիտենականաց լիցուք արժանի.
Քրիստոսի Տէրամբ մերով, ամէն :=

Առ Սուրբն: Ամենայն սնւրբք
Աստուծոյ, ես անարժան մեղաւորս
յարժանիս ձեր վսածհ լեալ, կա-
միմ յայսմ առաւօտուս ի պատիւ
եւ ի փասս ձեր մատուցանել
զսուրբ պատարագ մարմնոյ եւ ա-
րեան Տէառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի: Ազաշեմ զձեզ խոնարհու-
թեամբ, բարեխօս լերուք վասն իմ
առ Տէր, զի զպատարագս զայս ի-
մովանն վութով արժանապէս
մատուցից եւ լիցի ընդունելի, եւ
ես արժանի գտայց երբեմն ընդ ձեզ
եւ ընդ ամենայն ընտրեալս օրհնել
զԱստուծ յաւիտեանս, ամէն:

ՉՈՐԵՔԾԱԲԱԹԻ

ՅԵՏ ՊԱՏՄՈՒԹԻ

ԵՐԿՐ ՊԱԺԱՆԵԼ:

ԵՐԿՐԱՊԵՄ աԵՆՀՄԱՄԲ սՐԱՄ
ԱՍՏՈՎԱԾՈՒԺԵԱՆ,

ՍՄՈՎԳԻւ ծԱԾԿԵԱԼ զՊԱԼԻ ձԵՎՈՔ
յԱյսՄ խորհրդեան:

ՔԵՂ ԽՈՆԱՐԴԻ սԻՐՄ իՄ բՊԱՄ
ոՐԱԿԵԱ աՐԺԵԱՆ,

ԶԵ զՔԵՂ աԵԿԵԱԼ ոՀ հԱՆԴԱՐ-
ՄԻ քՊԱ մԵԾՈՒԺԵԱՆ:

Ի ՔԵՂ սԻՄԱԼԻՆ աչՔ մԵՐ Եւ
քՔՄՔ ըՆԴ շՈՇԱՒԻՄԱՆ,

ԲԱյց լԱՍԵԼԵՈՔ հԱւատալի լԻՆԻ
մԻՐԱՅՆ:

ՍՄՈՎԳ հԱւատամ զՊՐ իՆՀ աՍԱՅ
ԱՍՏՈՎԱԾՐՆ բԱՆ,

ՔԱՆ զՊՐ չԻՔ իՆՀ ըՍՄՈՎԳԱՊԵՍ
ՃՆՄԱՐԱՎՈՒԺԵԱՆ:

Ի ԽԱՀԻՆ էՐ ԱՍՏՈՎԱԾՈՒԺԻՒՆՆ
աՆԴԱՅՄ մԻՐԱՅՆ,

Ի ԱԿ աՍՄ թԱՔՀԻ Եւ մԱՐԴԿՈՒ-
թԻՒՆՆ հԱՄԱՆԴԱՄԱՅՆ:

ԲԱյց հԱւատով խոստովանիՄ
ես զԵՐԼՈՒԵԱՆ.

ԽՆԴՐԵՄ զՀԱյցեալն աւազակին
գործով զՊԸՄԱՆ:

Ո՛Հ շՈՇԱՓԵՄ ոՐԱԿԵԱ թԱՎՀԱՍ
ԵՐԿԲԱՅԱԼԱՆ.

ԱՌԼ հԱւատամ զՏԷՐ եւ Ա-
ՏՈՎԱԾ հԱւատական:

ՏՈՒՐ իՆՃ ի քԵՂ հԱւատու ու-
նԵԼ յԱԼԵ ժական,

Ի քԵՂ յՈՒՍԱԼ եւ զՔԵՂ սԻՐԵԼ
քան զՊԱՄԵՆԱՅՆ:

Ո՛Վ յԻՀԱՏԱԿ մշտակառոյց
ՏԵԱՈՆ մահուան:

Հաց կԵՆԴԱՆԻ կԵՆԴԱՆԱՐԱՐ աղ-
դի մարդկան.

ՃՆՈՐՀԵԱ մոաց իմոց ի քԵՂ
կԵԱԼ անսասան,

Եւ զՔԵՂ քպղը միշտ իմանալ
ի յաւիսեան:

Ո՛Վ հԱւալուսն զորովագութ
բանդ հայրական,

ԶԵՍ անմաքուրս մաքրեա ցօղով
քպոյ արեան.

Որպէս կաթիւմ մի իսկապէս է բաւ-
ական,

Փրկել զաշխարհ ի յանցանաց
միանդամայն:

Յոր այժմ հայիմ, ծածկեալդ
Յիսուս ի սուրբ սեղան,

Մազլթեմ ի քէն տալ ինձ ո-
րում տենչամ այսքան.

Զքեղ տեսանել բաց երեսօք
գէմ յանդիման,

Եւ երանի լինել փառօք քոյ
տեսութեան, ամէն:

Գոհանաւ: Գոհութիւն քեղ,
Տէր, բարերար հոգւոյ իմց, զի
արժանի արարեր զիս երկնաւոր
խորհրդոց քոց: Այլ զի՞նչ տաց
քեղ արիտուր: Ապաքէն կրտսեր
եւ անարդ քան զամնեսին եմ
ես: Վասն այտորիկ պաղատիմ առ
քեղ, ողորմած Տէր, ընկալ զդո-
հութիւն՝ զօր մատոյց քեղ վասն
իմ ի բովանդակ կեանս իւր Որդիդ
քո կենարարն մեր՝ մարմնովն զօր
առ ի սրբոց կուսէն Մարեմայ: Ըն-
կալ եւ զփառան՝ զօր ի հաստատել

անդ իւրում զիսորհուրդն գոհու-
թեան, ամբարձեալ զաչս իւր յեր-
կինս՝ ետ քեղ Աստուծոյ եւ Հօր
իւրում ամենակալի յանուն մեր
ամենեցուն եւ ընդ մեր:

Ընկալ, բազմագնւթ Հայր, եւ
զնորհակալութիւնս՝ զօրս երանե-
լի Կոյսն՝ Մայր միածնի Որդւոյ քոյ
մատոյց քեղ, յորժամ յզացաւն եւ
տարաւ ի սրբական որովայնի իւրում
եւ ծնաւ զայն՝ զօր այժմն ես ինքն
փակեալ ունիմ ի ներքս ի սրտի ի-
մում: Հանդերձ սպիրիտ հայեաց
եւ ընդ գոհութիւնս զօր մատոյց
նա քեղ զամենայն աւուրս կե-
նաց իւրոց եռանդնալից սրտիւ եւ
աստուածապաշտութեամբ, քանիցս
անդամ թէ՝ յետ վերանալոյ նորա
յերկինս՝ ընկալաւ զնա ի սուրբ
խորհրդեանն գոհութեան:

Օրհնեացեն զքեղ եւ գովեացեն
ամենայն ոգիք հրեշտակայ՝ որը
հանապակ ահիւ եւ գովաթեամբ
կան զաթուալ մեծվայելութեան
քոյ, եւ յանդ առանց գագարելոյ

Երգեն եւ ասեն, Սուրբ, Սուրբ,
Սուրբ, Տէր զօրութեանց:

Յանկամ եւ փափաքեմ եւս ի
բոլը սրտէ, զի ամենայն սուրբք
եւ սիրելիք քո՞ սրբ այժմ ընդ
քեղ յերկինս թաղաւորեն եւ ընդ
որս եմք իսկ ի հաղորդութեան,
արացեն հատուցումն անբաւակա-
նութեան իմում գոհութեամբք
իւրեանց՝ զոր մատուցին քեղ
յաշխարհիս յայսմիկ յընդունելն
եւ ի մատակարարել զպատուական
խորհուրդո զայս: Ընկալ եւ զօր-
հնութիւնս զորս երգեն քեղ այժ-
միկ, ի ճաշակելն իւրեանց զհայցն
կենաց բացաւ երեսօք եւ յըմպել
անդ զուղխս փափկութեան քսյ:
Հաղորդ արա զիս, Տէր, ամենայն
երկիւղածաց քոց՝ որ պահեն զպա-
տուիրանս քս:

Երանի՛ էր ինձ, եթէ մարթէի
յանձն իմ ժողովել զամենայն իզձս,
զեռանդումն, զարժանիս բարեպա-
րիշա հաւատացելոց, եւ զուխտս եւ
զարդիւնս այնոցիկ որ հաճոյ եղեն

քեղ յերկրի, զի այնպէս ամենայն
յօժարութեամբ որսի ջանացայց
սիրել զըեղ եւ զովել վասն անշափ
սիրոյ եւ պատուոյ՝ զոր ի խորհըր-
դեանս յայսմիկ առ իս ցուցանես:

= Հաւաչան + առ Յիսուս: Ասզի
Քրիստոսի, սիրու սուրբ հաստեա յիս
եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի
իմում, զի բաւական եղեց տեսա-
նել զԱստուած՝ որ սրբոցն սրտիւ է
բաժին ժառանգութեան:

Կուիրական զլուխ Յիսուսի իմայ,
յորում ծածկեալ կան ամենայն
զանձք իմաստութեան Հօր, գու՝
որ առ սէր իմ եղեց գամբ տանջեցար
եւ փշովք պակեցար, սրբեա
զարհուրդո մտաց իմայ, զի իցեն
միշտ ուղղեալը առ քեղ:

Սուրբ աչք Յիսուսի իմայ, սրոց
հայեցուած մի միայն կակղեաց եւ
դարձոյց եւ զսիրտս անգամ խօստա-
գոյնս, կարձեսջիք զհետաքըրիր
բարս իմ՝ որ արկանեն զիս ի բազում
վտանգս: Հայեցարուք գմութեամբ
ի թշուառութիւնս հոգւոյ իմայ եւ

բժշկեցէք զիս յամենայն տկարութեանց: Կկատեցից այսուհետեւ զերկիր եւ արհամարհեցից զանոտիս նորա, նայեցայց ընդ երկինս եւ ցանկացայց մտանել ի ժառանգութեիւն նորա, յառեցից ի քեզ Տէր զաս իմ՝ զի եղէց նմանող օրինակաց: Քոց:

Ականջք աստուածեղէնք Յիսուսի իմոյ, որք բաց են միշտ յաղաշանս տառապելոց, աղէ՛ ունկն դիք խնդրուածաց անարժան մեղաւորիս, եւ մի այլ եւս թողուցուք լսել ինձ բանս հրապուրանաց, բամբառանաց ի բան: Մի եւս յայլ ինչ զբաղեցուցից զսելիս իմ, բայց ի լսել զդովութիւնս քո եւ հոչակել, ի ճանաչել զյանցանս իմ եւ ուղել, ի լսել զթելադրութիւնս քո եւ եղեք անսալ:

Եղու Յիսուսի Աստուծոյ իմոյ, որ հողմոց հրամայեցեք գագարել, հիւանդաց բժշկել, մեռելոց յառնել, եւ եղեք ասժամայն լսելի, հրաման տուր ախտից կարեաց իւ-

մոց, զի մի ապօտամբեացին յայսմշէտեան ի հոգւոյ իմութ: Սաստեամբմնոյ իմում՝ զի նուռազեցուացէ զպահանջանս իւր, աշխարհի՛ զի մի շքեղութեամբ իւրով շացուցեալ պատրեացէ զիս, սատանայի՛ զի մի երբեք էշխացէ մտանել ի սիրա իմ:

Սնւրբ ոտք Յիսուսի իմոյ, որ այնչափ աշխատ եղէք խնդրել զմեղաւորս, ուղղեացէ զդնացս իմ, զի մի խոտորեացին բնաւ ի ճանապարհէ աստուածեղէն պատուիրանաց: Քոց:

Սնւրբ ձեռք Յիսուսի իմոյ, որ յահձն առեք կապանս եւ շղթայս առ սէրիմ եւ ծակել բեւոք, պլնդեսջիք զիս յաստուածեղէն գիրկո, զի մի այլ երբեք հեռացայց այտի:

Սնւրբ մարմին Յիսուսի իմոյ, որ առ գութ իմ ձաղկեցար, խաչեցար, մեռար եւ թալեցար, եւ նստիս արդ փառօք ընդ աջմէ Աստուծոյ Հօր, որբեա՝ աղաչեմ, զամենայն զգայունս իմ, զի լիցին առ յապամի մի գործիք հոչակելոյ զփառս քու. ամէն :

ԽՆԴՐԻՌԱ-ԱԺ+ : Հաւատամ, Տէր,
հաստատուն հաւատովլք : Յուսամ,
Տէր, վատահոթեամբ մեծաւ : Ոի-
րեմ զքեղ, Տէր, ջերմ եռանդ-
մամբ : Յաւիմ, Տէր, յամենայն
անձնել իմէ :

Երկիր պագանեմ քեղ՝ որ
սկիզբն ես ամենայնի . փափաքիմ
քեղ զի ես վերջին վախճան բնաւի .
դովեմ զքեղ բարերար հոգւոյ ի-
մոյ . կարդամ զքեղ՝ ձեռնտու եւ
պաշտպան իմ :

Կանգնեա զիս իմաստութեամբ
քով, արդարութեամբ քով պա-
հեա ի չարէ, զթութեամբ քով
միսիթարեա եւ պարապեա կարո-
ղութեամբ քով :

Մատուցանեմ քեղ, Տէր, զլոր-
հուրդս իմ՝ զի իցեն միշտ զքեն,
զգործու զի իցեն ցանդ ըստ քոյ
հաճոյից, եւ զամենայն ինչ զոր
կըեմ՝ զի իցեն հանապաղ վասն
քու :

Կամիմ՝ զոր ինչ դու կամիս .
կամիմ՝ այնու զի դու կամիս . կա-

միմ՝ սրակս դու կամիս . կամիմ՝ որ-
շափ ժամանակս դու կամիցիս :

Ազաշեմ զքեղ, Տէր, լուսաւոր
արա զմիսս իմ, վառեա զկամս իմ,
սրբեա զմարմին իմ եւ սուրբ արա
Ճշմարտութեամբ զհոգի իմ :

Տուր ինձ զի մի ամբարտաւա-
նութեամբ զգածնուցում, մի յու-
ղըանաց գրգուեցայց, յաշնարհէ
մի պատրեցայց եւ մի խաբեալ ի
ստանայէ մոլորեցայց :

Տուր ինձ չնորհո՝ զմիսս յոտա-
կելոյ, զիսրհուրդս սրբելոյ, սան-
ձահարելոյ զիշկու իմ, յուղեղ չա-
փու զաշս ունելոյ եւ զզգայունս
արդելալ կարծելոյ :

Արա զի լացից զանցեալ անօրէ-
նութիւնս իմ, ի բայց փախեայց
ի փորձութեանց, ուղեցից զար
յօժարութիւնս եւ զանբարի մի-
տութիւնս, եւ կրթեցից զանձն իմ
մեծաւ հոգաբարձութեամբ ի կա-
րեւոր առաքինութիւնս :

Չնորհեա ինձ, բարերար Տէր,
սիրել զքեղ, ատել զանձն իմ,

շինել զննկերո եւ արհամարհել
զաշխարհ:

Փոյթ յանձին կալայց հնազանդ
լինել առաջնորդաց, հասանել
յօգնութիւն հպատակաց, միսի-
թարել զբարեկամս եւ մի նախան-
ձել ընդ ումեք:

Տուր ինձ, յանկալի Յիսուս, յի-
շել զպատուիրանս եւ զօրինակո-
քո՞ սիրելով զմշնամիս, տանելով
թշնամանաց, բարիս հալածչացն
առնելով եւ աղօթո՞ վասն զըր-
պարտչացն:

Տուր ինձ յաղթել յանկու-
թեան՝ խստամբերութեամբ, ա-
գահութեան՝ առատաձեանու-
թեամբ, յասման՝ քաղցրութեամբ
եւ մեղկութեան՝ աստուածպաշ-
տութեամբ:

Աբա զիս իմաստուն ի խորհուրդո,
հաստատուն ի վտանգո, համբերով
ի չարիս եւ խոնարհ ի յաջողու-
թիւնս:

Աբա, Տէր, զի իցեմ յանդ ուշա-
կալու յաղօթո, ի հացի՛ ժուժկալ,

փոյթ ի պաշտաման եւ անշարժ ի
յառաջադրութեան իմում:

Զանացայց ունել զնեբըին որը-
բութիւն, զարտաքին համեստու-
թիւն, մտերմութիւն բարի եւ շի-
նիչ, եւ վարս կարգեալս եւ յար-
դարեալս:

Սկեցից նուաձել զբնութիւն,
պահել եւ աճեցուցանել զնորհս
քո՞, լնուլ զօրէնս եւ շահել զիբր-
կութիւն հսդւոյ իմոյ:

Գո՞ն եգից հասանել ի սրբու-
թիւն՝ անկեղծ խոստովանութեամբ
մեղաց, չերմ եռանդմամբ հաղոր-
դեալ մարմնոյ եւ արեան քրիստոսի,
մտաց հանապազորդ ամփոփմամբ
եւ սրբով դիտաւորութեամբ սրտի:

Ուսայց ի քէն, Տէր, թէ քանի
չնչին են երկրաւորքո, քանիօն
մեծամեծք աստուածեղէնիքն, զի-
արդ անցաւորք են ժամանա-
կեանքո, որչափ տեւականիք են
յաւիտենականիքն:

Ճնորհեաինձ Տէր, պատրաստել
զանձն ի մահ, երկնչել ի դատաս-

տանէ, վախչել ի գժոխոցեւ ժառանգել զերկնից արքայութիւն, Քրիստոսի Յիսուսի Տերամբ մերով . ամէն: Կը մի ծառ ծԱ: Քահանայադրէ:

ԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԻ ՀԱՅՐԵՊՈՒՅԵԼԵԱՆՑ ԱՅԼՉ: Տէր, որոյ աղեք ողորմութեան բաց են ամենեցուն, որ ընդուրութ կրուստ ոչ կամիս, այլ ամենայն մարդկան հասանել ի փրկութիւն, ոյր վասն եւ մահու իսկ խաչի տարար վասն մեր եւ զիսրհուրդս զայս հաստատեցեր, տուր, աղաչեմ զքեզ, քոց քահանայից զմիաբանութեան եւ զորբութեան զառաքինսութիւն, թագաւորաց եւ իշխանաց զանդորրութիւն եւ զիսրդաղութիւն, կուսանաց զգասասութիւն, նուիրելցն ուխտիւք ժուժ կալութիւն, կապելցն ամսւսնութեամբ սրբութիւն, ապաշխարուցաց մեզացն թաղութիւն, արդարոց հանապազրդութիւն, մեղաւորաց եւ ինձ ողորմելցո՞ններել թողութեան, այրեաց եւ սրբոց գալման կենաց, անամկաց օգնականու-

թիւն, պանդխտելց այսրէն դարձ, որոց սղայցենն եւ լայցեն միփիթարութիւն, եւ ամենայն հաւատացելոց քրիստոնէից՝ կենդանեաց եւ ննջեցելց շնորհս եւ զկեանս յաւիտենականս. ամէն: Ո. Ա-ԴԱՎՈՒԹԻՒՆ:

Աւ երանելի կրյան: Ով տիկին իւր սուրբ կոյս Մարիամ, յանձն տոնեմ զիս ի մեծազօր իշխանութիւն եւ յառանձինն պաշտպանութիւն քս, յողորմութիւն քս ապօպարեմ այսոր եւ հանապազրդեւ ի ժամու մահուն իմայ զհողի եւ զմարմին իմ: Ի քեզ ապաստան առնեմ զամենայն յոյս եւ զմիսիթարութիւն իմ, զամենայն վիշտս, զմշտառութիւնս եւ զկատարած կենաց իմոց, զի բարեխօսութեամբ եւ մեծամեծ արժանեօք քովք կարգեալ յարգարեսցին զործք իմ ըստ կամաց եւ հաճցից քոց եւ Որդոց քս. ամէն:

Աւ սուրբ: Ամենայն սուրբը Աստուծոյ եւ երանեալ ոգիք հրեշտակաց, որ ցանդ երանական տես-

լեամբն Աստուծոյ զմայլիք, հա-
ճեօջիք աղաշել եւ վասն իմ մե-
ղաւորիս: Մեծարեմ զձեղ եւ գո-
հութիւնս մատուցանեմ Աստու-
ծոյ՝ որ ընարեացն զձեղ, եւ չնոր-
հօք իւրովք կանխեալ զգուշացց
ի մեղաց, հապա, ընկալարուք ինձ
թողութիւն, չնորհսեւ կատարեալ
միւաւութիւն ընդ Աստուծոյ.
ամէն:

Կադարած առջենից: Տէր Աստու-
ծած մեր, որոց ողորմութիւնն ան-
բաւ է եւ գանձ բարութեանց քոց
անուպաս, չնորհս մատուցանեմք
քեղ վասն առ ի քէն ընկալեալ
պարգեւացս եւ աղերսեմք միշտ
զգթութիւն քո, զի՞ որ չնորհես
զհայցուած ինդրողաց, մի անտես
արասցես զնոսա, այլ ի հանդեր-
ձեալ փառս ժամանեցուցես,
Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մե-
րով. ամէն:

ՃԻՆԳՇԱԲԱԹԻ

ՑՍԹԱԶ ՔԸՆ ԶՊԱՏՏՐՎԳ

Զարժանաւ ընդ հարդարիութիւն
Աստուծոյ: Լուսեմ, Տէր, զբարբառ-
քո զի ասես, Եկայք առ իս ամե-
նացն աշխատեալք եւ բեռնաւորք,
եւ ես հանգուցից զձեղ,,,: Ով
Սուրբդ սրբոց: գու աւագիկ, խո-
նարհեալ զաս առ իս. գու կամիս
լինել ընդ իս, գու հրաւիրես զիս
ի սեղան քս, գու ցանիկաս տալ ինձ
զերկնաւորն կերակուր եւ զհացն
հրեշտակաց ի ճաշակել, այս ինքն՝
զքեղ զլսութին զհացդ կենդանի՝
որ իջեալ յերկնից եւ կեանս տաս
աշխարհի:

Գոհութիւն: Տէր, աներեւոյթ
վարիչգ աշխարհի, զիարդ սպան-
չելապէս զործես ընդ մեղ, քանի
քաղցրութեամբ եւ մարդասիրու-
թեամբ զնաս ընդ ընտրեալս քո,
որոց մատուցանես զանձն քո ի
խորհրդեանս յայսմիկ յընդունել:
Ցնծա, անձն իմ, եւ մատո գոհու-

այլըց պատճառք եղէ ործելոց, եւ ընկալ զիս գթութեամբ ի համբոյր հաշտութեան:

Հաւատաբար: Հաւատամ, Տէր Յիսոս, Սուրբդ որբոց, Արարիչ ամենայնի եւ Տէր հրեշտակաց, եւ խոստովան լինիմ եթէ կաս գուատ ի վերայ սեղանոյ խորհրդոյն գոհութեան: Քեզ, ամենակալ Տէր, հնազանդեցուցանեմ զմիսո իմ յամենայնի՝ որում իմիք չլինիմ հասու, քանզի գու, Ասուանձ իմ, ոչ խաբես զիս: Զի թէ այնպիսի ինչ եին գործք քո, թէ հեշտեաւ մարդկեղէն միտք հասանէին, ապա զարմանալիս եւ անձառու կոչել զնոսա պք չմարթէր: Բարեէ, զինորանշան են գործք քո, քանիօն մեծ է զօրութիւն քո, զիարդ անպատում ձշմարտութիւն քո: Զի ասոցեր եւ եղեւ ամենայն, եւ զօր գուն հրամայեցեր՝ հաստատեցաւ:

Ցայս: Ի բարութիւն եւ ի մեծողարմութիւն քո, Տէր, ապաւի-

նեալ, մատչեմ հիւանդս առ կենարարդ, քաղցեալս եւ ծարափս առ աղբիւրդ կենաց, կարօտեալս առ թագաւորդ երկնից, ծառայս առ Տէրդ, արարածս առ Արարիչդ, սղաւորս առ զթած միսիթ արիչիմ. եւ յուսամ հաստատութեամբ եթէ տացես ինձ ի խորհրդեանս յայսմիկ վկարեւոր շնորհս, նորոգեացես յոգւոջ իմում զգօրութիւնն կորուսեալ եւ զգեղեցիւթիւն որ մեզօքն ապականեցաւ, եւ զգուշացեալ պահեսցես յայսմ հետէ զսիրտ եւ զմարմին իմ յամենայն բժոյ:

Աւր: Տուր ինձ, սիրելի Յիսուս իմ, վասն քո մերկանալ յանձնէ զսէր արարածաց, զքեզ միայն սիրել ի վեր քան զնաւ, եւ զքեզ ունել ինձ բարեկամ ի կեանս եւ ի մահու: Ծանր գժոխք են լինել առանց քո, եւ ընդ քեզ լինել քաղցր արքայութիւն է: Ով գանձ բարի. ո բարութիւն զեր ի վերց քան զամենայն բարութիւն. ով

Աստուած իմ եւ ամենայն ինչ։
Որում ի միտ առնուցու՝ բաւական
է բանս, եւ զնոյն միշտ երկրորդել՝
հեշտական այնմ որ սրբիցէ։ Սըր-
բեա, ուրախ արա, պայծառացո,
կենդանացո զհոգի իմ եւ զկարու-
ղութիւնս նորա, զի եկից եւ միա-
ցաց ընդ քեզ ցնծալց զմայլու-
թեամբ։

Ի՞շտ։ Տէր, ի քեզ է ամենայն՝
որում մարթիմ եւ պարտիմ իսկ
ցանկանաւլ։ Գու կեանք իմ եւ
փրկութիւն, յոյս եւ զօրութիւն,
պատիւ պարծանաց եւ փառք իմ։
Փափաքիմ ընդունել զքեզ եռ-
անդմամբ եւ մեծարանօք։ Ըղձա-
նամ աանել զքեզ ի տուն իմ, զի
արժանի գտայց ընդ Զակեփե օրհն-
ել ի քէն եւ կարգել ընդ որդիս
Աբրահամու։ Անձն իմ փափաքէ
մարմնոյ քում, եւ ցանկայ սիրու
իմ միանաւ ընդ քեզ։ Մի, մի գար-
ձուցաներ զերեսս քո յինէն, մի
յապազեր զայցելութիւն քո եւ
մի ի բաց բառնար յինէն զմսիթա-

րութիւն քո։ Եկ առ աղքատ ծա-
ռայ քո՝ ուրախ առնել զիս. Եկ,
Տէր, յագեցուցանել զիս քեւ։
Զե չէ մարթ ինձ ուրախ լինել,
յորպան ժամանակս ոչ ընկալաց ի
քէն զոր խնդրեմն։

Առջև յօհնականութիւն։ Ովկ ե-
րանացուցիչ չնորհը՝ որ մեծացու-
ցեր զիս զաղքատս ոգւով, եկ այց
առնել ինձ մսիթարութեամբ
քով, գուցէ առ ցամսքութեան
վհատեալ կործանեցաց։ Խնդրեմ
ի քէն, Տէր, կանխեա առ իս ե-
րախտեօք ողջմութեան քոյ, զի
բաւական եղեց մատչել արժանա-
պէս ի մեծամեծար խորհուրդն
գոհութեան։ Վառեա զսիրտ իմ
ի սէր քո եւ կամեաց սթափել զիս
ի խոր թմբրութենէ իմմէ։ Բարե-
րար փրկիչ իմ Յիսուս, լցո մար-
դասիրութեամբ քով զայն՝ որ
պակասէ ինձ։ Տուր աղքատիս
զգալ յանձնին ի սուրբ հաղորդու-
թեան զջերմաշերմ սէր քո, զի
հաւատք իմ առաւել զօրացին,

սարակ եւ առանձինն, եւ վասն
խաղաղութեան հոռվեհական որբոյ
Եկեղեցւոյ :

Ամենակալ եւ բազումողորմ
Տէր, պարզեւեա մեզ զինդութիւն
եւ զիաղաղութիւն քո, ուղղու-
թիւն վարուց, ժամանակ ճշմարիտ
ապաշխարութեան, զշնորհս եւ
զմիթարութիւն Հոգւոյն որբոյ,
Հսնապազրդութիւն ի գործս բա-
րութեան, սիրտ զզջացեալ եւ խո-
նարհ, եւ երջանիկ կատարած կե-
նաց. ամէն:

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ՅԵՏ ՊԱՏԵՐԱԳԻ

Հետաշունչ. Ոիրելի՛ Յիսուս, ըն-
տրեալ ի բիւրաց, յորում յանկայ
անձն իմ բնակել զամենայն աւուրս
կենաց իւրաց: Ով Աստուած ծած-
կեալ, որոյ խօսք բնդ խօնարհս են:
Ո խաղաղաբար իմ, յորում է կա-
տարեալ խաղաղութիւն եւ հան-
գիստ ճշմարիտ: Բա՛բէ. քանի ան-
պատում են շնորհք քո: Զի՞
պանչելի է խօնարհելոք քո առ իս:
Ո նորանշան եւ անբաւ սիրպու:
Որպէս զի մեծ է քաղցրութիւն
կոչնաց քոց, Յիսուս. եւ քանիօն
քաղցր է ինձ հեղաւ արտասուս
առաջի քո ի խորաց սրտի իմոյ, եւ
ընդ Մագդաղենացւոյ որբոյ թա-
նալ արտասուօք զոտո քո: Յի-
րաւի պարտ էր ինձ իբրեւ զիարպակ
լուցանել առաջի քո եւ սրբոց
Տրեշտակաց քոց, եւ առ ինդու-
թեանն արտասուս արկանել: Ո՛հ,

Նմա զանձն իմ ծառայ հաւատարիմ. ամէն:

Աղջիւ առ ամենայն սուրբն: Երանելի սուրբը Աստուծոյ՝ որք հատեալ անցէք զծով մահկանացութեան մերս, եւ անկասկած էք այժմ յանանց փառս, աղէ խնամկալարուք ինձ ի բազմապատիկ աղեաս իմ. ձեռն տաք ինձ, ովք քաղաքիք երկնաւորն հայրեննեաց, եւ յարուռջիք զանկեալս; զի ողջացեալ ի հիւանդութեանց իմոց եղէց զօրաւոր ի պատերազմի: Հայեցարուք առ իս, ով ժողովուրդը ընտրեալ եւ ժառանգքը Աստուծոյ բարձրելոյ, որ գեռ եւս ի պանդընտութեան աստ գեգերիմ, եւ առաքեցէք ինձ ի բարձրանց օգնութիւն եւ միխթարութիւն: Զօրացուցէք զիս՝ որ տրախ լինիմ ընդ երանութիւն ձեր, եւ ինդրեցէք վասն իմ չնորհս նմանող լինելոց առաքինութեանց ձերոց, զի եւ յանափի կեանս հաղորդ եղէց ուրախութեան եւ պսակի ձերում. ամէն:

Կապարած աղջիկ: Արդ արձակես գծառայս քո, Տէր Յիսուս, ի խաղաղութիւն. մի ի բայեայ առնիր յինէն, Տէր Աստուծո: իմ: Կայեաց յօդնել ինձ, Տէր փրկութեան իմոց, ի յառնելի վերայ իմ պէսապէս խորհրդոց, եւ ի տագնապել զիս այլեւայլ փորձութեանց: Տուր ինձ մարտնչել առանց վերս առնեց, եւ լինել նոցին գեր ի վերոյ: Մարտիր ընդ իմ եւ հան փախստեայ ի սրտէ իմմէ զար զաղմնսն զհրապուրիշ ցանկութիւնս: Սաստեա հոգմոց եւ ալեաց, ասա ծովուն թէ Կարկեաց, եւ հիւսիսոյ թէ Մի չնչեր, եւ զիցի խաղաղութիւն մեծ: Օրն հնեա եւ սուրբ արտ զիս երկնաւոր օր հնութեամբ: Պարսպեալ պահեա զհոգի ծառայի քոյ յայսշափ վիշտս վատանգի ապականացու կենացս, եւ առաջնորդեա ինձ չնորհաք քսվք ընդ ձանտապարհ ու զիզի հայրենիս մշանջենական երանութեան. ամէն:

ՈՒՐԲԱՇ

ՅԵՌԱՋ ՔԸՆ ԶՊԱՏՄՐԱԳ

ԽՆԴՐԵԼ ՀՆԴՐՀՆ : Տէր Առառուած իմ, որ վասն փրկութեան աշխարհի ծնար, թլիքատեցար, անարդեցար ի Հրէից, ի նենդաւորն Յուգայէ համբուրիւ մատնեցար, կապանօք կապեցար, իբրեւ զոչնար անմեղ ի սպանդ վարեցար, ածար անարդութեամբ առաջի Աննայի, կոյիիափայ, Պիլատոսի եւ Հերովդի, ի սուտ վկայից չարախօսեցար, թրշնամնօք անարդեցար, թուք ընդերեսս ընկալար, փշովք պսակեցար, կովեցար, խարազանօք եւ եղեկամբ ատնջեցար, մերկացար ի հանդերձից, բեւեռեռեցար ի խաչի, ընդ աւազակս համարեցար, արբեր լեղի եւ քացախ եւ տիգաւ խոցեցար, — կամեաց՝ աղաչեմ զքեզ, սրբել զիս ի մեղաց իմոց վասն սուրբ չարչարանաց այսոցիկ զօր ես անարժանս ի միտոս իմ յեղեղեղմ, եւ

յաղագս սրբայ խաչի եւ մահու քոյ՝ յորպ յիշատակ ընծայելոց եմ քեզ զպատարագս զայս, զի սրբութեամբ եւ արդարութեամբ կացից առաջի սեղանոյ քոյ. որ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն սրբայ կենդանի ես եւ թագաւորես յաւիտեանս. ամեն:

ԶԿՂԱՋԻ: Բռաղմագնթ Տէր, արարիչ եւ փրկիչ իմ, ցաւիմ ի սրտէ, զի երբեմն թշնամնեցի զքեզ՝ զոր պարտեի սիրել առաւել քան զամենայն, զի բարի ես ի վեր քան զընաւ, եւ բազում երախտիս ցուցեր առ իս: Այլ վայ ինձ չուառական եւ ապախտաւոր մեղաւորիս, որ հատոցի չար՝ փոխանակ բարուոյ:

Տէր, քաւիչ լիր մեղաց իմոց, զի հաստատութեամբ գնեմ արդ ի մտի ոչ եւս վշտացուցանել զքեզ, եւ ի բաց փախչել յամենայն առթից մեղանչելոց: Ցանկամ ընդունել զիսոր հուրդուրդս զայս, զի ի սերքոյ հաստատեցայց եւ ամրացայց յերեսաց պատճառաց մեղանչելոց, զի դու յիս իցես եւ ես ի քեզ:

Աւագինութեան։ Ով անեզը իշմասութիւն, ով յաւիտենական ճշմարտութիւն, ով անբաւ բարութիւն՝ որ ոչ խաբիս եւ ոչ խաբել կարես. հաւասամ ի քեզ եւ յայն ամենայն՝ զոր դու յայտնեցեր, եւ զորսի ձեռն Եկեղեցւոյ առնես ինձ առաջի ի հաւատալ. Հաւատամ եթէ կասդու ի սուրբ խորհրդեանս յայսմիկ, այնու՝ զի դու ինքն հաստատեցեր զայն յայտնի բանիւք՝ զորս քան զմիտս իմ եւ քան զամենայն հաւատափա զզայտթեանց առաւել հաւատարիմ համարիմ. ի վերայ այսր հաւատոց եւ մեռանել եւս պատրաստ եմ շնորհօք քովք։

Յուսամ ի քեզ, ով անսահման բարութիւն, եւ վստահ եմ եթէ տացես ինձ անչափ սզորմութեամբ քավ շնորհս, զթողութիւն մեղաց եւ զփառս յաւիտենական։

Ով անսպաս աղքիւր բարեաց, սիրեմ եւ սիրեցից զքեզ եւ զամենայն զոր սիրես՝ վասն քո, զի դու միայն արժանի ես ամենայն սիրոյ։

Խնդամ ընդ քո անբաւ կատարելսութիւնդ, ընդ երանութիւնդ ընդ քաղցրութիւնդ, ընդ պաշտամունս, գովութիւնս եւ փառու՝ զորմատուցին քեզ ցայժմ եւ մատուցեն ընդ բնաւ յաւիտեանս ընտարեալք քո եւ համօրէն արարածք։ Քեզ եւ քոյ հաճոյիցդ եղեց յամենայնի ի խնդիր, եւ յուսով, սիրով եւ աստուածպաշտութեամբ մեծարեցից եւ փարեցայց զքեւ։

Ի քեզ միայն կամիմ ըլջել յայսմ հետէ զյօժարաւթիւնս հոգւոյ իմոյ, ի բաց բարձեալ զնոսին յարարածոյ։ Կամիմ զի նեղութիւնք եւ վիշտք իմ՝ զորս վըշտացայց երբեք, դարձցին ի քո փառս։ Քո եմ ամենեւին, արալնդ իս զոր ինչ եւ կամիս այժմ եւ յաւիտեանս. ամեն։

Ո-դիւ դէբասութուննեն։ Ի գով վեստ եւ ի փառս սրբոյ Երրորդութեան, ի յիշատակ կենաց, շարչարանաց, մահու եւ յարութեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի,

վասն գործոց եւ արժանեաց նորա
եւ սրբոց, ի փառաւորութիւն ե-
րանելոյ կուսին Մարիամայ, հրեշ-
տակաց երկնից եւ ամենայն սրբոց՝
մատուցանեմ այժմ եւ հանապաղ
զայս եւ զայլ ամենայն պատարագո,
զպաշտամունս, զաղօթս եւ զբարի
գործս բովանդակ աշխարհի միաւ-
որեալ զնոսա ընդ գործութիւնս,
ընդ խնդրուածս եւ ընդ արժանիս
ոգւոյն երանելեաց վասն այժմու
եւ հանգերձեալ կարօսութեանց
հոգւոյ եւ մարմնոյ իմոյ, յօդնու-
թիւն եւ ի սփոփանս տկարութեան
իմոյ, ի թողութիւն մեղաց իմոց՝
յորոց վերայ զղանամ եւ ցաւիմ
յամենայն անձնէ իմմէ. վասն փրչ-
կութեան ծնողաց իմոյ, ազգակա-
նաց, բարեկամաց, թշնամեաց, բա-
րերարաց, եւ վասն այնացիկ զրս
զայրացուցի, գայթագուցի եւ
սրբոց ետու պատճառս մեղանչելոց.
վասն ամենայն աստիճանաց նուի-
րապետութեան կաթողիկէ սրբոց
Եկեղեցւոյ, ի պահպանութիւննու-

ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՊԱՏԱՐԱԳ 123

յա եւ ի յառաջադիմութիւն, յա-
ղագոքիստոննեայ իշխանացն միու-
թեան, վասն ջնջման հերետիկո-
սութեանց, վասն ազատութեան
ոգւոյն՝ որ ի քառարանի, վասն կե-
նաց մեծի Քահանայապետին, վասն
պահպանութեան եւ ամման վա-
նական կարգաց, վասն գարձի եւ
փրկութեան ամենայն հաւատից,
վասն ամենեցուն՝ որ յանձն եղեն
յաղօթս իմ. եւ վասն ամենայն կեն-
դանեաց եւ ննջեցելոց՝ վասն սրոց
պարտիմ աղօթս եւ պատարագո
մատուցանել: Սմին իրի պաղատիմ
առ քեզ, Տէր, եւ զսոյն օրինակ
կամիմ եւ դնեմի իսկ ի մտի ես ան-
արժանս պաղատել եւ պատարագո
մատուցանել ըստ մտաց կաթողիկէ
սրբոց Եկեղեցւոյ: Յանուն Հօր եւ
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոց. ամէն:
Պաղատանէ առ Հոգին սսրբի:
Առորբ Հոգիդ Աստուծոյ, Հոգի
շնորհաց եւ ողսրմութեան, մատ-
չիմ արդ ի սեղանն սուրբ, ի տեղի
ահագին, այլ քանզի չեմ կարող

առ անց քո՞ այնպէս պաշտել զիսր-
հուրդո զայս, մինչեւ լինել քեզ
հաճայ, աղաւեմ զքեզ՝ պատրաս-
տեա զփրտ իմ գործակցութեամբ
շնորհաց քոց, զի արժանապէս
մատուցից զպատարագո: Եկ մուտ
ի սիրտ իմ եւ յարդարեա քեզ
արժանի տեղի բնակութեան: Եկ,
որբիշդ անօրէնութեանց, բուժիչ
վիրաց, եկ, սուրբ Հոգի, եւ բարձ ի
հոգւց իմին որ ինչ անհաճոյ թուի
յաջս քո եւ Հօր եւ Որդւց: Լից
զիս մեծադին պարզեւոք շնորհաց,
զինցին օգնականութեամբ ձեռն-
հաս եղեց որբութեամբ պատարագո
մատուցանել եւ կեալ կեանս ըստ
կամաց Տեառն իմոյ Յիսուսի:

Առ երանելի Կոյս: Մեծապայ-
ծառ Մայր Աստուծոյ՝ Կոյս Մարի-
ամ, գու ես բովանդակ յոյս եւ
միայն միսիթարութիւն թալացեալ
հոգւց իմոյ, աղաւեմ զքեզ, հա-
ճեաց կալ ի ժամաւ յայսմիկ առ
թշուառական մեղաւորիս՝ որ ըն-
ծայելոց եմ Հօր զնուիրական մար-

մին եւ զարիւն Որդւց քոյ, զոր օ-
րինակ կացեր սիրով եւ ցաւովք
առ Որդւց քում մինչ կախեալ
կայր զիսաշէ յորժամ մատուցա-
նէրն անձամբ զանձն պատարագ-
վան մերոյ փրկութեան: Մի ան-
տես ասներ զիս, Մայր ողորմու-
թեան, վասն անհանգուրժական
զազբութեան մեղաց իմոց. մի գար-
ձուցաներ կերեսս քո յինէն, զի
Աստուածորդիդ քո այնպէս սի-
րեաց զիս, մինչ զի եւ մեսանել
վասն իմ յանձին կալու:

Առ Առաքես: Վմենայն սուրբք
Աստուծոյ, որ վայելեք յերկինս
յերանական տեսլեան, եւ օրհնեք
զնա՝ զօր մեք այժմիկ ընդ կերպա-
րանօք հացի եւ զինւոյ եւ ընդ
հայելի օրինակաւ եւ եթ տեսա-
նեք, ինդրեցէք վասն իմ շնորհոյ
զի վարեցայց արժանապէս կենա-
րար խորհրդեամբս այսուիկ, եւ ե-
ղեց երբեմն հաղորդ փառաց ձե-
ռոց. ամէն:

ՈՒՐԲԱՌ

ՅԵՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ: Ո՞վ քաղցր Յիսուս, զի՞նչ
կայ իմ բնաւ յերկինս, եւ բաց ի
քէն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի:
Այս, անթերի են իշլք եւ անհիալ
ուրախութիւն սրտի իմոյ, զի ունիմ
զքեզ՝ զըսութիւն ամենայն բա-
րեաց եւ ըղձից: Հար, Տէր, զփա-
փաք սրտի իմոյ ծարաւելոյ, վա-
ռեսջիր զցրաւութիւն իմ հրով սի-
րոյ քոյ, լուսաւոր արա զկուրու-
թիւն իմ՝ լուսով մօտաւորութեան
քոյ: Դարձն ինձ զամենայն եր-
կրաւորս ի գառնութիւն եւ զենաւ
արարածո եւ զդուզնաքեայ իրս ի
մոռացնս եւ յարհամարհութիւն:
Ուզգեա զսիրտ իմ առ քեզ յեր-
կինս, եւ մի թողուր զիս ընդ եր-
կիր քարշել: Տուր զի զրութիւն
խորհրդեանս այսորիի թափ ընդ
սիրտ իմ անցանիցէ, մեռուցէ եւ
խլեսցէ արմատաքի որ ինչ դուցէ

յիս յոռի եւ ախտաւոր: Ի քեզ
միայն, քաղցր Յիսուս, է բովան-
դակ բերկրութիւն իմ: տաղոտուկ
թուի ինձ ամենայն արախութիւն
առանց քո, եւ գտաւն՝ բնաւ հան-
գիստ որ չէ ի քեզ: Ծագեսջիր
յիս, ողորման Տէր, զճառագայթոս
սիրոյ քոյ, զի բորբոքեսցեն զիս եւ
այցեալ ծախսեսցեն որ ինչ կայցէ
յիս երկրաւոր, եւ այնպէս մեռցի
յիս հին մարդն գործովք իւրավք
հանգերձ: Երանի թե յափշտա-
կեսցէ զիս զօրութիւն հրեղէն սի-
րոյ քոյ, զի շավեսցէ եւ ընկլմեսցէ
զիս ի քեզ եւ անձկագոյնս ընդ
քեզ զօդեսցէ:

Աէք: Ո՞վ Աստուած իմ, սիրեմ
զքեզ, այլ ոչ եթէ յայն սակա
միայն զի փրկեսցես զիս, կամ զի
մի՞ եթէ զքեզ ոչ սիրիցեմ՞ ի
հուրն յաւիտենական մատնեսցես
զիս: Գու, Յիսուս իմ, իսպատ մի-
րեցեր զիս ի խաչի, այնու զի յան-
ձին կալար զեւեռս, զուեզ, ան-
հնարին թշնամանս, անհամար

ցաւս, քրտունս, նեղութիւնս եւ զմահ, եւ զայս ամենայն վասն իմ, եւ վասն իմ մեղաւորիս: Զիարդ ապա ոչ սիրեցից զքեղ, անձկալի՛ Յիսուս, թէպէտ զիս յերկինս ընկալցիս, թէպէտ յաւիտեանս պարտաւոր առնիցես զիս: Սիրեմ եւ սիրեցից զքեղ՝ որպէս գու սիրեցեր զիս, զի գու ես թագաւոր եւ Աստուած իմ: Ա. Փրահ. Քոռ-էր:

Ծնորհակալութիւն: Պահանամ զքեն, սուրբ Հայր ամենակալ, Աստուած յաւիտենական՝ որ հաճեցար յագեցուցանել զմեղաւոր եւ զանպիտան ծառ այ քո պատուական մարմնով եւ արեամբ Որդւց քոյ Յիսուսի Քրիստոսի, ոչ վասն արժանեացինչ իմոց, այլ յաղագս անշափ ողորմութեան քոյ: Պաղատիմ առ քեզ, Տէր, մի լիցի սուրբ հաղորդութիւնս այս ինձ ի գատապարտութիւն եւ ի պատիմ, այլ միջնորդ կենարար ի թաղութիւն, զին հաւատոց, վահան բարեսէր կամաց, բժշկութիւն ախտից իմոց,

շար ցանկութեան ջնջումն, սիրոյ, համբերութեան, խոնարհութեան, հնազանգութեան եւ ամենայն առաջինութեանց աճումն, ամուր պաշտպանութիւն ի գարանակալալութեանց թշնամեաց իմոց երեւելեաց եւ աներեւութից, կատարեալ խաղաղութիւն շարժմանց իմոց մարմնաւորաց եւ հոգեւորաց, ընդ քեզ, ով ծշմարիտ Աստուած, աներաժին միութիւն, եւ ելից իմոց երջանիկ կատարած: Խնդրեմ ի քեն, Հայր սուրբ, արժանի արագիս զմեղաւորս մեծապայծառ կոշնոց՝ ուր ընդ Որդւոյ եւ սրբոյ Հորդւոյն՝ սրբոց քոց լոյս ես ծշմարիտ, յագուրդ յաւիտենական, ցնծութիւն եւ երանութիւն կատարեալ ի Քրիստոս Յիսուս ի Տէրմեր, ամէն: Ա. Թոռլ. Ակո-հայութ:

Նուրիել Հօր Աթրէ է-ր: Ա-այ-եաց, Տէր, յերեսս Քրիստոսի քոյ: Բարեկ սըանչելեացս. միածին Որդի քո այնպէս հաղորդեաց ինձ զանձն, որպէս զի նա յիս բնակեացէ եւ ես

ի նմա. որով եղեւ նա ընդ իս մի, եւ ես մի ընդ նմա: Մատուցանեմ զնա քեզ, Հայր սիրելի, ի հոտ անուշից, յառաւելագոյն փառս քո, ի չնորհակալութիւն վասն անհամար երախտեաց քոց, ի թողաւթիւն մեղաց իմոց եւ ամենայն աշխարհի: Ազաւեմ զքեզ, Տէր, տուր ինձ եւ ամենեցուն՝ որոց վասն պարտիմ աղօթս մատուցանել, զամենայն որ ինչ կարեւոր է ի ժամանակաւոր եւ յաւիտենական կեանս, եւ հանդիստ ամենայն հաւատացեալ հոգւոց ննջեցելաց: Ընկալ, Տէր, ընդ սուրբ զսհիս այսմիկ զհոգի եւ զմարմին իմ, զզօրութիւնս եւ զյօժարութիւնս իմ, լինել ինձ մշտնջենաւոր ողջակեզ առաջի մեծվայելչութեան քոյ: Տուր ինձ յայսմ հետէ վարել զիեանս իմ եւ զմիտու, զկարողութիւնս եւ զանդամն իմ ի սէր քո եւեթ եւ ի ծառայութիւն քո:

Հապուցումն նշանաց: Ո՛ մեծի համբերութեան քոյ, Յիսուս,

որ ծանունս թշնամնիս միշտ ի խորհրդեանս յայոմիկ. ատեամ եւ գարշիմ ճշմարտիւ յամենայն արհամարհանայ որովք արհամարհեցին զքեզ մեղաւորք: Պաղատիմ առ քեզ վասն զթոյ մարդասէր սրտի քոյ, զի ընկալցիս վասննոցա թողութիւն յերկնաւոր Հօրէն քումէ: Վառեսնջիր յիս, Յիսուս, կենդանարար գալստեամբդ քով եռանդումն մեծ, զի սկսայց լալ առանց գադարելց զսեղանազերծ անօրէնութիւնս՝ ոբք ցայս վայր գործեցան, եւ զորս յեւ այսորիկ գործելց իցեն՝ ջանացայց ամենայն փութով խափանել:

Պաղատանս: Ողսրմած Տէր իմ Յիսուս, կեցուցիչ նետ առառածեղէն սիրոյ քոյ թափ անցցէ ընդ աղիս եւ ընդ խորս սրտի իմոյ, որպէս զի միշտ սիրովդ միայն ծախեցայց, փափաքեցից առ քեզ եւ ընակեցից ի գաւիթս քո՝ ցանկացեալ ելանել աստի եւ լինել ընդ քեզ: Արա, աղաւեմ, զի քեւ

քաղցեայց, ով հաց հրեշտակաց,
կերակուր հոգւց, հաց մեր հա-
նապազորդ, հաստատուն կերա-
կուր՝ յորում ամենայն անուշու-
թիւն եւ բնաւ ճաշակք քաղցրու-
թեան զեղեալ գտանին։ Քեւ՝ յոր
հայել ցանկան հրեշտակք՝ քաղ-
ցեայց, եւ ճաշակեցից զքեզ՝ զի
լցցին խորք սրտի իմց մարդասէր
խնամնվք քովք։ Ծարաւեաց տո-
քեզ հոգի իմ, ով աղքիւր կենաց
եւ իմաստութեան, աղքիւր յաւի-
տենական լուսոյ, ծով ամենայն
բարութեանց, պարարտութիւն
տան Տեառն, դիետ քո պնդեցայց,
քեզ եղէց ի խնդիր եւ հասեալ
ըմբնեցից։ Զքէն խորհեցայց եւ
խօսեցայց, եւ արարից զամենայն ի
գովնատ եւ ի փառս անուան քոյ՝
խոնարհութեամբ, զգօնութեամբ,
սիրով, ուրախութեամբ եւ խօսառ
համբերութեամբ։ Դու հանապազ
եղիցես իմ յոյս, փրկութիւն,
վաստահութիւն, մեծութիւն, ու-
րախութիւն, խաղաղութիւն, քաղ-

ցրութիւն, հոս անուշութեան,
կերակուր, նորոգութիւն, տեղի
ապաւինի, օգնութիւն, իմաստու-
թիւն, բաժին ժառանգութեան
եւ գանձ իմ, յորում եւեթ ան-
շարժ հաստատեացին միտք եւ հո-
գի իմ. ամէն։ Ա. Բառակարութեան։
Խնդրուած վասն պէտոյէց այլոց։
Վմենակալ Տէր, Հայր Յիսուսի
Որդւոց քո օքնելց, որ լսեսզայ-
նոցիկ որք ճշմարտութեամբ կար-
գան առ քեզ, եւ ճանաչես եւս
զինդրուածս որոց լսւոն կայցեն,
գոհութիւնս մատուցանեմք քեզ,
որ արժանի արարեր զմեզ հաղոր-
դել աստուածեղէն խորհրդոց քոյց,
դել աստուածեղէն խորհրդոց քոյց,
զորս ետուր մեզ՝ զի ծանիցուք զբա-
նիցն՝ որոց աշակերտեցաք ճշմար-
տութիւն, ի զգուշութիւն աս-
տուածպաշտութեան եւ ի թողու-
թիւն մեղաց. քանզի անուն Յի-
սուսի Որդւոց քոյ կոչեցեալ է ի
վերայ մեր։ Դու որ զատուցեր զմեզ
ի կցորդութենէ անօրինաց, մի-

աւորեսջիր բնդ նուիրեալմն քեղ,
ամրացո զմեղ գալստեամբ Հոգւցին
սրբոյ յայտնեա մեղ զորս ոչն
գիտեմք, լոր զամենայն որ պակա-
սէ մեղ, եւ զոր ճանաչեմքն դրոշ-
մեա ի մեղ: Զգուշացո զերիցունա
լինել անըստգիւտո եւ անպար-
սաւս ի պաշտաման իւրեանց, պա-
հեա զթագաւորս ի խաղաղու-
թեան, զտեսուչս քաղաքաց յարդա-
րութեան, ամոքեա զօդս, ածեցս
զարդիւնս երկրի. դու վարեա զաշ-
խարհս ամենակալ տեսչութեամբ
քով, ած ի հաշտութիւն զազդս
պատերազմնզս, դարձո զմոլորեալս,
սուրբ արա զժողովուրդ քո, պա-
հեա ի զգաստութեան զկուսանս,
տուր հաւատարմութիւն ամուս-
նացելց, զօրացո զայնոսիկ որք նոր
սկսեալ իցեն, ուստ զերախայս, եւ
ժողովեա զմեղ զամենեսեան յար-
քայութեան երկնից, ի Քրիստոս
Յիսուս ի Տէր մեր. ընդ որում
քեղ եւ Հոգւցին սրբոյ վայելն
փառք, իշխանութիւն եւ պատիւ

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս.
ամէն:

Յանչն արա ուեղ երանելւոյ Կու-
մէ: Մարիամ Մայր Աստուծոյ,
Կոյս սուրբ, թէպէտ եւ անարժան
եմ ես ծառայել քեղ, սակայն
վստահ լեալ յողորմութիւն մայ-
րենի որոտի քոյ, ընտրեմ այսօր
առաջի պահապան հրեշտակի իմոյ
եւ առաջի ամենայն երկնաւորն
քաղաքացեաց զքեղ ինձ ի մայր,
ի գշխոյ եւ ի բարեխօս. եւ զնեմ
յայսմ հետէ ի մտի ծառայել
հաւատարմութեամբ քեղ եւ Որ-
դոյ քում եւ միանալ ընդ ձեղ
յաւիտեան:

Խնդրեմ ի քէն, Մայր սուրբ,
վասն սիրոյն որով Որդիկ քո՝ ի
մեռանել իւրում ի խաչին, զհոգի
իւր ի ձեռս Հօրն, եւ զքեղ սիրելի
աշակերտին իւրում եւ զնա փու-
խանակաւ քեղ յանձն արար, զի
Հոգասցիս զինէն եւ ձեռնտու լի-
ցիս ինձ յամենայն վասնդս եւ ի
նեղութիւնս կենաց իմոց, եւ ա-

ռաւել եւս ի ժամու մահու իմոյ.
ամէն:

Կադարած աղբնէց: Այս մնա առ
իս, քաջզր Յիսուս, կարկառ ինձ
զբարերար ձեռն քո, եւ հան ի
գլուխ զգործ փրկութեան հոգւց
եւ մարմնոյ իմոյ: Հեռացո յինէն
զգարանակալութիւնս թշնամեաց.
ի բաց փախիցեն յերեսաց զօրու-
թեան քոյ, զի ամրացեալ ներքոյ
եւ արտաքոյ՝ ուղիղ ճանապարհաւ
հասից յերկնից արքայութիւն քո.
ամէն:

ՃԱՐԱԹ

ԵՅՍՈՒՏ ՔԵՆ ԶՊԱՏՄՐՍԳ

ԵՐԻՒ ՊՐԻ: Երկիր պագանեմ
քեզ յամենայն անձնէ իմնէ, Աս-
տաւած՝ երեք յանձինս եւ մի յե-
ռութեան, եւ քեզ, Տէր Յիսուս
Քրիստոս՝ ճշմարիտ Աստաւած եւ
Մարդ, խաստովան լեալ կենդանի
հաւատովկը՝ եթէ դու միայն ես
արարիչ, փրկիչ եւ վերջին վախճան
իմ: Այլ քանզի պաշտօն ծառայ-
ութեանս իմոյ գոյզն ինչ է եւ ոչ
արժանի մեծվայելլութեան քում,
նուիրեմ քեզ փոխանակ այսր
զպաշտամունսն զայնոսիկ՝ զորս մա-
տոյց քեզ սուրբ մարմնաւորութիւն
քո եւ փառաւորեալ մայր քո Կոյս
Մարիամ, ամենայն հոգիք եր-
կնաւորք եւ հարսն քո կաթողիկէ
սուրբ Եկեղեցի: Ա. Փրանչ. Սովու:

Գործ սէրոյ: Այրեմ զքեզ, Տէր,
յամենայն սրուէ, յամենայն անձնէ
եւ յամենայն զօրութենէ իմնէ,

եւ յանկամ սիրել զքեզ ի վեր
քան զամենայն ինչ . եւ եթէ հնար
ինչ էր՝ նովին կատարեալ սիրով,
որով սիրես գու անձամբ զանձն եւ
որով սիրեն զքեզ սուրբ մար-
մաւորութիւն քո եւ փառաւո-
րեալ Կոյսն Մարիամ, դասը երա-
նելեաց եւ սուրբ կաթողիկէ Եկե-
ղեցի: Ս. Փրանչ. Սովոր:

Զգլուհն: Տէր իմ, անսահման
բարի, իմաստուն, հզօր, արդար
եւ ոպրմած, ցաւ է ինձ ի սրտէ,
եւ ի վեր քան զբնաւ տաեամ ա-
տելութիւն մեծ զամենայն մեզ
իմ զմահուշախո եւ զներելիս՝ զորս
զիտութեամբ, բանիւք եւ ար-
դեամբ գործեցի, եւ այն՝ յառա-
ջին վայրկենէ յորում բանաւորու-
թեամբ վարեցայ մինչեւ ցայս վայր:
Մատուցանեմ քեզ փոխանակ ան-
կատար ցաւոց իմոց՝ զզղումն սառ-
տիկ զոր զջջացան երանելի մարգա-
րէն Գաւիթ, սուրբ Պետրոս, սուրբ
Մարիամ Մագդաղենացի եւ ամե-
նայն ճշմարիտ ապաշխարողք ի

սկզբանէ աշխարհի մինչեւ ցայժմ,
եւ գնեմ ի մտի օդնականութեամբ
առառածեղին շնորհաց քոց ոչ
այլ եւս յայսմ հետէ վշտայսւցա-
նել զքեզ: Ս. Փրանչ. Սովոր:

Հայոց ցուհն: Տէր Աստուած,
քանզի չեմ ձեռնհաս աննել հա-
տուցումն այնչափ պարտեացն՝ զորս
մեզը եւ թշնամանօք իմովք
յանձն ձգեցի, նուիրեմ քեզ ի
հատուցումն նոցին զբովանդակ
կեանս իմ, զամենայն գործս, զենաւ-
աշխատութիւնս, զնեղութիւնս եւ
զցւու՝ զոր ցայժմ կրեցի եւ յայսմ
հետէ կրելոց իցեմ, խառնեալ զնո-
սին ընդ արժանիս կենաց, չարշա-
րանաց եւ մահու միածնի Արգւոյ
քոյ: Խնդրեմ ի քեն խսնարհու-
թեամբ զթողութիւն յանցանաց
իմոց եւ զարդիւնագործ շնորհս, զի
յառաջ քան զօր վախճանի իմոյ ճըշ-
մարտիւ ապաշխարեցից: Ս. Փրանչ.
Սովոր:

Ընծայել շնչն: Մատուցանեմ
քեզ, Տէր, պատարագաւու այսուիկ

զանձն իմ ի պատիւ եւ ի փառո
քս, խառնեալ զայն ընդ վառեալ
սիրոյ եւ ընդ յատակ դիտաւորու-
թեան՝ որովք գու ետուը մեզ ի
յետին ընթրիս դքեղ գլուզին ի
կերակուր, եւ ի սեղանի խաչին
զզոհն արիւնալից մատոցեր վասն
մեր: Ընծ այէմքեղ փոխանակ ան-
կատար պատրաստութեան եւ այժ-
մու դոյջն եռանդանս իմոյ վեսնաբ-
հութիւն Մօր քս եւ ամենայն
ծառայից քսոց, եւ զնոցին զսրբու-
թիւն եւ զսէր՝ որովք մատչէին ի
սուրբ խորհուրդն դոհութեան, եւ
որովք զարդարեալ առաքելոցն եւ
որբոցքահանայից՝ մատուցին քեղ
զահագին պատարագս զայսի ժամա-
նակէ անտի հաստատութեանն մին-
չեւ ցայժմ, եւ որովք պաճուճեալ
կաթողիկէ առորբ Եկեղեցին ուղիղէ
քեղ զզոհն զայս ընդ ամենայն տե-
ղես: Ա. Փրահ. Սուլէլ:

Ունէլ դիրառութունիւն: Հայր
յաւիտենական, մարդառէր Հայր
ողսրմութեանց, ընկալ այսօր ի ձե-

ռաց ծառայի քս զսուրբ պատա-
րագս զայս, զճշմարիտ մարմին եւ
զարիւն Որդւոց քս Տեառն մերոց
Ցիսուսի Քրիստոսի, ի հատուցումն
եւ ի թողութիւն մեղաց մերոց, ի
փրկութիւն եւ ի սրբութիւն հո-
գւոյ իմոյ եւ այնոցիկ զրոս յիշել
պարտական եմ. ի փրկութիւն ա-
մենայն հովուաց Եկեղեցւոյ արա-
րեալ զնոսին հաղորդս շնորհաց
Հոգւոյդ սրբոց, յուղեղ վարչու-
թիւն համօրէն ժողովրդեան քրիս-
տոնէից, ի գարձ ամենայն մեղաւո-
րաց աշխարհի՝ ածեալ զնոսա ի ճա-
նապարհն փրկութեան, ի մլիթա-
րութիւն սգաւորաց՝ տալով նոցա
օգնութիւն եւ ապաշխարութիւն.
ի սփափութիւն եւ յաղատութիւն
հոգւոց որ ի քաւարանի, եւս առ-
աւել յաղատութիւն այնոցիկ որք
յինէն իրաւամբք ակն ունին օգնա-
կանութեան. եւ գարձեալ ի լու-
սաւորութիւն եւ ի գարձ ամենայն
աղգայն անհաւասից, հերեսիով-
տաց եւ հերձածողաց, զի ծանի-

յեն զքեղ եւ սիրեսցեն, ով ճըշ-
մարտութիւն յատիտենական, Հայր
ամենակալ՝ սր ընդ Որդւոյ եւ Հո-
գւոյն սրբոյ ես Աստուած օրհնեալ
ի յատիտեանս. ամէն:

Առ Տէրն Գր Յիսուս Քրիստոս:
Փրկիչ իմ Յիսուս, վառեա զսիրտ
իմ հրով սիրոյ քոյ՝ զի հանից
քեղ զայն յոզդակէզ: Ծիծո յիս
գերկրաւոր սիրոյ զըսցո, որպէս զի
ոչինչ յաշխարհի իրաց համեսցէ
զանձն իմ արտաքոյ քան զքեղ: Ի
սէր քո կամիմ կեալ եւ մեռանել:

Գու, Յիսուս, հրաւիրես զիս
քաղցրութեամբ՝ զի ասես. Եկայք
առ իս ամենայն աշխատեալք եւ
բեռնաւորք, եւ ես հանդուցից
զձեղ, եւ տարածես զձեսս քո ի
խաչի առ փարելոյ զինեւ: Գամ
առ քեղ, սիրելի Յիսուս, ընկալ
զիս եւ շնորհեա՞ զի կապեալ սիրով
քով իրեւ շլժայիւք, կացից հա-
նապազ զօդեալ ընդ քեղ սիրով:
Գու հրամայես ինձ եթէ Մի երեւ-
եսցիս առաջի իմ դատարկածեան.

Աակայն զինչ տաց քեղ, ով քաղցր
Յիսուս: Ընկալ գու այդըէն զքոյին
բարերարութեան պարգեւս, զիա-
րողութիւնս ողւոյ իմց; զյիշատակ,
զմիտս եւ զկամս իմ՝ զորս նուի-
րեմ ի պաշտօն ծառայութեան
քոյ: Զքէն միայն կամիմ խորհնել,
եւ այլ ոչինչ գիտել՝ բաց ի քէն,
ոչինչ սիրել արտաքոյ քան զքեղ,
զի եղեցին յամենայնի կամք քո եւ
ոչ իմ. ամէն:

Առ Երանելի Կոյս: Ազաշեմ
զքեղ, սուրբ Կոյս Մարիամ, վասն
անարատ սրբութեանն՝ որով ի կու-
սական արգանդի քում արժանի
բնակութիւն Որդւոյն Աստուծոյ
պատրաստեցեր, սրբեա զիս խրն-
դրուածովք քովք յամենայն բծոյ:
Խնդրեմ ի քէն, գթած Կոյս,
վասն մեծի խոնարհութեան քոյ՝
որով գեր ի վերոյ քան զդասս
հրեշտակաց եւ որբոց վերացեալ
բարձրացար, լցո ազօթիւք քովք
զամենայն զթերութիւնս իմ:

Պաղատիմ առ քեզ, Մայր սիրելի,
վասն մեծի սիրոյ քայ որ անբաժին
զօդեաց զհոգի քո ընդ Աստուծոյ,
առ ինձ ի բարձրելոյն առատութիւն գործոց բարեաց:

Առ Սուրբս: Աղաչեմ զձեղ,
հրեշտակապետք, առթուք, տէրութիւնք,
իշխանութիւնք, կարողութիւնք,
զօրութիւնք երինց, սերովքեք եւ քերովք,
ամենայն ոռորքը Աստուծոյ,
եւ մանաւանդ գուք զուրց զաօն յիշատակի խմբեմք այսօր,
հասեք ինձ ի թիկունս խնդրուածովք ձերովք, զի հանապազօր մատուցից զսուրբ պատարագս զպս կենդանի հաւատովք, ջերմեռանդն սիրով եւ ճշմարիտ աստուածպաշտութեամբ, եւ ապա ուրեմն եղեց ընդ ձեզ ժառանդակից աւետեացն ի Քրիստոս Յիսուս ի Տէրմեր. ամէն:

ՇԱԲԱԹ

ՑԵՏ ՊԱՏԾՐՈՒՑԿԻ

Մէծարան: Ողջին քեզ, ճշմարիտ Մարիմին ծնեալ ի Մարիամայ կուսէ; որ չարչարեցար եւ զենարի խաչի վասն մարգկան. ողջին ընդ քեզ յորոյ ի կողեցն որ խոցեցան բնեաց արիւն եւ ջուր: Տուր մեզ ի գատաստանին՝ զոր գատիցիմք յետ մահու, առնուլ զսափ մեծի ողբարութեան քայ: Ով քաղցր Յիսուս, ով սիրելի Յիսուս, ով փրկիչ իմ Յիսուս՝ որդի Մարեմայ կուսի:

Ի՞նչ: Յիսուս իմ, զարմանան համօրէն արարածք, զի խոնարհեալ ի թեր յարգանդ Մարեմայ մօր քայ, թէպէտ եւ սուրբ էր նա եւ լի ամենայն առաքինութեամբք եւ չնորհօք: Հիանամ ընդ այն, զի կամեցար թէ ես աղքատս եւ տառապեալ ընկալայց զքեզ եւ պահեցից ի սրտի իմում:

Ուստի՞ է ինձ Տէր, Սուրբդ սրբոց,
զի համեցար բնակել յիս ի մե-
ղաւոր եւ յանպիտան ծառայ քո:
Ասմ էր արդեւք յօժարեցար պա-
տուել զիս՝ որ զայնչափ ժամանակս
եղէ անօթ աղտեղի, եւ կազմեալ
յարդարեցեր զիս քեզ տապանակ
կամ իբրեւ զտուփ մի նշխարաց
սուրբ մարմնոյ եւ արեան քոյ, որք
անհամեմատ ի վեր են քան զամե-
նայն նշխարս սրբոց: Օրհնեացեն
զքեզ հրեշտակք վասն մեծի պա-
տուոյն՝ որով փառաւոր արարեր
զիս: Եւ արդ՝ տուր զի այժմ եւ
հանապազ պահեցից զանօթ իմ ի
որբութեան եւ ի պատուի, եւ ոչ
յանարգութեան եւ ի կարիս ցան-
կութեան՝ իբրեւ զհեթանոսս որք
զԱստուած ոչ ճանաչեն:

Տուր ինձ, քաղցր Յիսուս, առ-
նուլ զփորձ զզօրութեան գալսո-
տեան քոյ առ իս: Յիշեա զօրհնու-
թիւսս որովք օրհնեցեր զայնոսիկ
որ եղեն քեզ երբեք վանասու։
Մարիամ մայր քո, լցաւ ամենայն

պարգեւօք շնորհաց, յորժամ տա-
րաւ զքեզ յիւրում արգանդի: Դու
Յիսուս, փրկեցեր զջակքէսս մաք-
սաւոր, յորժամ առ ընկալաւ զքեզ
ի տուն իւր, եւ յետ մահուն քոյ,
իջեր ի լիմպսս՝ շըջել զայն յար-
քայութիւն: Զտուն Աբեդդարայ
եւ զամենայն ինչ զնորա՝ վասն
տապանակին Աստուծոյ առատու-
թեամբ օրհնեցեր: Օրհնեա եւ
լոգւց իմց զտուն՝ յոր մտեր, եւ
փոխեսջիր զայն յարքայութիւն՝
լցուցեալ զիս Հոգւովդ քով որբով:

Յիշեա, մարդասէր Յիսուս, զայն
զրմէ աստուած ատաւը Գիբր նշա-
նակեն, եթէ ամենայն ժողովորդն
ինդրէր մերձենալ առ քեզ զի
զօրութիւն բազում ելաներ ի քէն
եւ բժշկեր զամենեսին: Եւ արդ՝
զիս լինիցի ընդ իս՝ որ ոչ հուպ
միայն եղէ ի քեզ, այլ եւ ընկալաց
զքեզ ի ներքս ի սիրա իմ: Ազա-
շեմ, Տէր, ելց ի քէն զօրութիւնն
այն աստուածեղեն՝ յողջացուցանել
զհոգի իմ, ի բժշկել զամենայն խօ-

թութիւնս եւ ի նորոգել զջօրու-
թիւնս նորա, որպէս զի կարող ե-
ղէց ծառայել քեզ սրբութեամբ
եւ արդարութեամբ զամենայն աւ-
սւրս կենաց իմոց:

Գոհութիւն. Ոիրելի Յիսուս,
քաղցրութիւն սրտից, կեանք հո-
գաց իմոց եւ հանգիստ մտաց իմոց,
դոհանամ զքէն ի վերայ ամենայն
երախտեացն զոր ցուցեր առ իս, եւ
մանաւանդ զի արժանի արարեր զիս
նուիրագործել եւ շօշափել զճը-
մարիս մարմին եւ զպատուական
արիւն քո, եւ նուիրել քեզ զայն
ի յիշատակ անշափ սքանչելի գոր-
ծոց քոց եւ ի պատիւ փառաց քոց,
ի թողութիւն ամենայն մեղաց իմոց
եւ այլոցն՝ որոց վասն պարտիմ ա-
զօթու եւ պատարագս մատուցանել,
եւ ձարակել հանապազ զհոգի
իմ կենարար ձարակաւն այնուիկի:
Սմին իրի համարձակիմ առել.
Յիսուս կերակուը իմ է եւ ես նո-
րա: Նորոգեմ արդ, եւ մինչեւ իցէ
իմ շունչ, նորոգեցից զդիտաւու-

րութիւն եւ զկամս իմ օրհնելոյ
զքեզ յաւիտեանս: Եւ գուք, ով
երանելի կըս, հրեշտակք, ուուրբք
եւ արարածք ամենայն, գոհասնիք
ընդ իմ զնմանէ յամենայն ժամ:
Այլ քանզի եւ նորա չեն լիով
բաւական այդմ, ինդրեմ ի քէն
զի հաճեսցիս անձամբ անձին շնորհս
ունել, օրհնել եւ փառաւորել
զքեզ: Եւ զի յանձին կալար յար-
դարել զիս զանարժանս ի բնակու-
թիւն քո, յօժարեաց եւս առնել
յանդ առ իս օթեւանս: Արա զիս
այր ըստ սրտի քում, զօդեա զիս
ընդ քեզ ի ներքուաս, եւ քո արա
զիս ամենեւին: Կեցո զիս, Տէր իմ
Յիսուս, եւ փարատեա յինէն վասն
ուուրբ չարչանաց քոց՝ զամենայն
չարութիւն հնոյ օձին՝ որ գարանա-
կալ լինի մեզ: Ոյնպէս աղաչեմ
զքեզ, տալ ինձ եւ ամենայն կեն-
դանեաց եւ ննջեցելոց զնորհսն
եւ զներողութիւնս՝ զորս պատարա-
գաւոս այսուիկ եւ հալորդութեամբ
շահել կարեմ: Պաղատիմ առ-

քեզ, Տէր իմ Տէր, եւ վասն այնուցիկ զրս կամիս գու եւ քահանայապեան մեր կամի՝ զի յիշեցից յաղօթս իմ, ամէն:

Հայր մեր: Ողջոյն քեզ:

Նո-էրո-ն անչին եւ ինդրո-սծու: Խըրկիր պատանեմ եւ չնորհ ունիմ քեզ, մարդասէր Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի համեցար ընդունել զիս զանարդ մեղաւորս ի կենարար կոչունս գոհութեան խորհրդոց քոյ: Վայ ինձ, եղուկ եմ ես. ո՛հ, քանի անհրժանութեամբ մատուցիցայժմ զսուրբ պատարագս: Ողսորմեա եւ չնորհեա ինձ ներել թողութեան: Յանձն առնեմ մասուածեղէն որըտի քում՝ զի յարդարեալ ուղղեացես զոր ինչ եւ զործեցի: Ընկալ, աղաչեմ, զսուրբ խորհուրդս մարմայ: Եւ արեան քոյ՝ զրս այժմա ընծայեցի քեզ, ի մշանջենաւոր փառս անուան քոյ, ի պատիւ երանելոյ կուսին Մարեմայ մօր քոյ, ի գովեստ ամենայն սրբոց քոյ եւ հրեշտակաց երկնից, ի փրկութիւն

իմեւ ամենայն հաւատացելոց կենդանեաց եւ նսջեցելոց: Ընկալ, բազմագութ Տէր, զսուրբխորհուրդս զայս ի քաւութիւն ամենայն մեղաց եւ անհոգութեանց իմոց, եւ ի հատուցումն մեղաց ամենայն աշխարհի, եւ տուր կատարեալ ուղղութիւն վարուց իմոց:

Հաստատեա եւ կանգնեսջիր զիս, Տէր, կենարար զոհիւս ի հոգեւոր կործանմանէ իմմէ, եւ լոյ զակէտս աղքատութեան իմոց: Սովաւ մեռս յիս որ ինչ միանգամ անհանց իցէ յաշ քո, եւ արա զիս այր ըստ սրտի քում: Սովաւ կերպարանակից արա զսիրա, զհոգի եւ զմարմին իմ սրտի, հոգւոյ եւ մարմնոյ պահնչելի մարմնաւորութեան քոյ, եւ լուսաւորեա զիս լուսով Աստուածութեան քոյ: Տուր ինձ փոփոխել յայր յայլ, ի քեզ հաստատեալ կալ, սիրել զքեզ կատարելապէս, եւ հանապազօր միանալ ընդ քեզ ի ներքուառ՝ ի փառս անուան քոյ սրբոյ, որ կոչեցեալ է ի վերայ մեր:

Դարձու, Տէր, զթշուառական մեշտաւորսի ճանապարհն փրկութեան, կոչեա զհերետիկոսս եւ զհերձուածոլու, լրտուորեա զանհաւատսո որ զքեզ ոչ ճանաչեն. ձեռն տուր ամենեցուն կարօտելոց եւ վլտացելոց, եւ օգնեա որոց յանձն եղեն յազօթս իմ: Լեր օգնական ծնողաց, մերձաւորաց եւ բարերարաց իմոց՝ կենդանեաց եւ ննջեցելոց: Ողըմեա ամենեցուն՝ որոց վասն պարտիմ աղօթս մատուցանել. տուր կենդանեաց թողութիւն եւ չնորհս. տուր հոգւոյն որ ի քաւարանի զհանգիստ եւ զլոյս յաւիտենական: Գոհութիւն քեզ, Տէր Յիսուս, յաւիտեանս ժամանակաց:

Խոնդուած+ Հասն մեղլուռքաց: Աստուած յաւիտենական՝ հաստիչ ամենայնի, յիշեա զի դու ստեղծեր զհոգիս մեղաւորաց, եւ արարեր զնոսա ըստ պատկերի քում եւ ըստ նմանութեան: Մի լոցին, Տէր, սոքօք դժոխք, քանզի այդ թշնամանք են քեզ: Յուշ լիցի քեզ, զի

Յիսուս միածին քո վասն նոցա փրկութեան մեռաւ զանագործյն մահ խաչի: Խնդրեմ ի քէն, Տէր, մի թողուր զի եւ յայսմ հետէ հանապարզեալք յանօրէնութիւնս իւրեանց՝ առ ոտն կոխեսցեն զՈրդի քո զՓրկիչն ամենեցուն: Հաշտեաց ընդ նոսա, զթած Հայր, խնդրուածովք սրբոց քոց եւ սրբոյ Եկեղեցուոյ հարսին Որդւոյ քոյ, եւ յիշեսն ջիր զողորմութիւնս քո՝ որ ենն յաւեխտենից: Արկ ի մոռացօնս զանհնազանդութիւնս եւ զպատուիրանազանցութիւնս նոցա, եւ չնորհեա զի ապա ուրեմն ի բոլոր սրտէ իւրեանց գալրձցին առ այն՝ զոր ցայժմ անարդեցին, առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որում վայելեն փառք ընդ անսպառ յաւիտեանս. ամէն:

Աւ ո՞ո՞է՞ ի՞յս Մոբիւ՞մ: || Բաւական իցէ, Աստուածամնցը Մարիամ, քեզ արժանի գոհութիւնս մատուցանել եւ փառաւորել զքեզ, որ սքանչելի հաւանու-

թեամբ. քով փրկեցեր զաշխարհս՝
որ կորուսեան էր: Որպիսի՞ մեծա-
րանք մարթիցի մեծարել զքեղ
տկարութիւն մարդկեղէն ազգի, որ
միջնորդութեամբ քով միայն եզիս
զմուտ ի ճանապարհն փրկութեան:
Ընկալ արդ, անարդամեծար կոյս,
զդոյզն չնորհակալութիւնս մեր, որը
ոչինչ իւիք համեմատ են քոյ ար-
ժանեացդ, եւ յլնդունել քում
զիղձս մեր՝ անտես արա զյանցանս:
Նայեա հաշտ ակամք յաղաշանս
մեր, եւ չնորհեա մեզ զդրաւական
հաշտութեան: Քեւ արդարացին
դործք մեր՝ զոր քեւ սկսաք, ունին
դիր ամենայնի զոր հաւատովք
ինդրեմք ի քէն. ընկալ զոր քեզն
նուիրեմք, պարզեւեա մեզ վասն
որոց թափանձեմք զքեղ, ազատեա
զմեզ յորոց երկնչեմքն, զի դու միայն
ես յոյս մեղաւորաց: Ի քէն ակն
ունիմք թողութեան՝ անօրէնու-
թեանց մերոց, եւ քեւ միայն, երա-
նելի Մայր, յուսամք ընդունել
զարձս վաստակոց մերոց: Սուրբ

Կիյս Մարիամ, օգնեա տառապելոց,
ձեռն տուր տկարաց հոգւովլ, զօրացո
զյողգողդեալս, աղաչեա վասն Ժո-
ղովուն ան, պահեա ընդ հավանեաւ
քով զուիսի մանկունս, բարե-
խօս լեր վասն բարեպաշտն կա-
նանց, եւ որք կատարենն զժիշտակ
քո սուրբ, ամենեքին առցեն զչոր
օգնականութեան քոյ զտափ: Ս.

Ա-Դ-Շ-Ա-Վ-Ի-Ն-Ա-:

Ա-Ս-Ս-Ր-Բ-: Ա-մենայն սուրբքը եւ
ընտրեալք Աստուծոյ, հայեաջիք առ-
իս՝ որ այժմս արժանի եղէ հայե-
ցուածպ աչաց ձերոց: Խօսեաջիք
զինէն ի բարութիւն առ բարձրեալն
թագւարոք՝ որ համեցաւ յագեցու-
ցանել զիս մարմնով եւ արեամք
իւրով, եւ մատուցէք նմա զարժա-
նիս ձեր փոխանակ անկատարու-
թեանց իմոց: Դուք ձեղէն գոհա-
յարուք զնմանէ ընդ իմ, եւ հայ-
ցեցէք ի նմանէ՝ զի մինչ չեւ իցէ օր-
հնեալ զսոգի իմօրհնութեամբ իւ-
րով մեծաւ, մի բարձցէ յինէն զետր-
հրոգական մօտաւորութիւն իւր:

Կապարած ողբենից: Առաքեա առ
մեզ, ամենակալ Տէր, զօգնութիւն
աստուածեղէն շնորհաց քոց, զի
որք զքահանայական պաշտօնս ըն-
կալաք՝ բաւական լիցուք ծառայել
քեզ հանապազօք ամենայն սրբու-
թեամբ եւ երկիւղածութեամբ
սրտից մերոց: Եւ եթէ չեմք կարող՝
որպես պարտիմբն, հասանել յայն
չափ անմեղութեան, տուր մեզ գո-
նեայ լալ արժանապէս զշարիմն
զոր գործեցաք. զի հոգւով խոնար-
հութեամբ, եռանդմամբ եւ յօժար
կամօք ձեռնհաս լիցուք պաշտել
զքեզ զամենայն աւուրս կենաց
մերոց. ամէն:

ՄՏԸՆՃՈՒԹԻՒՆՔ ՀԱՄԱՊՈՅՏՔ

ՊՐԵՆ ՀԱՐՑԱՐԵԱԱՑ

ՏԵՇԹՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ԳՐԻՍՏՈՒ

ԽԵՐԵՒ ՊԵՏՐԵՍՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԵՏՐԵՍԴԻ
Վ.ԾՈՒ ԻՆՔԵՔՆՉԻՆԻ ԸՆՈՒՐ ԶԱՐՅԱԹՈՒ

Ա. ՄՏԱԾՈՒԹԻՒՆ
ՎԱՅՐՆ ԿԻՒՐԱԿԵՒ

ՑԵՍԱՀ ԵՐԵՎԱՆ ՇՆԴ ԱՐԱՎՈՅ ԲՆԱԿԵՄԱԿ
ԷՐԵՎԱՆ, ՀԻՄԱՆԿ Եւ ԽԱՊԵՏ:

Ղիտեր Ցիսուս ի պարտիզե
անդ, զի թշուառական Ցուգաս
սպասաւորօքն հանդերձ հասեալ
էր ունել զնա եւ մատնել ի մահ.
սակայն ոչ ինչ սպասեալ մնայր
թշնամեացն առ ինքն գալց, այլ
ինքնին երթայր ընդ առաջ նոցա
տալ զանձն իւրովի ի ձեռս նոցա:
Ի քիրան համակեալ էր Կենարարն
մեր ի ճգնութենէ անտի մահու՝
զոր ի լերինն ձիթ ենեաց կրեաց:
Բայց սիրա նորա այրեալ տոշորէր
ի սիրոյն օր առ մեզ, եւ առ ցան
կութեանն չարչարելց վասն. մեր
խորովէին իմն աղկը նորա: Վասն
այնորիկ իսկ ցաշակերտու իւր՝ որ ի
քունթանձրութեան ննջէին, ասէր.
Օ՞ն՝ արիք գնասցուք զի ահաւասիկ
մերձեցաւ՝ որ մատնելոցն է զիս:

Բաքէ, քանիօն մեծ էր, փրկիչ իմ, յանկութիւն քո մեռանելց վասն մեր, զի ինքնակամ դիմագրաւ ի ցաւս մահուն եւ խաչի դիմեցեր: Աւասիկ, Յիսուսիմ, մատչիմ եւ ես արդ ի սեղան քո՝ նորոգել միւս անդամ զպատարագ խաչի՝ զոր դու երբեմն ի լերին Գողգոթայ մատուցեր: Ցաւ է ինձ ի բոլոր սըրտէ, զի զքեզ արհամարհեալ անարդեցի, որ այնպէս խանդակաթես սիրով իմով, մինչեւ որոշել զիս յայնչափ բիւրուց մարդկանէ՝ լինել քեզ ի քահանայ: Որ յառաջն ի բաց գնացեալ էի ի քէն, այժմիկ ոչ ինչ այլ իմիք այնպէս ցանկամ, որպէս պնդագոյն ի քեզ յառել: Աղաչեմ թախանձանոք զի հաճեսցիս, մինչ ընկալեալ իմ զքեզ այսօր ի սիրտ իմ, շնորհել զներել թողութեան յանցանաց իմոց, որովք ածի զքեզ ի ցասումն. զի արդ ես իսկ զամօթի հարեալ գարշիմ ի նոյցանէ: Փարելի ասեմ, ո Յիսուս, ոէր իմ Յիսուս:

զի այլ եւս վշտացուցից զքեզ: Սիւրեմ զքեզ, Յիսուս իմ, որ առ գութ թշուառական մեղաւորիս մեռար ի խաչափայտի. սիրեմ զքեզ, Աստուած իմ, որ անբաւ սիրոյ ես արժանի. սիրեմ զքեզ մի միայն բարութիւն իմ, եւ առ սէր քո Հրաժարիմ յամենայնէ: Աստուած իմ եւ ամենայն ինչ. դու միայն արժանի ես գրաւելոց զիս ամենեւին:

Հայր յաւիտենական, նոուիրեմ զպատարագս զայս՝ զոր մատչիմ այժմ մատուցանել, ի գոհութիւն քեզ վասն ամենայն շնորհացն եւ պարգեւաց, զոր շնորհեցեր Տեառն մերում Յիսուսի Քրիստոսի իբրեւ մարդոց, երանելոյ եւ միշտ կուսին Մարեմայ, եւ ամենայն սըրբոց եւ պաշտպանաց իմոց: Քեզ յանձն առնեմ զգլուխ բովանդակ Եկեղեցոյ Միածնի քոյ՝ զքահանացապեան մեր. ի քեզ առնեմ ապաստան ինամել զիշխանս պետութեանս, զջնողս եւ զամենայն աղ-

գականս իմ, զբարելրարս, զբարելիամս եւ զթշնամիս եւս զիմ: Քեզ յանձն առնեմ դարձեալ զամենայն անհաւատս, զհամօրէն հերետիկոսս եւ զբնաւ մեղաւորս՝ որ կեան կեանս ի քում թշնամութեան. փարատեա զնաւար մտաց նոցա եւ լուսաւորեա զնոսս. ձգեա առ նոսս զբարերար ձեան քո, զի ի թշնաւական պայմանէ անտի կենաց ապրել կարող լինիցին: Եւ ինձ՝ որ յուսամ ի մարդասիրութենէ քումէ, թէ ընկալեալիսկ եղէ ի չնորհս քո, պարգեւեա զհանճապալորդութիւն սուրբ: — Ո! Մարիամ՝ մայր հանապազրութեան, մի երբեք դադարեսցիս աղաւել զՅիսուս վասն իմ, զի ցանդ միում իմիք ուշ արարից, այս է սիրելց զՅրգիք քո, որ զանձն վասն իմ կամակար մատնեաց ի շարչարանս:

Բ. Մ Տ Ը Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՎԱՅՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹՈՒ

ՅՈՒՆԱ ՅԱՆԴԻ ԲԱՆ ԱՌՆՔ ԿԱՍՏՈՒԴՅԱ Է Ա
ՔԱՐԱՊՈՐԴԻ Է ԲԱՆ:

Խբրեւ չգտանէր անօրէն քահանապեան զիկայիցն չարախօսութիւնսն բաւականս առ ի հտառանել զիշիռ գատապարտութեան ի վերայ անմեղ Տեառնն, այնու հետեւ ջանայր ի նորին իսկ բանիցն Յիսուսի որսալ ինչ, զի պարտաւորեսցէ զնա: Յայն ասկս հարցանէր զնայանուն Աստուծոյ Երբմինեցուցանեմ զքեզ յԱստուծենդանի, զի ասացես մեզ՝ թէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ, Յայնժամ՝ քանզի յանուն Աստուծոյ Երբմինեցոյց զնա, տայր նմա պատասխանի Յիսուս եւ ասէր յայտ յանդիման զՃշմարտութիւնն. «Դու ասացեր թէ ես եմ. բայց տեսանիցէք զըրդի մարդպահութեալ ընդ աջմէ զօրութեանն եւ եկեալ ընդ ամպս երկնից, Զօր լուեալ կայիհափայ՝ «Պատառեաց վաղվաղակի զպատմուճանն իւր եւ ասէ.

զի՞նչ եւս պիտոյ ենմեղ վկայք. ահա
լուայք ամենեքին զհայհցութիւնի
բերանց դորա,,,: Ապա առ քահա-
նայսն իլթէր զբանն. Զիարդի թուի
ձեզ, ասէ: Եւ ամենեքին առանց ինչ
ընդ միտս ածելց՝ լրտութեամբ մե-
ծաւ պարտաւորեցին զնա՝ թէ մա-
հապարտ է: Այլ բարձէ. վաղ ուրեմն
հատեալ էր վճիռ դատապարտու-
թեանս, յորժաման յանձն Յիսուս
ընդունել յիւր վերայ զպատիժ պա-
տուհասի օր վասն մերսց մեղացն պա-
հեալ կայր: Ո սիրելի եւ քաղցր Յի-
սուս, անբաւ գոհութիւնն մատու-
ցանեմ քեզ եւ սիրեմ զքեզ յա-
մենայն սրտէ:

Եթեւ վճիռն անօրէն տոււաւ ընդ-
դէմյաւ իտենական խմասութեան,
անդէն ի նմին իսկ դիշերի՝ ամե-
նեքին մոլեգնեալք գործես մրցե-
ին ընդ միմեանս չարչարել զՏէրն:
Ոմանք պիղծ բերանով թոքս ընդ
նորանուի բական երեսոն արձակէին,
կէսք կոմիկն, այլք ապատիս նմա-
հանէին եւ արհամարհէին զնովաւ՝

իբրեւ զստով մարգարեկւ. “Մար-
գարեաց մեզ, Քրիստոնագ, ավ է որ
եհարն զքեզ,,,: Յոր եւ զայն զայս
յաւելու աւետարանազիրն Մար-
կոս, թէ զպաց եւ անարդ ցնցուեազ
ծածկէին զսուրբ զլուխ նորա եւ
հարկանէին մի ըստ միոջէ:

Ո Յիսուս իմ, որպիսի գտոնաւ-
գառն վշտաց եւ արհամարհանաց
տարար վասն իմ, զի թշնամանացն՝
որովք թշնամանէալ վշտացուցի
զքեզ արասցես հատուցումն: Սիրեմ
զքեզ, ո անսահման բարութիւն,
ցաւ է ինձ ի վեր քան զամենայն,
զի անդունեցի զքեզ, որ կենարար
իմ ես: Ծնորհեա ինձ թողութիւն,
եւ պարգեւեա ինձ շնորհս, զի յայսմ
հետէ քու զէց ամենեւին: Քու եւ թ-
կամիմ լինել. այլ քո գործ է հաս-
տատուն գործել զայս կամ իմ, զի
արդեալը իսկ համաց այնմա որում
ցանկայ սիրտ իմ: — Քեզ, ո Մա-
րիամ, բարեխօս եւ յոյս իմ, քեզ
անդ է ընդունել զայդ վասն իմ
յԱստուածորդւոյ քումէ սիրելոյ:

Գ. Մ Տ Ա Ֆ Ո Ւ Թ Ի Ի ՞Ն

ԱՐԵՎԱՆԻ ԵՐԵՔՇՎԵԲԱԹՈՒ

Յիշու անորդի է Հերուկրե եւ է Հուր
+ ան զբարտոբբս հոմարի:

Իբրեւ այդ եղեւ, ածին Հրեայք
Չիսուս առ Պիլատոս, զի պար-
տաւորեցի զնա եւ տացէ սպանա-
նել. եւ այնպէս բարձրի յերկրէ յի-
շատակ նորա: Եւ նորա հաւաստեա-
քննեալ զամենայն վեասո՝ զոր զնո-
վաւ արկանէին, առնէր պատասխա-
նիթէ չգտանէ ինչ պատճառ ո գա-
տապարտելց զնա. “Ես եւ ոչ մի
ինչ պատճառ գտանեմ ի նմա,,,:
Այլ զի զանձն ի մոլեգնութենէ
քահամայիցն եւ ժողովրդոց թա-
փեցէ, որ պնդեալ յամառեալ
կային թէ սպանցի Յիսուս. մանաւ-
անդ զի խելամուտ եւս եղեւ թէ
Գալիլեացի է Յիսուս եւ յիշնանու-
թենէ Հերովդի, ետ տանել զնա
առ Հերովդէս: Սա ցանկայը յոյժ-
տեսանել զՅիսուս, քանզի ակն
ունէր հասաւատութեամբ թէ եւ

առաջի իւր նշան ինչ ի նշանայն
ցուցանիցէ, զորոց լուեալ էր ի
բազմաց խօսելցյ: Իբրեւ ածին կաշ-
ցուցին առաջի նորա զՏէրն մեր,
հարցանէր զնա բանիք բազմօք. այլ
Յիսուսը լուս եւեթ կայլ: Յայն սակա
պյափանեաց զնա Հերովդէս զօրակա-
նօքն հանդերձ. եւ այնու հետեւ
ամենեթին առ յիմարս ունէին զնա:
Բայց յառաւել ծաղը եւ ի կատա-
կանս Յիսուսի, Հրամայէր Հերով-
դէս հանդերձս սպիտակս արկանել
զնովաւ. եւ առաքէր զնա անդրէն
առ Պիլատոս, “Աքհամարհեաց զնա
եւ Հերովդէս հանդերձ իւրովք
զօրականօքն, եւ այպն արարեալ արկ
զնովաւ հանդերձս սպիտակս, եւ
ետ տանել անդրէն առ Պիլատոս,,,:
Ապա ուրեմն կարի յիրաւունս
մարդարէայաւ վասն քո Եսայիհաս,
ո անմեղ Յիսուս, թէ յերկրի աստ
դնացին ընդքեզ մարդիկ իւրեւ ընդ-
տան որ յետին եւ նուազեալ իցէ
քան զամենայն որդիս մարդկան:
Այլ քանզի, գու Կենարար իմ եւ

Ասառւած իմ, ցայդ վայր վասն իմ
արհամարհել առեր յանձն, դնեմ
եւ եսի մտի գիրկս արկանել արհա-
մարհանացն, որ ի մարդկան կուսէ
հասանիցեն ի վերայ, եւ մի այլ եւս
վասն նոցա զայրանալ, որպէսցայժմ
արարի եւ ածի զքեղ ի ցասումն:

Բարեկ անամօթութեան եւ հի-
քութեան Հերովդի: Նորա շարու-
թեան մեղ էր, զի եւ խօսելոյ ան-
գամ ընդ նմա շարալ զնա արժանի:
Ո՛ Յիսուս իմ, կարի քաջ արժանի
եմ ես, զի մի այլ հաղորդութիւն
բանից ընդ իս ունիցիս եւ լքեալ
թողուցուս զիս ի ձեռանէ. այլ
քաւ քեղ Տէր առնել զայն բան.
զի զի՞նչ լինիցի կատարած իմ թէ
անջատեցայց ի քէն. ողորմեա ինձ
եւ խօսեաց ընդ իս. “Խօսեաց,
Տէր, զի լուիցէ ծառայ քո”, Ար-
դարեւ ցայս վայր ոչ կամեցայ քոց
բանիցդ ունին մատուցանել, այլ՝
քանզի սիրեմ զքեղ, խոստանամ
յայսմ հետէ ճշգրտագոյնս նոցին
հնաղանդել, եւ ոչ եւս ընկրկել

ի գժուարութեանց: Ասա, Տէր,
զոր ինչ յինէն կամիցիս, զի պատ-
րաստ եմ առնել զամենացն: Տէր
Աստուած իմ, երբ այն ժամ իցէ,
յորում քո եղէց ամենեւին եւ ոչ
իմ: Հաստատեալ գնեմ ի մարի
մի այլ եւս կալ հակառակ քաղցր
կոչման քում: — Սուրբ կոյս Մա-
րիամ, ապաւինիմ յամենազօր բա-
րեխօսութիւն քո. ինդրեմ ի քէն՝
աղաչեա զՈրդին քո առնել ընդ
իս ըստ հաճոյս իւր:

Պ. Մ Տ Ա Ճ ॥ Ի Թ Ի Ի Ն

ՎԱԽՆ ԶՈՐԵՔՇԱԲԱԹՈՒ

Յէսուս Քառանկէ եւ Քառէ պատի:

Պիղատոս քաջ ճանաչէր զան-
մեղութիւն Յիսուսի, բայց զի Հրէ-
իցն ընդ միտ մատանիցէ եւ կատա-
րիցէ զհաճոյս նոցա, հրաման տայր
դան հարկանել զնա. քանզի այ-
սուիկ ակն ունէր գոնեաց ի մա-
հուանէ փրկել զնա:

Յանձին կալաւ Յիսուս տանել
անհնարին տանջանաց ձաղանացն,
զի քաւեսցէ եւ արացցէ հատու-
ցումն մեղաց, զոր մեքն գործեմք
զգայնովք: Այսպէս կատարէր բանն
որ յառաջադոյն ի բերանոց մարդա-
րէին ասացաւ, թէ “Նա վիրաւորե-
ցաւ վասն մեղաց մերոց, եւ պատ-
ժեցաւ վասն մերոց անօրէնու-
թեանց”:: Ապա ուրեմն ես ինքն
էի, ո Փրկիչ իմ, որ զնուիրա-
կան մարմնն քո մեղօք իմովք պա-
տառեցի. եթէ սակաւ ինչ եր իմ
մեղուցեալ, յայնժամ եւ տան-
ջանք քո թեթեւագոյն լինէին:
Սիրեմ զքեզ, բարձրագոյն բարու-
թին, եւ ցաւ է ինձ յամենայն
սրտէ, զի զքեզ այնչափ գորովեալ
անպատճեցի:

Հըեայք անադորոյնք՝ որ շուրջ
պատեալ էին զՅիսուսիւ, իբրեւ
զուարակիք բազումք եւ ցուրք
գէրք, որպէս ասէ սաղմոսանուագ
մարդարէն, չհամարեալ բաւա-
կան զլկանսն՝ որովք լլկէին զնա,

Դրգուէին զդազանամիտ սպասաւ-
որսն կապել պասկ վշեայ ի նուի-
րական գլուխ Ամենատեանն, եւ
այսպն առնել զնա իբրեւ զթագաւոր
սուս: Արդ սկսանէին ի բաց ձգել
բուռութեամբ զհանգերծո նորա, որ
մածեալ կարեալ էին ամենեւին
ընդ մարմինսն, արկանէին զուսովք
նորա քզամիդ կարմիր, ապյին ի
ձեռն եղեցն իբրեւ գաւազան ար-
քունի, յետոյ ուրեմն խուրձն ինչ
յահազին փոսց կապէին ի գլուխ
նորա: Այս, սիրելի Փրկիչ իմ Յի-
սուս, խոսուովան լինիմ միամիտ
սրտիւ եթէ մեղանչական հաւա-
նութիւնք իմ՝ էին փուշքն այնու-
քիկսայրասուրք՝ որ սաստիկցաւովք
ծակէին զգլուխ քո: Այլ սցծմիկ
գարշիմ ի նոցանէ, եւ ատեամ
զնոսա ատելսաթիւն մեծ ի վեր
քան զամենայն ինչ: Յայնժամ,
ասէ աւետարանիչն, “Ի ծունը
իջեալ ասածին նորա՝ կատակէին եւ
առէին, ողջ եր թագաւոր Հըեայք:
Եւ հանէին նմա ապասկա”:: Ո՛Յի-

սուս, այս՝ տեսանեմ զքեզ լեռլ
թագաւոր ծաղու եւ վշաաց. այլ
եւ այնպէս չկամ յետո ի ճանաչելոյ
զքեզ՝ իբրեւ զմարիտ թագաւոր
իմ եւ զՏէր. գոհանամ զքէն եւ
սիրեմ զքեզ առաւել քան զամե-
նայն ինչ: Խանդակաթ եմ ի սէր
քո, ցանկալի Ցիսուս, որ առ սէր
իմ ձաղկեցալ եւ փշովք պսակեցար:
Արա, աղաւեմ, զի մերժեցայց կա-
մակար յամենայնէ՝ յորում չգուցեն
աստուածեղէն կամք քո, եւ ոչ այլ
ինչ սիրեցից արտաքսյ քան զքեզ:
— Մարիամ Աստուածամայր, աղա-
ւեա վասն իմ զՑիսուս:

Ե. Մ Տ Ա Ֆ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Վ.Ա.Ս. ՀԱՆԳՃԱԲԱԹՈՒ

Պիլուր յանակ պէտու ժողովրդան
եւ ուկ “Ահա այրու ցնել”:

Յետ ձաղկանացն ածին զՑի-
սուս միւսանդամ առ Պիղատոս,
որց տեսեալ զմարմին նորա պա-
տառեալ ի վիրաց անտի, խորհէր

ընդ միտո թէ ի գութ խանդալա-
տեսցին արդեւք Հրեայքն, եթէ
յայն ողբրմելի կերպարանս յանդի-
ման արասցէ զնա նոյա: Վասն այ-
սորիկ ել Պիղատոս ի պատշգամն
Յիսուսիւ հանդերձ որ ունէր պսակ
ի փոց եւ հանդերձ ծիրանի, եւ
ասէ յնոսա. “Ահա այրդ ցձեզոյ”:

Ամբարձ, անձն իմ, զաշս քո,
ամբարձ եւ հայեաց ուշի ուշով ի
պատշգամն անդր, տես զկենարարն
քո. ած միանդամ զմտար քովլթէ
յոր չափս խանարհեալ էջ սիրելի
Հավեն քո, զի զքեզ զոշնարդ՝ որ
կորուսեալ էիր փրկեսցէ: Ո Ցի-
սուս իմ, գոհանամ զքէն յամե-
նայն սրտէ: Զողորմութիւնս քո,
Տէր, օրհնեցից յաւիտեան:

Սակայն եւ այնպէս ոչ միայն
շշարժէր ի գութ ժողովուրդն Հրեաց
խասապարանոյաց, այլ եւ զաղա-
ղակ բարձեալ գուշէր. “Ի խաչ հան,
ի խաչ հան զդաս,, Բայց Պիղատոս
խնդրէր միշտ հնարս ապրեցուցա-
նել զնա, զի դիտէր թէ անմեղ է.

այլ նոքա առաւել եւս աղաղակէին,
թէ սբարձ ի մէնջ, բարձ ի մէնջ,
եւ հան զդա ի խաչ,,:

Ո՞Յիսուս, կամեցայ եւ ես երբեմն
իւիք ինչ իրօք զի մեռցիս դու եւ ի
միջոյ ի բաց բարձգիս, յորժամ հա-
լածական առնեի զքեղ ի հոգւոյ
իմմէ: Այլ դու ոչ ինչ հայեցեալ
ընդապախտաւորութիւնիմ, ետուր
վասն իմ զկեանս քո ի խաչափայ-
տի, զի թողցես ինձ զյանցանս իմ:
Ցանկալի փրկիչ իմ Յիսուս, ճանա-
չեմ զանիրաւութիւնս իմ՝ որովք
անիրաւեցայ ի քեղ եւ կամէի մե-
ռանել իսկ առ ցաւոց:

Ցաւ է ինձ ի բոլոր սրատէ, ո ան-
սահման բարութիւն, զի երբեմն
առ ոչինչ գրեալ անպատուեցի
զքեղ. այլ այժմիկ սիրեմ զքեղ
ի վեր քան զամենայն, եւ քան
զերկնից եւ զերկրի զհամօրէն բա-
րութիւնս՝ առաւել պատուակ ան
հաշուիմ զնորհս քո: Եւ առ ինչ
արդեւք օդափցեն ինձ բարիք ասափ
կենացս, եթէ ի քոց շնորհայդ-

վրիպեցայց: Աիրեցեր դու զիս, եւ
այն՝ ցմահ խաչե. կամիմ եւ ես
ցորոշումն հոգւոյ ի մարմնոյս սիրել
զքեղ: Պարզեւեա ինձ, պաղատիմ
առ քեղ խոնարհութեամբ, զհա-
նապաղորդութեանն զառաքինու-
թիւն եւ զսերքու սուրբ: Տուր զի ի
սակաւ աւուրս՝ զոր մնայ ինձ կեալ,
ի բաց փախեայց յորոգայթից՝ ու-
րովք անհաճոյ յաշս քո գտանիմ,
եւ ոչինչ այլ իմիք այնպէս ուշ
արարից, բաց զքեղ սիրելոյ:

Ո՞ անդին արիւն Յիսուսի իմց,
արբեցոս զիս ամենեւին սիրով քով:
Ո՞ մահ Յիսուսի իմց, մեռս յիս
զսեր ամենայն իրաց երկրաւորաց:
Փրկիչ իմ անձկալի, փրկեա զիս ի
դժոխոց՝ որում բազում անդամ
արժանի զանձն կացուցի: Բարէ,
յորպիսի թշուառութիւն կամսկար
զանձն իմ իշուցի, զի ի դժոխս ան-
մարթ էր ինձ այլ եւս սիրել զքեղ,
այլ հանդերձեալ էի անդէն անի-
ծանել անձամբ զանձն, եւ զպա-
տուական արիւն քո, զմահ քո եւ

զամենայն շնորհս՝ զորս ետուք ինձ:
Այլ քաւ յինէն, Յիսուս, առնել
զայն ամենայն. սիրեցից զքեզ, եւ
սիրեցից զքեզ միայն: Պարզեւեա
ինձ շնորհս բորբոքելոց ի սէր քո,
եւ արա ընդ իս որպէս եւ կամիս:

Ո՛ Մարիամ, մայր մեղաւորաց,
օգնեա եւ ինձ մեղաւորիս՝ որ ըն-
թացեալ ապաւինիմի քեզ, հաս-
տատեալ ի մտի սիրել զԱստուած:
Դու ունին մատուցանես ամենե-
ցուն որ առ քեզ պաղատիցին, լուր
եւ աղաչանայ իմոց առ սէր Յիսու-
սի Քրիստոսի: Որդւց քոյ, զորմէ
այնպէս սաստիկ կաթողի ես:

Զ. Մ Ց Ե Ւ Ո Ւ Թ Ւ Ւ Ն

Յէսէս բարուպարուի Պիլատուի է յահ,
Եւ բայց բերէ բառ է-ը է լուս-
գութեան:

Բազմի Պիլատոս յատեան՝ ի
դատել, եւ ի մահ խաչի պարտա-
որէ զՅիսուս: Ընթերցան զվճիւն

որ տուաւ ի Պիլատոսէ, զայն՝ զոր
կանիսաւ ուրեմն հատեալ էր Հայոց
յաւիտենական, որ կամէր ընդ մե-
ռանել իւրոյ Միաձնին վասն մերոյ
փրկութեան: Իբրեւ լուաւ Յիսուս
զվճիւն, անձնատու բամենեւին յաս-
տուածեղէն կամս, ընկալաւ զայն
խոնարհ հպատակութեամբ, զի իւ-
րով մահուամբ զմեզ ի յաւիտենիցն
մահուանէ որում արժանի իսկ
եղեաք, յաղատաթիւն հանել մար-
թացէ: “Խոնարհեցոյց զանձն, լի-
եալ հնազանդ մահու չափ, եւ
մահու խաչի,,:

Ո՛ Փրկիչիմ ցանկալի, դու յան-
ձին ունիս մեռանել զմահ խաչի,
զի ինձ զյաւիտենից կեանս շնոր-
հիցես: Եթէ չէր քո մեռեալ յիմ
վերայ, վազու եւս արդեւք կիրու-
սեալ էի յաւիտեանս: Ծնորհ ու-
նիմ քեզ, սէր իմ: մահ քո՞յ յայս
եւ ակնկալութիւն իմ է: Եւ արդ
քանզի դու, Աստուած իմ, առ սէր
իմ եւ ի մահ իսկ եկիր ինքնակամ,
ընդունիմ եւ ես առ սէր քո զմահ,

որպէս ինչ քեզ հաճոյ իցէ. թէ-պէտ յայս ինչ կամ յայն ինչ ժա-մու, թէպէտ այսու կամ այնու օ-րինակաւ, թէպէտ եւ վշտօք եւ լլիկանօք ածիցես զայն ի վերայ իմ: Աղաչեմ զքեզ, մարդասեր Յի-սուս, տուր ինձ չնորհս, զի ի մա-հիճս անդ ցաւոց եւ մահուն միում իմիք ուշ արարից, այս է՝ ուրախ առնելոյ զքեզ եւ զքո կամս կա-տարելոյ:

Ամբարձ, անձն իմ, զաշս քո եւ տես զՅիսուս՝ որ ելանէ յապարա-նիցն Պիղատոսի եւ բարձեալ քերէ յուս իւր զփայտ խաչէ. հայեաց քանիօն սիրով գէմ եգեալ է ելա-նել ի լեառն Գողգոթայ, ի տեղին՝ ուր եւ ի խաչ խակ հանգերձեալ են հանել զնա:

Նայեաց արդ ուշի ուշով ընդ մեծ եւ զարմանալի անցս, որոց չեղեւ երբէք ականատես աշխարհ, եւ ոչինչ նոյնպիսի տեսանելոց է յառ յապա ժամանակս. զի Առ-տուած՝ Արարիշն ամենայնի մեռանի

յիւրոց արարածոյն վերայ: Ո՛ կեն-արար իմ Յիսուս, սէր հոգւոյ իմոյ, յո՞ ճեպեալ զնաս ընդ այս ճանա-պարհ, ոչ ապաքէն ի մեռանել վասն իմ: Ու կամիմ թողուլ զքեզ, կամիմ գալ զինի քո եւ մեռանել իսկ ընդ քեզ; Բարէ հիբութեան իմում, զի զայնչափ ժամանակս առ-սոն հարի զքեզ, եւ մեինեալ հիեռացյա ի քէն. այլ այժմիկ սի-րէմ զքեզ ի վեր քան զամենայն ինչ: Ստրջանամի բոլոր սրաէ վասն այնպէս անամօթութեամբ ի քէն ի բայ գառնալոյ, եւ խոստանամ քեզ Աստուած իմ, մի այլ եւս մինչեւ ցյեաին տուրեւաս չնչոյ իմոյ թո-դուլ զքեզ՝ զգլսաւորական բարու-թիւնդ: Գիրկս արկանեմ քեզ ջերմաջերմ սիրով, եւ ընդ քեզ միացեալ կամիմ կեալ եւ մեռա-նել: Պինդագոյնս ինդրեմ ի քէն, Աստուած իմ, մի երբէք յինէն զքո չնորհսադ բառնար: — Թափան-ձեմ եւ զքեզ, ո Մարիամ Առ-տուածամայր, որ եսդ պաշտպան

իմ եւ վահան ամրավթեան, մի
կար յետո ի լինելոց վասն իմ բա-
րեխօս:

Ե. ՄՏԱԾՐԱԹԻՒՆ

ԱՀԱՅՆ ՇԱԲԱԹՈՒ

Ցառաւանք է խորին՝ պատճեալ որ-
դե պատճեն է շատ-ուց պատճեն ուշաց շատ-
քին Մօք է-ը Սարգես:

Այն ինչ եկեալ հասեալ եր
Յիսուս ի լեառն Գողգոթայ, մեր-
կացին միւսանգամ ի նմանէ անա-
գորյն եւ գազանաբարսց գահիճք
զհանդերձս եւ ընկեցին գնա ի վե-
րոց խաչի: Յայնժամ տարածեալ
Յիսուսի զձեռու, մատուցանէր զան-
ձին իւրոց զմեծ պատարագ Հօրն
յաւիտենից վասն մարդկեզէն ազգի
փրկութեան: Եւ նոցա առեալ
վազվաղակիբեւեռս եւ մուրձն ծաւ-
կեցին զձեռու եւ զստո նորա ի միո-
ջէ կուսէ մինչեւ ի միւս կողմն:

Աւասիկ այսպիսի անագորունու-
թեամբ ի խաչափայախն բեւեռե-
ցին, եւ թողին զնա անդէն մեռա-
նել: — Ո՞ մարդիկ, ո՞ մարդիկ. զե-
արդ ժոյժ ունիցիք տեսանել կա-
խեալ զանարդանաց փայտէն զԱս-
տուած, որ առ սէր ձեր մեռանի:
Ո՞րպէս կարիցէք նշմարել զնա յայս
հանգամանս, եւ չսիրել զնա եւ
շարժել ի գութ:

Յիսուսի խաչի: — այս այն պատ-
կեր Է յորումբարձրեալ Տէրն աշ-
խարհի յայսմ յետին նուագի ե-
րեւէր ի վերայ երկրի: Այս իսկ
հանդէս է Աստուծոյ սիրոյն՝ զոր
ունի առ մեզ: — Երբեմն յորժամ
սուրբն Փրանկիսկոս Պաւղայեցի
զՅիսուս ի խաչին նկատեր մտօք,
ոյդպէս գոչել սկանէր. «Ո՞, սէր
է Աստուած. Ո՞, սէր է Աստուած.
Ո՞, սէր է Աստուած»: Եւ կարի յի-
րաւունս. զի՞ ո՞քի մարդկանէ բաւ-
ական իցէ յայտնել զիրոյն մեծու-
թիւն, կամ հասու լինել մորք
դժոյն՝ զոր եցոյց մեզ Տէր, յոր-


ժամը յանձն առ մեռանել եւ դնել
զանձն ի վերայ մեր ողորմիլի եւ
ապախտաւոր ստեղծուածոց իւրոց:

Զայս գիտել այս գիտէի, Յիշ-
սուս իմ, սակայն ապախտ գ.քո
սէրդ արարի եւ ի քոց չնորհացդ
հրաժարեցի: Բայց արիւն քո յայս
իմ է: Քան զամենայն չարիս՝ այն
մանաւանդ նեղէ եւ մօրմոքեցու-
ցանէ զսիրա իմ, սէր իմ Յիսուս,
զի ի քէն ի բաց զնացի: Արիւն
զ.քեզ յամենայն սրտէ իմմէ. կա-
պեա պնդեա զիս կապանօք սիրսյ,
զի բաց ի քէն մի այլ ինչ սիրեցից.
եւ այժմէն իսկ դաշինս կռեմ ընդ
քեզ, Յիսուս, զ.քեզ միայն սիրել:

Մատիր այսր, անձն իմ, խնարչ
եւ բեկեալ սրտիւ. եկ՝ եկ ի խաչ
այսր՝ զորմէ կախեալ կայ փրկիչ
քո մեռեալ: Փարեսջիր զսելզանով
եւ համբուրեա սիրով զսա, յարոյ
վերայ պատարագի Արարիչն քո եւ
առ սաստկութեան ցաւոցն սպասի:
Կուս զ.քեզ արեամբ սր ի նորա
սուրբ սակայն բիսէ, ի բաց ջնջեա

այնու զամենայն մեղս քո. եւ ի
նորա պատուական արենէն յուսու
հանաստութեամբ ընդունել զամե-
նայն՝ որում իմիք եւ կարօտանայ-
ցես:

Յիսուս՝ ցանկալի Փրկիչ իմ,
չկամիմ յայսմ հետէ իմ լինել,
այլ քո ամենեւին: Ասս համար-
ձակ, զոր ինչ միանգամ ինդրիցես
յինէն, քանզի կամիմ եւ պատ-
րաստ եմ աւնել զամենայն: Ի բա-
րերաբութենէ քումե ակն ունիմ
ամենայնի: — Մարիամ մայր իմ,
քոյսվ միջնորդութեամբ յուսում
ընդունել զամենայն պէտս իմ.
ամէն:



Աղջիւ հանդեց ներողւթեամբ 300
Սպառհաւ է պես իւ:

Յիսուս, Մարիամ եւ Յավէփ,
ձեզ նուիրեմ զսիրտ իմ, զհողի եւ
զիեանս իմ:

Յիսուս, Մարիամ եւ Յավէփ,
լերուք ինձ առնթեր եւ ձեռնառ
ի յետին ժամու մահուն իմոյ:

Յիսուս, Մարիամ եւ Յավէփ,
աւանդեցից զհողի իմ ընդ ձեզ ի
խաղաղութեան:

Ողջյն քեզ, Յավէփ, լի շնոր-
հօք, Տէր ընդ քեզ, օրհնեալ ես
դու ի մէջ արանց, օրհնեալ է ան-
արատ Հարսն քո Մարիամ, եւ
օրհնեալ է պտուղ որովայնի նորս
Յիսուս: Ա. Յավէփ, հայրագիր
Որդւյն Աստուծոյ, փեսայ Աս-
տուածամօր կուսի, բարեխօսեա
վասն մեր մեղաւորացս. այժմ եւ
ի ժամու մահուան մերոյ, ամի՞ն:

ՕՐԵՆՔ

ԱՐԿԱՆԵԼՈՅ ՍՊԱԾ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Առշու ՃԼԱ:

Կա. Քահանայք քո զգեցցին զար-
դարութիւն, եւ սուրբք քո ցնծալով
ցնծացեն:

Փի. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զա-
մնայն հեղութիւն նորա:

Որպէս երգուաւ Տեառն. եւ ուստու
եդ Աստուծոյ Յակովլայ:

Թէ ոչ մնից ի յարկս տան իմոյ.
Եթէ ելից յանկողինս մահճաց իմոյ:

Եթէ տաց քուն աչաց իմոյ, կամ
նինջ արտեսնաց իմոյ, կամ հանգիստ
իրանց իմոյ, մինչեւ գտից զտեղի
յարկի Տեառն Աստուծոյ Յակովլայ:

Ահա լւաք զնմանէ յԵփրաթայ. եւ
դապք զնա ի գաշտ մայրեաց:

Մացուք ի յարկս նորա, երկիր պադ-
ցուք ի տեղւո՞լ, ուր կայեալ են սոք
նորա:

Արի Տէր և հանգիստ քո, դու եւ
տապանակ կտակի սրբութեան քոյ:

Երթցունք քո զգեցցին զարդարու-
թիւն, եւ սուրբք քո ցնծալով ցըն-
ծացեն:

Վասն Դաւիթի սիրելոյ քո՝ մի
գարձուցաներ զերեսս յօնելոյ քու մի:

Երբուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ, եւ ոչ սանաց նմա, ի պաղպարզի քոյ նստուցից յախոռ քո։ Թէ պահեսցեն սրդիք քո զօրէնսիմ, եւ զիկայութիւնս, զըր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստոյին յաւիտեանս յաւիտենից յախոռ քո։

Հաճեցաւ Տէր ընդ Սիսկն, եւ ընտրեաց ընակել ի նմա, ասէ՝ այս է հանդիսան իմ, յաւիտեանս յաւիտենից ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա։

Զորա սորա օրհնելով օրհնեցից, եւ զադքասս սորա լցուցից հացիւ։

Երիցանց սորա զգեցուցից զգրկութիւն, եւ սուրբք սորա ցնծալով ցընծացեն։

Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի պատրաստ արարից զձբագ օծելոյ իմոյ։

Թշնամեայ նորա զգեցուցից զամօթ, պյլ ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր։ Այժմ եւ միշտ։

Ք. սրբաւ։

Եւ եւս խաղաղութեան գՏէր։ Խնդրեցուք հաւատուլ միարանութեամբ ի Տեսանէ, զի զողորմութեան զնորհս իւր արացէ ի վերայ մեր։ Տէրն ամենակալ կեցուսցէ եւ սղումացի։ ԺԲ. Տէր ողորմեա։

ԱՎԹ+։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, անձառելի խոնարհութեամբ ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շընեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին ՄԵԼքիսեդեկի, եւ զարդարեցեր զեկեղեցի քո սուրբք։ Տէր ամենակալ, որ պարգեւեցեր մեղ զնոյն զերկնային զհանդերձ զգենուլ։ Արժանի արա եւ զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակմ եւ մերձենամ ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոյ, որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, եւ զարդարեցայց յուսոյն քով։ Ընկեա յինէն զարիս իմ, եւ թօվէտիկեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձեալ յուսոյդ առ ի քին։ Ընորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց, ընդ այնուիկ որ անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առաջաստիդ ընդ իմաստուն կուսանս փառաւորել զեկեղ Քրիստոս, որ բարձեց զմելոս ամենեցուն, զի գու ես սրբութիւն անձանց մերոց։ Եւ քեզ բարերարիդ Աստուծոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՍՊԱՀԻ ԻԵ:

Աշ. Լուացայց սրբութեամբ զձեռս
իմ. եւ շուրջ եղէց զսեղանով քո Տէր:
Փէ. Դաս արա ինձ Տէր, զի ես յամ:
բժութեան իմում գնացի. ի Տէր յու-
սացայ, մի եղէց հիւանդ:

Փորձեա զիս Տէր, եւ քննեա զիս.
փորձեա զերիկամնս իմ եւ զսիրտ իմ:

Ողորմութիւն ք Տէր առաջի սաց
իմոց. եւ հաճայ եղէց ձշմարտութեան
քում:

Ոչ նստայց ես յաթռոս նանրաց. եւ
ընդ անօրէնս ես ոչ մոից:

Ասեցի ես զծ զովս չարաց. ընդ ամ-
բարիշն ես ոչ նստայց:

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ.
եւ շուրջ եղէց զսեղանով քո Տէր:

Լսել ինձ զնայն օր հնութեան քո, եւ
պատմել զամենայն սրբանչեխս քո:

Տէր սիրեցի զվայելչութիւն տան
քոյ. եւ զտեղի յարկի փառաց քոց:

Մի կորուսաներ ընդ ամբարիշոն
զանձն իմ. եւ մի ընդ արս արիւնահեղս
զիեանս իմ:

Որոց ձեռք յանօրէնութեան են, եւ
աջ նոցա լի է կաշառօք:

Ես յամբութեան իմում գնացի.
փրկեա զիս Տէր եւ ողորմեաց ինձ:

Ուն իմ կացցէ յուղղութիւն. յէ-
կեղեցիս մեծս օր հնուցից զքեղ:

Փառք Հօր! Այդմ եւ միշտ:

ՅԵՏ ՊԱՏԱՐԱԳԻ

ՍՊԱՀԻ ԼԳՎ:

Օր հնէցից զՏէր յամենայն ժամ,
յամենայն ժամ օր հնութիւն նորա ի
բերան իմ:

Ի Տէր պարձեսցի անձն իմ. լուիցեն
հեղք, եւ ուրախ եղիցին:

Մեծ արարէք զՏէր ինեւ, եւ բարձր
արացուք զանուն նորա ի մասին:

Խնդրեցի ի Տէտանէ, եւ լուաւ ինձ.
յամենայն նեղութենէ իմութ փրկեաց զիս:

Մատիք առ Տէր եւ առէք զոյս, եւ
երեսը ձեր մի ամաշեսցեն:

Այս աղքատ կարդաց առ Տէր, եւ
Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ
սոր փրկեաց զաս:

Բանակը հրեշտակաց Տէտան շուրջ
են զերկիւ զածովք իւրովք, եւ պահեն
զնոսսա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է
Տէր. երանեալ է այր՝ որ յուսայ ի նա:

Երկերութ փ Տէտանէ յամենայն սուրբք
նորա. զի ոչ է ինչ պակասութիւն
երկիւ զածաց նորա:

Մեծ ամենք աղքատացան եւ քաղ-
ցեան. բայց ոյք ինդրէն զՏէր, մի պակա-
սցի ի նոցանէ ամենայն բարութիւն:

Եկայք, որի եակ իմ եւ լուարուք
ինձ, եւ զերկիւ լ Տէտան ուսուցից ձեզ:

Ո՞վ է մարդ որ կամի զկեանս, եւ
սիրէ զաւուրս իւր ուեսանել ի բարու-
թեան։

Լուեցո զլեզու քո ի չարութենէ, եւ
շմ՛ռունք քո մի խօսեցին զնենգու-
թիւն։

Խստորեաց ի չարէ եւ արա զբարի.
խնդրեա զխաղաղութիւն եւ երթ զչեա
նորա։

Աչք Տեառն ի վերայ արդարոց, եւ
ականջք նորա ի վերայ ազօթից նոցա։
Երեսք Տեառն ի վերայ չարագոր-
ծաց. սաստակել յերկրէ զմիշատակու
նոցա։

Կարդացին արդարքն առ Տէր, եւ
Տէր լուաւ նոցա, յամենայն նեղու-
թենէ նոցա փրկեաց զնոսա։

Մէրձ է Տէր առ այնոսիկ որք մա-
շեալ են սրտիւք, եւ զիսոնարհս հո-
գուվ կեցուցանէ։

Բաղում նեղութիւնք են արդարոց.
յամենայնէ փրկէ զնոսա Տէր եւ պահէ
զամենայն սակերս նոցա. եւ մի ի նո-
ցանէ մի փշուցի։

Մահ մեղաւորին չար է. բայց ոյք
ատեն զարդարն զզչաւցին։

Փրկէ Տէր զանձինս ծառացից իւրոց.
մի զզչաւցին ամենեքեան ոյք յուսսա-
ցեալք են ի նա։

Ց Ո Ւ Ց Ա Կ

Աղօթք։

Կէ-րունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	5
Կէ-րունէ յէ-ր զպ-րուրունէ	15
Երեւ-լոբ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	28
Երեւ-լոբ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	39
Երեւ-լոբ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	52
Երեւ-լոբ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	60
Զրբ+լոբ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	72
Զրբ+լոբ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	82
Հինգլոբ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	97
Հինգլոբ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	107
Ո-բ-բ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	118
Ո-բ-բ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	126
Շ-բ-բ-ունէ յու-սլ + ան զպ-րուրունէ	137
Շ-բ-բ-ունէ յէ-ր զպ-րուրունէ	145

Մուածութիւնք։

Կէ-րունէ Ա. Մուած-ն-իւն-ն	159
Երեւ-լոբ-ունէ Բ. Մուած-ն-իւն-ն	163
Երեւ-լոբ-ունէ Գ. Մուած-ն-իւն-ն	166
Զրբ+լոբ-ունէ Գ. Մուած-ն-իւն-ն	169
Հինգլոբ-ունէ Հ. Մուած-ն-իւն-ն	172
Ո-բ-բ-ունէ Զ. Մուած-ն-իւն-ն	176
Շ-բ-բ-ունէ Հ. Մուած-ն-իւն-ն	180

4977

«Ազգային գրադարան



NL0029208

2013



